

ԷԶՄԻԱԾԻՆ



1968

ՌՆԺԷ
ԻՂ ՏԱՐԻ

Յոնիս

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱ-9751

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ձ

1968





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ուղւոյնի գիրը սուսին օրագրոս եկեղեցու պետ	էջ
Նորին Սրբօրայուն Տ. Տ. Ժուստինիան օրագրան պատրիարքի գանակաւորյան	
հետեւյալի տարիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Սաւանդին—Հաղպատ	4
ԿԱՐՈ ՂԱՅԱԴԱՐՑԱՆ—Սաւանդին և Հաղպատ վանքերը	8
ԱՍ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ—Սաւանդին և Հաղպատի մենաստանների մշակութային կյանքի	
պատմութիւնը	21
ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՅԱՆ—Սաւանդին և Հաղպատի գրչօրյան կենտրոնները	31
Ստեփաննոսի ճիշտամտութի ճիշտակին ճվիւթած գրասլոգի-հոշտանի րացումը	41
Ռուս պաշտօնով եկեղեցու պատրիարքական Արքի վերանաստեման ճիւնայակը	
և տանկտարայունները	44
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՄ	48
ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՅԱՆ—Մարգար քառայակն կատարելոյունը	51
ԳՐԻԴՈՐ ՀԱԿՈԹՅԱՆ—Ներսես Լամբրոնացին և իր ատենարանոյունը	54

Հանձնված է արտագրոյան 30/V 1968 թ.: Ստորագրված է տպագրոյան 5/VII 1968 թ.:
 Տպագրական 4 մամուլ, թուղթ 60x84¹/₂, պատկեր 339


ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՉՄԻԱԾԻՆ

«ԷՉՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱԹԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՅԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ
ԳԻՐԸ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱՎԱՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՈՂՋՈՒՅՆ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

Այս պահուս, երբ ուսմեն օրթոդոքս սուրբ եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը կտոնախմբեն Ձերդ Սրբության հովվապետության քսան տարիներու վառատակը, Մենք հրճվանքով կու գանք զՁեզ ողջունելու եղբայրական ջերմագին սիրով և խոր գնահատանքով դեպի Ձեր հոգևոր բարձր անձնավորությունը և դեպի Ձեր շինարար պատմական իրազործումները, որոնք կոչված են ոսկի տառերով արձանագրվելու և փոխանցվելու գալիք սերունդներուն:

Մեր օրերուն, շնորհիվ Ձերդ Սրբության իմաստուն դեկավարության, ուսմեն եկեղեցին հասած է բարձր հեղինակության մակարդակի մը մաս միջեկեղեցական հարսբերությանց մեջ, ճշմարիտ արտահայտիչը հանդիսանալով քրիստոնեական սիրտ և միության ոգիին ու ժողովուրդներու եղբայրության և աշխարհի խաղաղության երկնառաք պատվիրաններուն:

Այս երջանիկ պահուն Մենք չենք կրնար չհիշել մաս Ձեր լիառատ բարի զգացումները, որով տոգորված եք դեպի հայ եկեղեցին և հայ ժողովուրդը, որոնք ավելի քան կես հազարամյակի խաղաղ ու քաբօր կյանքի անցյալ մը ունենալով ուսմեն հյուրընկալ հողին վրայ, յաճես կմնան երախտապարտ ուսմեն ազնիվ և մարդասեր ազգին:

Արդ, Մեր սիրտը լեցուն լույս ուրախությամբ և եղբայրական անխառն սիրով դեպի Ձերդ Սրբությունը, կշնորհավորենք Ձեր գահակալության քսամյակը և հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո Ձեզի կենդանացնենք ու Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանը, աղոթելով, որ Ձերը Ձեզի շնորհե կենաց ևս բազում տարիներ Ձեր պատրիարքական Աթոռին վրա, ի փառս ուսմեն օրթոդոքս եկեղեցվո և ի մխիթարություն մեզ բոլորին:

«Այսօր է գոր արար Տէր, եկայք ցնծացուք եւ ուրախ եղիցուք ի սմիս»:
Իւսմեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տվալ կոնդակս ի 8-6 հունիսի
1888 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԺԷ,
ի մայրավանս սրբո Էջմիածնի
ՀՄՐ, 635



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՆԱՀԻՆ — ՀԱՂՊԱՏ

Հայաստան աշխարհը արդարև թանգարան է բաց երկնքի տակ: Ներկայումս Խորհրդային Հայաստանում հաշվվում են մի քանի հազար պատմական հուշարձաններ, որոնք լավագույնս վկայում են մեր ժողովրդի ստեղծագործ ու շինարար ոգու մասին: Կառույցներ՝ պատմական և արդիական ամենուրեք կան, սակայն հայ ճարտարապետական կոթողներում ներդրված է մեր ժողովրդի հանճարը՝ քարձրարվեստ երևակայությունը, մտքի թռիչքն ու բանաստեղծական ոգին: Ահա այս քոլորի գեղեցիկ ներդաշնակությունը համաշխարհային ճանաչում ու մասնագիտական քարձր գնահատական են բերել մեր պատմական կոթողներին, որոնք, Հայաստան աշխարհը զարդարելով հանդերձ, ընդօրինակվել են հեռու հեռուներում և նույնիսկ մեր թվականության երկրորդ հազարամյակի սկզբից ինչ-որ չափով հիմք են հանդիսացել միջնադարյան եվրոպական, մասնավորապես գոթական ճարտարապետության համար:

Հայ ճարտարապետության պատմական կոթողները մեր քարձրարվեստ ու քարձրանշանկ նախնիների տեսիլքի, երկնային ոգեկոչումների մարմնացումն են: Արդարև, Լուսավորչի տեսիլքն իր մարմնացումը գտավ առավմականության էջմիածնի Մայր տաճարով, հրեշտակները բազմեցին Ջվարթնոցի եյկնամերձ գմբեթներին... Սակայն մեր պատմական հուշարձանները անկյանք չեն հղել. նրանցում աներևակայելի ճգնությամբ

մագալաթին է հանձնվել հայ միտքը, պատմությունը, լեզուն, մանրանկարչությունը՝ գույների խեղճ շուրջապարով: Դարեր շարունակ խնկաբույր կամարների տակ աստվածահան լեզվով Տիրոջ պատարագ են մատուցել, քայք հոգացել են և ազգի, մառդկության մասին, նրանց որպես պատարագ խորախորհուրդ մատյաններ են մատուցել: Դարերի ընթացքում պարտադրյալ ճակատագրի մոլոր ճամփաներով մեր հոգու ու մտքի բեկորների նույնիսկ ոչ ամբողջը հավաքվել է, ընկերացել, հգորացել ու կազմել հայ մատենագրություն, Մաշտոցյան Մատենադարան...

Օ՛հ խնկաբույր այս մատյանները, որոնք կհերիքեն շատ ժողովուրդների, հազարամյակների... Մեկուկես հազարամյակ չրված, մեկուկես հազարամյակ պահված, նոր հազարամյակներ սնող մայր արմատ...

Մրցություն եղել է հնում. նոր կառուցվող ամեն կոթողում հայ ճարտարապետն ու քարգործ վարպետներն աշխատել են նոր իմաստավորում, նոր բանաստեղծություն ու նոր հույզ դնել,— ահա ինչու Յինարար Բագրատունիները Հայաստանի հյուսիսում, Գուգարաց աշխարհում եյկրորդել են հազարազանգ Անին, կառուցել Սանահինն ու նրա քույր վանքը՝ Հաղպատը: Իրար այսքան մոտիկ և իրարից այսքան տարբեր, մեկը սյուսից գեղեցիկ կառույցներ. ինչ շտայություն: Եվ իրոք իրենց հազարամյա գոյության ընթացքում այդ երկու քարն Բդեշխները հսկե-

ցին մեր Աշխարհը, արգասավորեցին հայ դպրությունը, շուրջին հայտնիների ազգային արժանատվությունը և վստակորեցին հայ հանձնարը:

Ո՛վ արարած, հայ ուխտավոր, երկուշաբթությամբ մտիր այդ վանքերից ներս, ուշադիր նայիր խաչվող կաթարներին, որոնք քեզ հայկյան աղեղ կվիշեցնեն, շուրջով անցիր բարձրադիր քարե նստարանների մոտով, որտեղ քո մատենագիրները, գրիչներն ու ծաղկողներն են ծալապատիկ նստել ու ունկընդդել հայ դպրության ուսուցչապետին՝ Գրիգոր Մագիստրոսին: Այո՛, երկրորդված է Անին այստեղ, Տրդատ անարարապետն իր մկրտությունը այստեղ, Հաղպատում է սուսել, այստեղ է նա երկնել, փորձով իմաստնացած, հավերժացրել հագրատունաց փառքը, կառուցել Անին, որ խոհուսացած, մայրացած Գուգարքի նույն երկու հավերժահարսն է: Խուզարկու հայացքով նայի՛ր պատերին, քարերին. քո նախնիք դասնց մեջ, գաղտնարաններում հանախ են պանել իրենց միտքը, արվեստը. անողորմ է եղել թշնամին, նա այրել է քո մատյանները՝ «իտենալով, անշուշտ, որ Եդիշեն քեզ սխալ գամել է. «Լավ է կոյր Կաթ, քան կոյր մտօք», քանի որ այրն այն Մաշտոց Կնուն լույսով, քանակաճությունը, մատյանով, Այբ, Բեն, Գիմով քեզ ավանդեց հավերժությանը....

Այստեղ, Հաղպատում է ծաղկել Մարգարե մանրանկարիչը քո հոգու մատյանը, ուրով այսօր և միշտ պիտի հիանան քաղաքակիրթ մարդիկ, ժողովուրդներ: Սանահին քարձույնից անթարթ հայացքով ուղիղ նայի՛ր, «յուս սիրատուն քույրը՝ Հաղպատն է անտառով շղարշված, երկրից բարձրացած փռու՛մ իր

հմայքը, առավել ուշադիր նայի՛ր Զանգակուտանը, այո՛, հատուկ է դա, առանձնահատուկ նույնիսկ հայ անարարապետության մեջ՝ ականջ դի՛ր, հոգուդ մեջ կողոպտեցնեն անրևելի զանգակները՝ կանչելով դեպի լույս, դեպի կյանք: Այդ զանգերի դողանքների քաղցրալուր մեղեդու ներքո ստեղծվեց քո մատենագրությունը, ծաղկվեցին քո մատյանները, որոնք այս լուսավոր դարում իսկ հիացրին աշխարհին: Բարապետները լայնորեն քացեցին քո ժողովրդի առաջ համայն ազգերի մշակույթի թանգարանի դռները, որպեսզի որպես արժանի հյուր, առաջիկաներից առաջիկաների մեջ դու քազմես պատվո գահին, քանզի խավար դարերում, հանախ նույնիսկ մեմակ՝ դու, որպես հավերժական քույր, վառ պահեցիր հեթանոսական օջախը, խնկարույր քուրվառդ....

Ասում են՝ գեղեցկին չեն սպանում. սակայն օտար ասպատակողներ դարեր շարունակ սպանեցին մեր ժողովրդի՝ գեղեցիկն ստեղծելու առաքելությամբ օժտված, գեղեցկություն ստեղծող որդիներին, սակայն նա կառուցեց, կառուցեց. Արարատյան դաշտավայրում՝ Էջմիածին, Զվարթնոց, Հոփուսիմե, Գոյանե, Սյունյաց աշխարհում՝ Տաթև, Ծիրակում՝ Անի.... իսկ Գուգարաց աշխարհում՝ Սանահին ու Հաղպատ: Մայր Բնությունն ու հայրենի հողը ավելի խղճմիտ գտնվեցին մեր հանդեպ՝ զո՛ւյս քույրեր, երկիրը զսպեց իր ներքին գործությունները, որպեսզի դուք մնաք միշտ գեղեցիկ: Հասել եք մինչ այսօր. էլ ի՞նչ. նոր հոգասարությամբ, հայրենի պետական հոգասարությամբ կրմնաք որպես գեղեցիկ վկաներ դարերից՝ դարերին, հավիտենության...





ԿԱՐՈ ՂԱՖԱՂԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր)

ՍԱՆԱՀԻՆ ԵՎ ՀԱՂՊԱՏ ՎԱՆՔԵՐԸ

(Հիմնադրման 1000-ամյակի առթիվ)

Հայաստանի հյուսիսում, Գուգարաց լեռների անտառապատ լանջերին բազմած Սանահին և Հաղբատ վանքերը երկվորյակներ են, որոնք իրենց հազարամյա գոյության ընթացքում միմյանց հետ կապված են եղել ոչ միայն մոտիկ գտնվելու հանգամանքով, այլև սերտ համագործակցությամբ:

Երկուսը միասին բացառիկ դեր են խաղացել միջնադարյան Հայաստանի կրոնական-մշակութային և անգամ քաղաքական կյանքում:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ քաղվածքով անգամ հիշատակվել են Սանահինի և Հաղբատի վանքերը՝ հայ ժողովրդի կյանքում խաղացած կարևոր դերի շնորհիվ, նշվել է նրանց դերը Լոռի-Տաշիրքի կյուրիկյան թագավորության, Զաքարյան տոհմի, ինչպես նաև հետագայի պատմության մեջ:

Իրենց հույակապ ճարտարապետությամբ, պատերին գրված բազմաթիվ արձանագրություններով վաղուց ի վեր գրավել են հայ և օտար գիտնականների ուշադրությունը, որոնք ստվարածավալ ուսումնասիրություններ են նվիրել նրանց:

Սանահինի և Հաղբատի գիտական ուսումնասիրության հիմքը դրվել է 19-րդ դարի 20-ական թվականներին, երբ իր ժամանակի լուսամիտ վանականներից մեկը՝ Հովհաննես Ղրիմեցի, երկու առանձին աշխատություն գրեց այդ երկու վանքերի մասին, մեկը՝ Սանահինի, և մյուսը՝ Հաղբատին նվիրված:

Միշտ է, նրանից էլ առաջ փորձել են գրել այդ հոգևոր կենտրոնների պատմությունը,

ինչպես օրինակ՝ Հովհան Ոսկերչյանը 1804 թվականին, որից և քաղել է իր տեղեկությունները Մինաս վ. Բժշկյանցը և հրատարակել իր «Եանապարհորդություն ի Լեհաստան» աշխատության մեջ, բայց նրա գործն իր մտրացած տեղեկություններով շատ հեռու է գիտական համարվելուց:

Հաղբատի մասին Ղրիմեցու աշխատությունը արդյունք է հեղինակի բազմամյա քրտնաջան պրպտումների և ավելի բարձր արժանիքներ ունի, քան թե Սանահինի մասին գրածը, որի մեջ բերված սխալաշատ արձանագրությունները նա ընդօրինակել է ուրիշներից:

Հաղբատի մասին Ղրիմեցու աշխատությունը երկար ժամանակ անտիպ էր: Միայն մի համառոտ շարադրանք հուներեն թարգմանությամբ լույս էր տեսել 1863 թվականին: Հրատարակիչները նրան միացրել էին նաև Սանահինի վերաբերյալ գրքի համառոտությունը: Այդ երկուսն էլ այն աստիճան աղճատված ու համառոտ են, որ բոլորովին պատկերացում չեն տալիս ընդգրկ մասին¹:

¹ Описание монастырей Ахпатского и Сангинского архимандрита Иоганна Крымского. СПб. 1863.

Եւսէք Քրիմեցիի է Քաղբատնի և իրաւարակէ Բրտնի. Description des Monastères Arméniens d'Haghbat et de Sapahin. Par l'archimandrite Jean de Crimée. Avec notes et appendice par M. Brossel. St.-Petersbourg, 1863. 94 p. Հրատարակողը հայերական Աղագեմիայի (VII Série, t. VI, № 8).

‘Լրիմեցու’ Հաղպատի վերաբերյալ գիրքը երկար տարիներ անտիպ մնալուց հետո, 1965 թվականին Վիեննայի Մխիթարյանները հրատարակեցին հանգուցյալ Համազասպ Ոսկյանի աշխատասիրությամբ⁷:

Սանահինի և Հաղպատի վանքերի պատմական անցյալը շոշափել և վիժական արձանագրությունների մի մասը վերծանել է ուսն Սարգիս վ. Ջալալյանը⁸: Սանահինի վանքի միաբան եղած ժամանակ⁹: Թեև նրա կատարած ուսումնասիրությունները փայլուն չեն և անգամ հետ են մնում ‘Լրիմեցու’ գործից, բայց և այնպես որոշ հետաքրքրական տեղեկություններ են պարունակում իրենց մեջ և ունեն մինչ այդ չուսումնասիրված արձանագրություններ: Սանահինի մասին գրել են նաև Ալեքսանդր Երիցյանը¹⁰, Իսահակ Հարությունյանը¹¹, Երվանդ Լալայանը¹², Նիկողայոս Մառը¹³, Հովսեփ Օրբելին¹⁴, Թորոս Դուրամանյանը¹⁵, Կարեգին կաթողիկոս Հովսեփյանը¹⁶, Մարի Բրոսսեն¹⁷ և շատ ուրիշներ:

Սանահինի և Հաղպատի ուսումնասիրության համար քացառիկ նշանակություն ունի, այսպես կոչված, Սանահինի քոթուկը ժողովածուն, որն իր մեջ պարունակում է քազմաթիվ պատմական տեղեկություններ,

փաստաթղթեր և վիժական արձանագրություններից քաղված վկայություններ՝ վանքի պատմության, շինարարության, տնտեսության և հոգևոր ու մշակութային կյանքի վերաբերյալ:

Այս երկու նշանավոր վանքերի պատմական դերն ու անցյալը լայնորեն յուրաքանչեք են ակադ. Հակոբ Մանանդյանի, պրոֆ. Լեոյի, պրոֆ. Մելիքսեթ-Բեկի, Մաղաքիս արքեպ. Օրմանյանի և շատ ուրիշների աշխատությունների մեջ: Նրանց անցյալին են նվիրված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից նրատարակվող «Հայաստանի պատմական հուշարձանները» մատենաշարի 2-րդ և 3-րդ հատորները¹²:

Սանահինն ու Հաղպատը թեև կառուցված են անուշտների մեջ, Հայաստանի մայրաքաղաք Անիից հեռու, բայց իրենց ճարտարապետությամբ ոչ թե զավառական քնույթի երկրորդական հուշարձաններ են, որտեղ կյանքից հեռացած ճգնավորներ են ապրել, այլ հագրատունյաց Հայաստանի հոգևոր մշակույթի գլխավոր կենտրոններ են եղել և իրենց բարձրագույն պարոնցներով, շիտմական միաբաններով, հարուստ մատենադարանով, չգերազանցված ճարտարապետական հուշարձաններով, գրչության ուրույն դպրոցով, մանրանկարչության արվեստով, քանդակագործությամբ և արվեստի ու գիտության բազմաթիվ ճյուղերով մեծ չափով նպաստել են հայ մշակույթի զարգացմանը և ազդել իրենց շրջապատի և հետագա ժամանակների վրա: Նրանք մշտապես վայելել են հագրատունյաց թագավորների և հետագայում էլ Զաքարյան իշխանների հովանավորությունը:

Ուստի քոլորովին զարմանալի չէ, որ ինչպես Հաղպատում, այնպես էլ Սանահինում գլխավոր եկեղեցիների ճակատներին քանդակված են թագավոր եղբայրների՝ Սմբատ Տիեզերականի և նրա եղբայր Կյուրիկյան թագավորության հիմնադիր Գուրգենի ամբողջական արձանները՝ իրենց ձեռներին բռնած ունենալով նույն եկեղեցիների փոքր օրինակները:

Այդ նշանակում է, որ միջնադարյան հայ ճարտարապետության թագը հանդիսացող Անի քաղաքի կողքին հագրատունիներն ունեին նաև հոգևոր մշակույթի կենտրոններ, որոնց նրանք քիչ կարևորություն չէին տալիս և իրենց անվան հետ էին կապում Սա-

⁷ Հովհաննու Լրիմեցու Պատմություն հռչակապետ վանքի Հաղպատայ ա. սշանին: Վիեննա, 1885:

⁸ Ժամապարհորդություն ի Մեծն Հայաստան, աշխատութեամբ Սարգիս վրդ. Ջալալյանց, մասն Ա, 1842, ի Տիֆլիս:

⁹ 4. А. Ерицов, Ахпатский Монастырь «Кавказская Старина», ежемесячный журнал, Тифлис, 1872, стр. 49—52, 83—88.

¹⁰ Հարությունյան Իսահակ, Սանահին: «Ազգագրական հանդես», Գ տարի, 1888, № 1, Թիֆլիս, էջ 279—315:

¹¹ Լալայան Երվանդ, Բորչալուի գավառ: «Արարական հանդես», Գիրք 7—8, Թիֆլիս, 1901:

¹² Н. Марр, К Армянскому надписи Санагинского моста. «Христианский Восток», т. 4, вып. II, стр. 191—195.

¹³ Н. Орбели, Надпись Санагинского моста. «Христианский Восток», вып. IV, 1915 г.

¹⁴ Թորամանյան Թորոս, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության: Կազմեց Կ. Ղաֆադարյան, Մոս. Ա., 1842, հտ. Բ, 1948:

¹⁵ Հովսեփյան Գարեգին արքեպիսկոպոս (կաթողիկոս Լեծի Տանն Կիլիկիո), Խաղրակյանք կա. 1 Պոռչյանց հայոց պատմության մեջ: Մասն Ա, վարչապատ, 1928 թ., մասն Բ, Երուսաղեմ, 1942 թ., մասն Գ, Նյու-Յորք, 1942/8:

¹⁷ M. Brosset, Notice historique sur les couvents arméniens de Haghabat et de Sanahin. St.—Petersbourg. 1862:

¹² Ղաֆադարյան Կարո, Սանահին վանքը և նրա արձանագրությունները: Երևան, 1967 թ.: Նույնի՝ Հաղպատ, ճարտարապետական կառուցվածքները և վիժական արձանագրությունները, Երևան, 1949 թ.:

ուսման և Հաղպատի մարտարապետական հուշարձանները և այդ վայրերում էլ դնում իրենց արձանները:

Այս խոսքերով բնավ չենք ուզում նսեմացնել Անիի մարտարապետական հուշարձանների, մամալանդ Կաթողիկե եկեղեցու նշանակությունը գիտության և արվեստի համար: Անի և Կամա միջնադարյան հայ մարտարապետության թագը իր բազմաթիվ կառուցվածքներով: Բայց պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Բագրատունիք զարդարեցին գեղեցիկ կոթողներով ոչ միայն այդ քաղաքը, այլև նրանից հեռու և մոտիկ վայրերում էլ ստեղծեցին գլուխ-գործոցներ, որոնց մեջ առաջինը պետք է համարենք այս տարի իրենց գոյության 1000-ամյակը բոլորող Սանահին և Հաղպատի հուշակավոր վանքերը:

Հետաքրքիր է իմանալ, թե ինչու Հաղպատում ու Սանահինի և առաջինը են երկրի հյուսիսային սահմանամերձ վայրերում և ոչ թե կենտրոնում:

Այդ հարցին կարելի է ճիշտ պատասխան տալ միայն այն դեպքում, երբ պարզած կլինենք Հայաստանի հյուսիսային սահմանների պահպանության կարևորությունը:

Բագրատունյաց թագավորության ժամանակ, 10—11-րդ դարերում, բացառիկ կարեւորություն էր ստացել Հայաստանի հյուսիսային սահմանների պահպանությունը, որտեղից հաճախ ներս էին խուժում հյուսիսային լեռնաբնակ ցեղեր և ավերում երկիրը: Հարավից ձգվում էր Կասպից ծովի արևմուտքյան ավերավ գետի էին հյուսիս և այնտեղից մտնում Հայաստան: Այդ պատճառով Բագրատունիք մեծ կարևորություն էին տալիս Հայաստանի հյուսաստային մասնույցների պաշտպանությանը, և թագավորից հետո երկրորդ անգամ արքայազնը կամ արքայազնը, նշանակված էր լինում հյուսիսային սահմանապահ զորքերի պետ:

Աշոտ Ա-ն զանի վրա հաստատվելուց և երկրի ներքին գործերը քիչ թե շատ կարգի բերելուց հետո, առաջին հերթին, մի արշավանք կազմակերպեց դեպի հյուսիսային սահմանները՝ վերջ դնելու համար լեռնաբնակ ցեղերի հաճախակի հարձակումներին: Նա այնտեղ հնազանդեցրեց «Մեծի լեռինն Կողկասու» բնակիչներին, ինչպես նաև «զաղխատրուց բնակիչսն Գուգարաց եւ զելուգակուտ մարդիկ Ուտի գաւառի» և նրանց վրա առաջնորդներ և իշխաններ նշանակեց¹³:

¹³ Յովնանու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912 (Ղուկասյան հրատ.), էջ 140:

Այստեղ ուշադրության արժանի են զաղխատրուց բնակիչսն Գուգարաց և զելուգակուտ մարդիկ Ուտի գաւառի դարձվածքները, որոնցից երևում է, որ Գուգարքում ապրող ցեղերը խոտվարար և ապստամբ են նկատվել, իսկ ուտիացիների մեջ շատ են եղել ավազակաբարո մարդիկ:

Հասկանալի է, որ Բագրատունյաց պետությունն իր առաջին գործը պետք է համարեր երկրի ծայրամասերը ապահովել ներքին և արտաքին թշնամիներից:

Ինչպես պարզվում է Դրասխանակերտեցու տված տեղեկություններից, զուգարացիք Աշոտ Ողորմածի թագավորության ժամանակ ևս ապստամբվել են, որոնց ճնշելու նպատակով թագավորն այնտեղ է ուղարկել իր որդուն՝ Սմբատին, հայ և վրաց զորքով, որն այդ խոտվությունը վերացնելուց հետո նստեց Ծամշուղի քերդում՝ իր վրա վերցնելով Գուգարքի իշխանությունը¹⁴:

Սմբատը Գուգարքում մնաց մինչև հոր մահը, որից հետո վերադարձավ Շիրակ՝ հոր զանդ ժառանգելու համար: Նա Գուգարքում այնքան էր զբաղված, որ նույնիսկ հոր թաղմանը չհասավ:


Սմբատի թագավորության օրով (977—989) Գուգարքի դռնով թշնամիները մի քանի անգամ Հայաստան մտան:

Ատրպատականի ոստիկան Ակիշունը, Նախիջևանի և Ատրպատականի կողմից Հայաստան մտնելու մի քանի անհաջող փորձերից հետո, անցավ Գուգարք և այնտեղից մտավ Հայաստան: Դրասխանակերտցին պատմում է, որ Միջագետքի Ահմատ ոստիկանը ապստամբվելով ամիրասպետի դեմ, ուզեց մի առանձին թագավորություն հիմնել խալիֆայության հյուսիսային մասերում: Նա հարձակվեց Հայաստանի վրա, սակայն հաջողություն չունեցավ, իսկ երբ լսեց Գագիկ Արծրունու՝ Բագրատունյաց դեմ ապստամբության և հայ մախարարների անմիաբանության մասին, «չուեալ ընդ Ուտի գաւառ գալ ի կողմանս Գուգարաց և Վրաց» և այնտեղից մտավ Վանանդ, գրավեց Կարս քաղաքը, հափշտակեց պետական գանձերը և գերի տարավ թագուհուն¹⁵:

Ատրպատականի Յուսուփ ոստիկանը ևս

¹⁴ Պատմութիւն հայոց ի սկզբանէ մինչեւ ցած տեսնոմ 1784, ի Բ. Միքայել վ. Չափեանց: Հտ. Բ, ի վեցերորդ, 1785 թ., էջ 208—207:

¹⁵ Դրասխանակերտեցույ Պատմութիւն հայոց, էջ 185—186: Նույնը ունի նաև «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան» Պատմութիւն տիեզերական. Բ տպ., ՍՊԲ, 1885, էջ 161: Նույնն ունի նաև Սանահինի քաղաքը, էջ 21—28:



ՄԱՆԱՆԻ ԱՄԵՆԱԺԱՅԻՆ ԷԿԵԿԵՍԵՆ (Մ Պ.)
(Նվարիչ, Գր. Ավագյան)

Ուտիքի վիսյով եկավ Հայաստան: Այդ ժամանակ հյուսիսային Հայաստանի մի բանի իշխանների թվում Բագրատունյաց դեմ ապրատարվեցին նաև Գուգարքի Վառակ և Աշոտ իշխանները, ինչպես նաև Ուտիքի Յիկ Ամրամը:

Հայտնի է, որ Աբասի օրով էլ (928—953) Հայաստանի հյուսիսային մատույցները խաղաղ չմնացին: Աբխազների Բեր թագավորը մեծ զորքով արշավեց Հայաստան, բայց պարտություն կրեց, գերի ընկավ և կտրացվեց Կարս քաղաքում:

Սակայն Բագրատունիք մինչև Ամրատ Երկրորդի զանազան քաղաքային չկարողացան ապահովել Հայաստանի հյուսիսային սահմանները Ռաճախակի հարձակումներից և այդ պատճառով Ամրատ Տիեզերակալի օրով Գուգարքում նրանք հիմնեցին իրենց ենթակա Կյուրիկյան թագավորությունը, որի առաջին զահակալը Ռաճախացավ Ամրատ Տիեզերակալի եղբայր Գուրգենը, որին Գուգարքի բնակիչները տեղական բարբառով Կյուրիկե (Կորիկե) անունը տվին և թագավորությունն էլ նրա անունով կոչեցին:

Նշանակում է, Լոռի-Տաշիրի Կյուրիկյան թագավորությունը ոչ թե հատվածական պետություն էր, որ Վասպուրականի Արծրունյաց կամ Սյունիքի թագավորությունների նման առաջ եկավ հայոց միասնական պետության հիմքերը քանդելու, այլ Գուգարաց հին բղջիկության նման մի բան էր, որ Բագրատունիք իրենք հիմնեցին՝ Հայաստանի սահմանից վտանգավոր հյուսիսային սահմանները պահպանելու համար, և այդ թագավորությունը, մանավանդ սկզբում, սերտ համագործակցության մեջ էր կենտրոնի հետ:

Այդ համագործակցության երկու վառ փաստեր ունենք. մեկն այն է, որ ինչպես Հաղպատի, այնպես էլ Սանահինի գլխավոր եկեղեցիների ճակատներին տեղադրված են հայոց Ամրատ Տիեզերակալ թագավորի և Գուգարքի թագավորության առաջին զահակալ Գուրգենի (Կյուրիկեի) արձաններն իբրև խորհրդանիշ նրանց միասնության և համերաշխության: Երկրորդ փաստն այն է, որ հայոց 428 թվականին (+551=979) Ամրատ Տիեզերակալ թագավորը այցելության է գնացել Սանահին «ի տեսության եղբարս իրոմ հարազատին Գուրգենայ» և այնտեղ եղած ժամանակ արքայական հատուկ հրովարտակով Սանահինի վանքը դարձրել է Լոռի-Տաշիրի հոգևոր կենտրոն և այնտեղ հաստատել է եպիսկոպոսական Աթոռ՝ հուկացնելով նրան ընդարձակ վիճակ՝ Վրաստանի սահմաններից սկսած մինչև Նիզ և Ծիրակ գավառները:

Այդ հրովարտակից իմանում ենք, որ Ամրատ Տիեզերակալի հայրը և մայրը՝ Աշոտ Ողորմածն ու նրա կին Խոսրովանուշ թագուհին, Սանահինի վանքին են նվիրել թագավորի գյուղեր ու կալվածքներ՝ վանքի միաբանության գոյության համար տնտեսական հիմք ստեղծելու նպատակով:

Պետք է ենթադրել, որ այդ ժամանակ Լոռիի թագավորությունն արդեն հիմնադրված էր, որովհետև եպիսկոպոսական Աթոռ ստեղծվում էր առանձին իշխանություններից: Շատերն այս հրովարտակը համարում են նաև Լոռիի առանձին թագավորության հիմնադրման նշան: Այնուհանդերձ այս հրովարտակը ևս վկայում է այն մասին, որ Կյուրիկյան թագավորությունը հիմնադրվել է կենտրոնական պետության հաճությամբ:

Լոռիի Կյուրիկյան թագավորությունն ունեցել է իր պատմագիրը՝ Վանական վարդապետը, ժամանակի մեծ ուսուցիչն ու գիտնականը, բայց նրա պատմությունը կորել է և մեզ չի հասել, իսկ Վանականի սիրելի աշակերտ Կիրակոս Գանձակեցին չուզեցավ կրկնել իր ուսուցչին, քիչ բան է գրել Սանահինի, Հաղպատի վանքերի, մանավանդ Կյուրիկյան թագավորության մասին: Այդ պատճառով այդ վանքերի պատմության, ինչպես նաև Կյուրիկյան թագավորության համար բացառիկ կարևորություն ունեն միմյանց արձանագրությունները, հիշատակարաններն ու ճարտարապետական բազմաթիվ կոթողներ:

Սանահինի և Հաղպատի վանքերի հիմնադրման տարեթվերի մասին հին մատենագիրները հակասական տեղեկություններ են տալիս, բայց Սանահինի քրթոնի մեջ կա ժամանակակից կարևոր վկայություն Սանահինի վանքի հիմնադրման մասին:

Այնտեղ արտագրված է 972 թվականի այժմ անհայտ ձեռագրի մի հիշատակարան, որ մեծ կարևորություն ունի վանքի հիմնադրության ճիշտ թվականը որոշելու համար:

Այդ հիշատակարանը պատկանում է նշանավոր հույն գիտնական Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնափորաց» աշխատության հայերեն թարգմանության արտագրությանը, որի մեջ գրիչը խնդրել է հիշել նաև Սանահինի վանքի հիմնադիր և առաջին վանահայր Պոլիկարպոսին, որ երկու տարի առաջ մեռած է եղել: Այդ հիշատակարանում գրիչը հայտնում է, որ 972 թվիվ Սանահինի վանքի հիմնադրման վեցերորդ տարին է եղել:

Նշանակում է Սանահինի վանքը հիմնա-

ղըրվել է 966 թվականին, հավանաբար 967 թվականին, որովհետև հայոց ՆԺԾ (415) թվականը մի մասով համապատասխանում է մեր 966 թվականին, իսկ մի մասով էլ՝ 967-ին:

Այդ հիշատակարանում կա նաև մի այլ կովան՝ վանքի հիմնադրման թվականն ավելի ճշտելու համար: Այնտեղ ասված է, որ հիշյալ ձեռագիրն ընդօրինակել են Խաչիկ (Արղարունի) կաթողիկոսի գահակալության առաջին տարում, իսկ Խաչիկի գահակալությունը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 978 թվականին: Հետևապես, Սաճառնի վանքի հիմնադրումը լինելու է 967 (978—8) թվականին: Մեզանից ուղիղ 1000 տարի առաջ:

Ժամանակագիր Սամուել Աճեցի (12-րդ դար) ևս Սաճառնի վանքի հիմնադրումը նշանակել է 967 թվականին¹⁶:

Եթե, նկատի առնելով միջնադարյան շինարարության պայմանները, գլխավոր եկեղեցու շինարարության տևողությունը հաշվելու լինենք 10 տարի, նշանակում է՝ Կաթողիկոս եկեղեցու կառուցման ավարտը դնելու ենք մոտավորապես 977 թվականին՝ Սմբատի թագավորության առաջին տարին:

Այս թվականը մեզ հետաքրքրում է նաև այն պատճառով, որ Սաճառնի գլխավոր եկեղեցու ճակատին քանդակված են Սմբատ Տիեզերակալի և Գուրգենի պրծանքները. երկուսի գլխին փորագրված մակագրության մեջ նրանք երկուսն էլ ունեն թագաւոր տիտղոսը (Սմբատ թագաւոր, Գուրգեն թագաւոր), նշանակում է՝ եկեղեցին կառուցվել վերջացել է 977 թվականին կամ մի քիչ ուշ, և այդ միջոցին Գուրգենը Լոռիում արդեն թագավոր էր, այլապես նա թագավոր տիտղոս չէր ունենա: Լոռիի թագավորության հիմնադրումը 977 թվականից առաջ չի կարող լինել, որովհետև Սմբատ Տիեզերակալից առաջ Աշոտ Ողորմածի օրով այդ թագավորությունը չէր կարող հիմնված լինել, քանի որ այն ժամանակ Լոռիում էր ոչ թե Գուրգենը, այլ՝ Սմբատը:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ Աշոտ Ողորմածի մահվանից հետո նրա որդիներից ավագը ժառանգեց Անիի կենտրոնական թագավորությունը և իր եղբորը՝ Գուրգենին,

քածին հանեց Գուգարքի ենթակա թագավորությունը:

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը ևս նույն եզրակացությանն է հանգել: Նա գրում է. «Սմբատ Բ-ի կրտսեր եղբայրը՝ Գուրգենը, հավատարիմ լինելով նրան՝ ժառանգում է նրա հրամանով 982 թվին Տաշիրը, Տալիուշը, Կայանը և մերձակա շրջանները, ու հիմք է դնում Կորիկյան թագավորությանն»¹⁷:

Այստեղ վիճելի է 982 թվականը: Ավելի հավանական է, որ թագավորությունն ավելի առաջ հիմնադրված լինի, քայք ոչ ուշ առաջնորդական Աթոռից (979 թվ.):

Կյուրիկյան թագավորների և ընդհանրապես Բագրատունյաց առանձին ուշադրության և հովանավորության շնորհիվ Սաճառնի միաբանությունն արագ թափով բազմացավ այն աստիճանի, որ այլևս հնարավոր չէր թլոյրի մի վանքում մնալը, ուստի միաբանության մի մասը տեղափոխվեց դարձյալ Խոսրովանուշ թագուհու հրճանքներ և Հաղպատ վանքը, որ Սաճառնից հեռու էր ընդամենը 6 կիլոմետրով: Տեղափոխվողներն այնտեղ կազմեցին առանձին միաբանություն, որի առաջին վանահայր նշանակվեց 972 թվականի հիշատակարանի հեղինակ, Սաճառնի վանքի միաբան Սիմեոն վանականը, որի անունը պահպանվել է Հաղպատի 981-ից սկսած մինչև 1005 թվականներին պատկանող վիժական արձանագրությունների մեջ, ինչպես նաև Ասողիկի Պատմության էջերում:

Սաճառնի վանքին այդքան մոտիկ Հաղպատ վանքի գոյությունը, հետևապես, արդյունք է ոչ թե միմյանց նկատմամբ ունեցած հակառակության կամ գաղափարական հոդի վրա առաջ եկած տարաձայնությունների, ինչպես սովորաբար լինում է, այլ, ինչպես հաղորդում են հաղբյուրները, այդ բաժանումը առաջ է եկել բացմանդամության հետևանքով:

Ասողիկի վկայությամբ Սաճառնի և Հաղպատի միաբանության ընդհանուր թիվը հասել էր 500-ի: Նա գրում է.

«Ձաւորս սորա (Աշոտոյ որդոյ Աբասայ) շինեցան կրօնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Սեւորդեաց աշխարհին, հաւաւարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սըրքոյն Բարտի, որոց երկոցունց տեղեացն աւուանք Հաղպատ և Սաճառնի հանդէպ միմ-

¹⁶ Նա գրում է՝ «Ե ՆԺԶ (418+551=967) թվին շինեցաւ Հաղպատ և Սաճառնի» Ժ ամաւ առաջ քան Վաղպատ շինեցաւ ի Խոսրովանուշ թագուհուց ի կնոջէ Աշոտոյ Շահնշահին: «Հաւատմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1888, էջ 100:

¹⁷ Մանանդյան Հակոբ, ՀՅԳԿԿԿ տեսություն հայ ժողովրդի պատմության: Հտ. Բ, Բ մասի Գլուխը: Երևան, 1960, էջ 47:

եանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց Ե-ոց (500)»¹⁸:

Այդ երկու վանքերը կառուցող Խոսրովանուշ թագուհին և Աշոտ Ողորմածը երկու վայրում էլ գլխավոր եկեղեցիները նվիրել են իրենց երկու որդիներին՝ Սմբատի և Գուրգենի արևշատության կամ, ինչպես վկայում է Հաղպատի ս. Նշան եկեղեցու կառուցման արձանագրությունը, «փրկութեան Սիբատուս և Գուրգենա»:

Ուստի զարմանալի չէ, որ Հաղպատավանքի առաջին վանահայրը Սանահնի միաբան Սիմեոն կրոնավորն էր:

Հաղպատի վանքը, ինչպես այդ հնարավոր եղավ պարզել մատենագրական բազմաթիվ և հաճախ միմյանց հակասող տեղեկությունների վերլուծումից և քննությունից, հիմնադրվել է Սանահնի հիմնադրումից 10 տարի հետո, մեր թվականության 976/977 թվերին¹⁹:

Այժմ համառոտակի կանգ առնենք նախ Սանահնի և ապա Հաղպատի ճարտարապետական գլխավոր կառուցվածքների վրա և նշենք նրանցից մի քանիսի առանձնահատկությունները:

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ

Սանահնին ունի հայկական գեղեցիկ ճարտարապետությամբ կառուցված բազմաթիվ կրոնական-եկեղեցական և աշխարհիկ շենքեր, որոնց մեջ կան քաջառիկ արժեքներ-կայացնող կոթողներ: Ծեփքերի գլխավոր խումբը կենտրոնացված է մի բարձրադիր հարթակի վրա և շրջակաված է եղել պարբառով: Այժմ այդ պարբառի միայն հետքերն են պահպանվել մի երկու տեղում: Վանքն իր հուշարձանների գլխավոր խմբի մեջ ունի երեք եկեղեցի, երկու գավիթ, որոնց մեջ թաղված են Կյուրիկյան թագավորական տան անդամները և ուրիշ իշխաններ և բարձրաստիճան մարդիկ: Վանքն ունի գրատուն, նախագավիթ, ճեմարանի սրահ և զանգակատան առանձին շենք:

Գլխավոր խմբից դուրս վանքն ունի մի քանի մատուռներ և եկեղեցիներ, ինչպես նաև Զաքարյան իշխանների տապանատունը, գերեզմանոց, աղբյուր և Դեքեդ գետի գրա՝ միաթռիչք կամուրջ:

1. Աստվածածին եկեղեցի: Գմբեթավոր

¹⁸ Ստեփանոսի Տարոնեցույ Աստղկան Պատմութիւն տիեզերական: Բ տպ. ՍՊԲ, 1825, էջ 181:

¹⁹ Պաֆադարյան Կարո, Հաղպատ, փմական արձանագրությունները և ճարտարապետական կառուցվածքները: Երևան, 1988, էջ 10—18:

դահլիճ է, դրսից ուղղանկյուն քառանկյունի, ներսից՝ խաչաձև: Ներսում, չորս անկյուններին ունի չորս ավանդատներ, իսկ արևելյան կողմի ավագ խորանը բարձրադիր է:

Այս եկեղեցին այժմ գոյություն ունեցող հուշարձանների մեջ ամենահինն է, և Բագրատունյաց Աբաս թագավորը կառուցել է վանքի հիմնադրումից առաջ հայոց 400 և մեր այժմյան գործածական տոմարով 951 թվականին: Այս թվականը մոտավոր է և հինգ ավանդված է աղավաղումով: Կարծում ենք, որ առնվազն մի տասնամյակով առաջ պետք է տանենք, որովհետև 953 թվականին, երբ մեռավ Աբաս թագավորը, այդ տաճարի կառուցումը արդեն ավարտված էր:

Կարծում ենք, որ միջնադարի պայմաններում այդ եկեղեցու կառուցումը կարող էր ամենաքիչը տևել տասը տարի: Վանքի հիմնադրումից հետո քոյր շենքերը կառուցվել են այս եկեղեցու շրջապատում, որովհետև այս տաճարը կանգնած է հարթակի կենտրոնում:

2. Ամենափրկիչ եկեղեցի: Վանքի գլխավոր տաճարն է (կաթողիկե եկեղեցին), կառուցել է, ինչպես արդեն ասել ենք, Խոսրովանուշ թագուհին և դրանով հիմք է դրել Սանահնի վանքին 986/987 թվին:

Դրսից, արևելյան ճակատի բարձրում, ամբողջ հասակով, քանդակված են Սմբատ Տիեզերականի և նրա եղբոր՝ Գուրգեն թագավորի արձանները:

Ծառերը, հենվելով Կիլիկոս Գանձակեցու սխալի վրա, այդ արձանները վերագրում են Կյուրիկյան թագավորության հետագա սերունդներին՝ 11-րդ դարի մարդկանց:

Իրականությունն այն է, որ տաճարը կառուցել են Խոսրովանուշ թագուհին և Աշոտ Ողորմածը «Վասն արեւշատութեան որչոյ իւրեանց՝ Գուրգենայ, Սմբատայ եւ Գագկայ»²⁰:

Ամենափրկիչը ևս գմբեթավոր մեծ դահլիճ է, դրսից՝ ուղղանկյուն քառանկյունի, ներսից՝ խաչաձև, չորս անկյունների վրա ունի կրկնահարկ ավանդատներ, իսկ արեւելյան ավագ խորանը բարձրադիր է և հետեւի մասը՝ կիսաբոլորակ: Ներսում սա սյուներ չունի, և գմբեթը նստած է ավանդատների անկյուններից վերև բարձրացող չորս որմնամույթների գլխին առաջացած կամուրների քառակուսու գլխին:

Սյուների բացակայությունը թեև հնում էլ գոյություն ուներ հայկական ճարտարապե-

²⁰ Մանր ժամանակագրություններ 18—18-րդ դարի, կազմեց Վ. Հակոբյան: Հտ. 2-րդ, Երևան, 1958, էջ 501:

տության մեջ (հոփիսիմեատիկ տաճարներ և այլն), բայց Բագրատունյաց ժամանակներում կիրառվեց ավելի մեծ չափերով: Դրա պատճառն այն էր, որ այդուհի ունեցող դահլիճների ամբողջությունը խախտվում է, այն է՝ երբ սովորական այուների փոխարեն հաստահեղույն մույթեր են լինում, իսկ այուներ չունեցող դահլիճները միշտ ամբողջական են և ընդարձակ են թվում, որովհետև այուների ետևում «մեռյալ» տարածություն չունեն:



Նկար 1. Սանահինի վանքի ընդհանուր տեսքը հարավարևմտյան կողմից: Առաջին դիրքի վրա՝ Ամենափրկիչ եկեղեցին

Արքայաշեն այս տաճարը, Ամիի Մայր եկեղեցուն հետո, Բագրատունյաց շրջանի ճարտարապետության փառքերից մեկն է հանդիսանում:

Ձ. Ամենափրկչի ժամատուն: Կառուցված է եկեղեցու արևմտյան կողմում, ճիշտ եկեղեցու լայնքին հավասար: Աշխարհիկ երդիկավոր տան ձևի դահլիճ է, որ կենտրոնում չորս թուրակ այուներ ունի: Այդ այուների վրա նստած է երդիկավոր բութ գմբեթը, ինչպիսիք մեզ ծանոթ են իշխանական տներին: Հատակին երևում են բազմաթիվ արծաճագրած և անգիր գերեզմանաքարեր:

Ժամատան կառուցողը վարպետ Ժամհայրն է, 1181 թվականին. վանքի Հովհաննես առաջնորդի միջոցներով, նրան իրենց միջոցներով օգնել են Ամիր Բուրդը և Գրիգոր Տուտեորդի նշանավոր վարդապետը: Կառուցմանը մասնակցել են նաև Կյուրիկե Գ-ի՝ Մարիամ, Բավրիմա, Ռուսուջան աղջիկները և նույն Կյուրիկեի կնոջ՝ Թամարի հորաքույր Ռուսուջանը, որոնցից յուրաքանչյուրն իր հիշատակին կանգնեցրել է գավթի կենտրոնի գմբեթակիր չորս այուներից մեկը:

4. Մեծ գավթ: Կոչվել է Աստվածածնա ժամատուն և Դրսի գավթ: Կառուցվել է

1211 թվականին Վաչուտյան Վաչե իշխանի միջոցներով եկեղեցու արևմտյան պատին կից, եկեղեցու կրկնակի լայնությամբ: Կառուցվածքի առանձնահատկությամբ իսկառիտաբարքական շինություն է՝ երեք թևի բաժանված: Ամբողջ շենքը հարավից մի քիչ հյուսիս ձգված ուղղանկյուն քառանկյունի է, և ամեն մի թևն ունի իր թաղն ու թաղի գլխին էլ՝ իր երկթեք ծածկը: Հսկայական գավթների մեջ եզակի օրինակ է և կրկնում է պալատական այունազարդ դահլիճները, որոնց օրինակները մեզ հայտնի են պեղված ավերակներից:

5. Մագիստրոսի ճեմարան: Այս շենքն առաջացել է ինքնաթերաբար, Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիների սրանքի նեղ տարածության մեջ: Այս երկար սրահը ծածկված է թաղով, կառուցված է երկու եկեղեցիների կառուցումից հետո՝ 11-րդ դարի սկզբներին:

Ավանդաբար պատմում են, որ սա եղել է ճեմարանի այն սրահը, որտեղ Գրիգոր Մագիստրոսը կարդացել է իր դասախոսությունները՝ երկու կողմի վրա շարված քարե նքստարաններին բազմած ուսանողների համար:



Նկար 2. Սանահինի մեծ ժամատան արևմտյան ճակատը: Հովիտում՝ զանգակատունը


6. Զանգակատուն: Եռահարկ բարձրադիր մի շենք է, կառուցված 12-րդ դարի վերջերին: Կառուցման արձանագրությունը թվական չունի: Սրա օրինակով, բայց բարձր ճարտարապետությամբ է կառուցված Հայ-պատի զանգակատունը:



Նկար 3. Սանահնի մեծ ժամատան ներքին սյունաշարերը

լու համար: Հավանական է՝ ունեցել է նաև շարժական կահույք:

Գրատան ներսի սրբատաշ պատերը և որմնապյունների ճուխ զարդարանքը վկայում են այն մասին, որ առ շենքը վանքին ծառայել է ոչ միայն իբրև գրադարան, այլև որ-



Նկար 4. Մագիստրոսի ճեմարանը Սանահնի վանքում

7. Գրատուն: Գեղեցիկ ճարտարապետությամբ կառուցված մի շենք է, որ նշանավոր է եղել միջին դարերում: Այս գրատունն առավել չափով հռչակվել է ձեռագրական հարուստ ժողովածուով: Զեռագիր գրքերի հետ միասին գրատան մեջ պահվել են նաև վանքի թանկարժեք առարկաները (մատուցքներ, խաչեր, ոսկյա և արծաթյա սկիհներ և այլն): Այդ պատճառով գրատան շենքը կոչվել է նաև **Նշխարատուն:** Գրատունը կառուցել է տվել Դավիթ Աճոռղիհի դուստր Հրանուշ թագուհին 1068 թվականին: Նիստ ուշագրավ է ներքին կառուցվածքը. յուրաքանչյուր պատի կենտրոնից զարդարում որմնապյուն է քարձրանում և կամարներով միանում մյուս պատերի կենտրոնից քարձրացող որմնատան կամարին, իսկ առաստաղի կենտրոնը բոլոր գմբեթն իր քաջվածքով լուսավորում է շենքի ներսը: Պատերի մեջ կան կամարավոր խորշեր՝ գրքեր և այլ առարկաներ դնե-

պես բազմաթիվ այցելուներ ունեցող թանգարանային սրահ: Գրատունն իր մուտքի առաջ ունի նաև մի կողմը քաջ նախագավիթ:

8. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Բոլորակ փղջրիկ եկեղեցի է, կառուցված գրատան հետ միասին, մեկ-երկու տարով հրանից առաջ: Կառուցողը դարձյալ Հրանուշ թագուհին է: Այս ձևի փղջրիկ տաճարների կառուցումը մեր ճարտարապետության մեջ հանդես է եկել հագրատունյաց թագավորության ժամանակ: Վերանորոգության ժամանակ (1652 թ.) պատերի վերին մասերը կրճատել են, և այդ պատճառով արտաքին երեսը զարդարող և եկեղեցու շուրջը պար բռնող որմնապյուններն իրար միացնող որմնակամարները ոչնչացել են:

9. Զաքարյանների տոհմական տապա-նատունը: Արտաքինից եկեղեցու տպավոր-

րություն գործող շենք է, կիսով չափ այժմ հողի մեջ թաղված, որ երկու մասից է կազմված: Կառուցել են Զաքարե և Իվանե եղբայրները 1189 թվականին, իրենց՝ 1187 թվականին վախճանված հոր՝ Սարգսի գերեզմանի վրա: Նույն տապանատան մեջ է թաղվել նաև Զաքարե ամիրսպասալարը: Նրանց դամբարանների գլխին կանգնեցված են գեղեցիկ խաչքարեր:



Նկար 5. Գրատան ներքին որմնասյուներից մեկը

10. Աղբյուրը: Գտնվում է գյուղի ծայրին, վանքի շենքերի խմբից դուրս: Ընդարձակ շինություն է, թիկունքով հենված սարականջին, որտեղից ջուր է գալիս քարաշատ գետնուղիով: Ծակատի կողմից շենքը երկկամար մի սրահ է (կառուցված 1255 թվականին), որ իր արտաքին տեսքով նման է եկեղեցու նախագավթի:

11. Կամուրջը: Սանահինի կամուրջը եզակի օրինակ է քարե կամուրջների, որ մեզ է հասել ամբողջական վիճակում գրեթե առանց նորոգումների և փոփոխության 12-րդ դարի ութսունական թվականներից: Կառուցել է տվել Զաքարե և Իվանե իշխանների քույր Վանինին (Նանա) թագուհին՝ իր վաղամեռիկ ամուսնու՝ Կյուրիկյան Աբաս թագավորի հիշատակին: Կամուրջը սրբատաշ

քարով է շինված և 18 մետրանոց կամարավոր թուխքով Դեքեդ գետի երկու ափերը իրար հետ է կապում: Այս գեղեցիկ հուշարձանն այժմ չի օգտագործվում և պահպանվում է իբրև պատմական հուշարձան:

12. Աստվածածնա եկեղեցու հնագույն ժամատուն: Այս ժամատունն այժմ գոյություն չունի, և նրա մասին գրում ենք միայն այն պատճառով, որ մինչև սույն մեզ հայտնի ա-



Նկար 8. Տուտեղդու խաչքարը Սանահինի վանքում

մենահին ժամատունն է, կառուցված 10-րդ դարի ութսունական թվականներից ոչ ուշ:

Եկեղեցիներից կից ժամատուներ ունեն միայն հայկական եկեղեցիները: Ժամատուն չունի քրիստոնեական մյուս դավանանքի և ոչ մի եկեղեցի: Եթե վրացիները 7-րդ դարի սկզբներին դուրս չգալին հայկական դավանանքից և իրենց եկեղեցին չմիացնեին քուզանդականին, նրանք ևս կունենային այնպիսի գեղեցիկ ժամատուներ, ինչպիսիք կան հայկական եկեղեցիներից կից:

Ժամատուները հայոց ճարտարապետության մեջ առաջ են եկել հայոց եկեղեցու այն օրենքի պատճառով, ըստ որի եկեղեցին համարվում է Աստծու տուն, ուստի և նրա մեջ որևէ անձնավորություն չի կարելի թաղել: Հետևապես պետք է եկեղեցուն կից ունենալ մի

այլ աշխարհիկ շինություն, որպեսզի, պահպանելով օրենքը, եռերի կամ տվյալ վայրի տներին ննջեցյալներին թաղեն որևէ հարկի տակ: Այդպիսով, հայոց եկեղեցիներին կից առաջ եկան գավիթները կամ ժամատները, որոնք իշխանական տների համար ծառայեցին իբրև տոհմական գերեզմանատուն:



Նկար 7. Սանահնի կամուրջը՝ կառուցված Վաղնիկ (Նանա) թագուհու կողմից

Սանահնի քրթուկի մեջ պահպանվել և արտագրվել է մի թագավորական հրովարտակ, որով Աշոտ Ողորմածի որդի Գուրգենը (Կյուրիկե Ա) Սանահնի Աստվածածին եկեղեցուն և նրա գավթին և նվիրում երկու ջահ, մեկը՝ մեծ, որը ունեցել է 112 կանթեղ («Ըն և երկոտասան կանթեղս») և մյուսը՝ փոքր, որ կազմված է եղել քառասուն կանթեղից և նվիրված «ամուռ սրբոց քառանիցն»: Այդ ջահերից մեծն իբրև արև պետք է լուսավորեր Աստվածածին եկեղեցու ներսը և պայծառացներ, իսկ փոքրը՝ պետք է «որպես լուսինն ի գիշերի... պայծառացուցանե գալիթ գտորք Աստուծաճնիս... գերեզմանատունս հագրատունեաց»¹:

Այդ գավիթը, որ բավականին ընդարձակ չափեր է ունեցել, քանդվել է, և նրա տեղ 1211 թվականին Զաքարյանների գործակալ Վաչե Վաչուտյանի կողմից կառուցվել է ալեժրմ գոյություն ունեցող մեծ գավիթը: Եթե գմբեթից կախում էին 40 կանթեղաճոց ջահը, որպեսզի լուսնի ճման լուսավորի ներսը, նշանակում է՝ այդ գավիթն ունեցած պետք է լինի ընդարձակ դահլիճ:

Նվերի վերաբերյալ հրովարտակը թվական չունի, միայն գիտենք, որ նվիրատու Գուրգեն թագավորը 989 թվականին արդեն մեռել էր, նշանակում է՝ գավիթը, որի գմբեթից պետք է կախվեր փոքր ջահը, արդեն

գոյություն ուներ: Դեռ ավելին. եթե Ամենափրկիչ եկեղեցին արդեն կառուցված ավարտված լիներ, ջահը ամենայն հավանականությամբ Գուրգենը կնվիրեր իր կառուցել տված եկեղեցուն և ոչ թե իր պապի կառուցածին, հետևապես Սանահնի վանքին կատարված այդ նվերի ժամանակը պետք է առնվազն մի 10 տարով առաջ տանենք:

Այսպիսով, հայոց ժամատների սկիզբը պետք է համարել առնվազն 970-ական թվականները և ոչ թե 11-րդ դարը, ինչպես համարել են մինչև այժմ:

ՀԱՂԱՍ

Հաղպատավանքի ճարտարապետական կառուցվածքների խումբն ավելի մեծ է թե՛ վանական պարսպից ներս և թե՛ պարսպից դուրս:




Նկար 8. Հաղպատավանքի ընդհանուր տեսարանը՝ ճյուղիս-արևմտյան կողմից

Արվեստի տեսակետից ևս Հաղպատի հուշարձաններից մի քանիսն ավելի բարձր արժեք և նշանակություն ունեն միջնադարյան հայ ճարտարապետության համար: Մրցման մեջ լինելով միմյանց հետ, ով երկրորդն է շինել, ամեն կերպ աշխատել է գերազանցել նախորդին:

Այժմ թվենք Հաղպատավանքի մի քանի կարևոր ու նշանավոր կառուցվածքները:

1. Ս. Նշան եկեղեցի: Հաղպատի գլխավոր եկեղեցին է և վանքի հմագույն շենքը, որ կառուցված է 976—981 թվականների ընթացքում խոսրովանուշ թագուհու հրամանով: Տաճարի կառուցումը վերագրվում է Անիի պալատական ճարտարապետ Տրդատին, որ միանգամայն հավանական է, որովհետև տաճարն իր ոճով հարազատ է Տրդատի կառուցած մյուս շենքերին, ինչպիսին է Անիի մայր եկեղեցին, բայց Հաղպատի ս. Նշանը նա կառուցել է իր երիտասարդության շրջանին, իսկ Անիի մայր եկեղեցին

¹ Սանահնի քրթուկ, ձեռագիր Մաշտոցյան Մատենադարանի, № 8091, էջ 50—53:



նրա գլուխ-գործոցն է՝ կառուցած հասունությամբ ժամանակ:

Ս. Նշանն արտաքուստ ուղղանկյուն քառակյունի և ներքուստ խաչաձև դահլիճ է, կառուցված սրբատաշ որձաքարերով: Ունի լայնահիստ գմբեթ՝ բոլորշի թմբուկով: Այս տաճարը ևս գմբեթակիր սյուների չունի: Գլուխը, ինչպես և Սանահնի վանքում, նստած է տաճարի ներսի չորս անկյունների վրա կառուցված կրկնահարկ ավանդատների անկյունամասերից բարձրացող կամարների գլխին, ուստի և տաճարի այդ մասերը հատ-

քայց այստեղ, Խուրթուրուղայի պատկերը բացատրիկ նմուշ է հայ որմնանկարչության մեջ, որտեղ բնական գույներով պատկերված է իրական մի անձնավորություն՝ իր իշխանական տարազով, նկարված իր կենդանության օրով, բնականից, 14-րդ դարում:

Տաճարի արևելյան պատին՝ դուռից, քանդակված են Աշոտ Ողորմածի երկու որդիները՝ Սմբատը և Գուրգենը (Կյուրիկեն): Սրբատը արարական փայտաթուղթ ունի գլխին, իսկ Գուրգենը տեղական արքայական տարազով է:



Նկար 9. Հաղպատի ս. Նշան եկեղեցին հարավային կողմից



Նկար 10. Գուրգեն և Սմբատ Տիեզերակալ թագավորների քարձրաքանդակ արձանների Հաղպատի ս. Նշան եկեղեցու ճակատին

կապես ամուր եմ կառուցված գմբեթի մեծ ծանրությունը կրելու համար: Արտաքուստ պատերն ունեն երկուական խորշ, որոնք, բացի որմերի զանգվածը թեթևացնելուց, զեղեցկացնում են արտաքին տեսքը:

Ներստում, արևմտյան կողմի ավանդատների վերին հարկերը բաց են և ծառայել են իբրև օթյակ Կյուրիկյան տան անդամների համար, որոնք այնտեղ են բազմել եկեղեցական արարողությունների ժամանակ:

Ավագ սեղանի ետևի պատերը, որ կիսաբոլոր են, ծածկված են որմնանկարով. վերին շերտը, որի վրա նկարված է Աստվածածինը մանուկ Հիսուսը գրկին, նկարված է 13-րդ դարում, իսկ տակի շերտի նկարը երեկում է միայն փոքրիկ տեղերում, որից դժվար է հասկանալ բովանդակությունը, սակայն կարծեք թե դարձյալ նույնն է:

Տաճարի ներսում, հյուսիսային պատին պահպանվել է իշխան Խուրթուրուղայի պատկերն ամբողջ հասակով, որի կողքին ևս նման նկարներ են եղել, որոնք դժբախտաբար չեն պահպանվել: Հավանաբար հայրը լինել՝ Սադունը:

Եկեղեցիներում սովորաբար լինում են սրբերի որմնանկարներ, մեծ մասամբ Աստվածաշնչի բովանդակությունից վերցված.

2. Ս. Նշանի ժամատուն կամ մեծ գավիթ: Սա Հաղպատի ամենահամաճար կոթողն է և բացառիկը ողջ հայկական ճարտարապետության մեջ: Կապ է ս. Նշան եկեղեցուն՝ նրա արևմտյան կողմից:

Այս գավթի տեղում նախապես գոյություն է ունեցել մի այլ գավիթ, կառուցված 1185 թվականին: Հետագայում վանքի առաջնորդ Հովհաննես Նաչեցեցին քանդել է հին գավիթը և նրա տեղ կառուցել այժմ գոյություն ունեցողը, հինգ պահպանելով միայն նրա հյուսիսային և հարավային ծայրամասերը, որտեղ թաղված են Կյուրիկյան թագավորական տան անդամները: Այդտեղ, պատի վրա մնացել է նաև հին գավթի կառուցման արձանագրությունը:

Այս գավթի կառուցման ճիշտ թվականը մեզ հայտնի չէ, բայց այն կառուցել տվող Հովհաննես Նաչեցեցին հիշվում է 1209, 1211, 1220 և 1221 թվականների արձանագրությունների մեջ, հետևապես այդ գավիթը կառուցվել է 13-րդ դարի տասնական թվականներին:

Այս գավթի ճարտարապետության մասին հիացմունքով են խոսել նաև միջնադարյան մատենագիրները:

կառուցման ժամանակակից կիրակոս Գանձակեցին իբրև կարևոր նշանակություն ունեցող և այս զավթի կառուցումը: Մի տեղում նա գրում է.

«Լա (Յովհաննէս խաչենեցի) քակեաց զգալիքն փոքրագոյն, որի դուռն կաթողիկէին Հաղթատայ, եւ շինեաց մեծ եւ գեղեցիկ շինուած որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»²⁷:



Նկար 11. Հաղթատի մեծ ժամատան արևմտյան մուտքը

Ներդրող անգամ, հիշատակելով խաչենեցու կատարած կարևոր գործերը, ասում է.

«Բագում գործս արժանի յիշատակի գործեաց նա ի Հաղթատ, ընդ որս եւ զհռչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիագուցանէ զտեսողսն»²⁸:

Հաղթատի մեծ ժամատունն իր հատակագծով մի ուղղանկյուն քառակկյունի դահլիճ է, միայն թե նրա արևելյան կողմում հին զավթի դեպի հյուսիս և դեպի հարավ ընդհանուր քառակկյունուց դուրս մնացող մասերն են պահպանված, որոնց շնորհիվ ժամատան դահլիճն ավելի է ընդարձակվել:

Սակայն գլխավորը ժամատան առաստաղն է, որ հիմնված է երկու գույգ միմյանց հատող կամարների վրա: Այդ կամարների կրունկները ժամատան երեք կողմերում նշտած են պատերին կից որմնաշյուղների, իսկ արևելյան կողմում՝ պատերից հեռու գտնվող երկու սյուների վրա:

Սակայն ծածկի կազմությունը դրանով չի վերջանում:

Ամենակարևորն այն է, որ վերոհիշյալ խաչաձևվող կամարների գլխին դարձյալ խաչաձևվող կամարներ են կառուցված ավել-

²⁷ Պատմություն հայոց արարեալ կիրակոսի Գանձակեցւոյ: Էջ 82:

²⁸ Նույնտեղ:

յի փոքր չափերի, որոնք ժամատան կենտրոնական մասն ավելի վեր են բարձրացնում և դահլիճի շքեղությունն ու վեհությունը հասցնում չգերազանցված չափերի:

Վերին կամարների միջև ընկած առաստաղային տարածությունը խաչաձևվող կամարների շնորհիվ բաժանվել է ինը հատվածի, որոնցից ութ կողմնայինները զարդարված են գոմարի քարերի տարբեր ձևերով, իսկ կենտրոնականը բաց է իբրև յուսամուտ և ժամատան տանիքի վրա ավարտվում է վեց սյուների վրա նստած սրագագաթ գլուխով:


Խաչաձևվող կամարները սովորական են 18-րդ դարի հայկական ճարտարապետության մեջ և կիրառվել են գլխավորապես ժամատների (Նորակերտ, Այսասի, Անի), Առաքելոց եկեղեցի, Հաղպատ և այլն), սեղանատների (Հաղպատ, Հաղարծին) և մատենադարանների (Սանահին) կառուցման մեջ, բայց խաչաձևվող կամարների ցլխին դարձյալ նույնպիսի կամարներ կան միայն Հաղպատում, որտեղ խիզախ ճարտարապետն աներկյուղ կերպով կամարների կենտրոնի վրա դրել է ծածկի կենտրոնական մասի ամբողջ ծանրությունը, այնպես որ նա 750 տարի անխախտ պահպանվել է առանց վնասվածքների և հասել է մեր օրերին: Դեռ երկար էլ կմնա անխախտ վիճակում:

8. Գրատուն: Մեծ համբավ է ունեցել Հաղթատի գրադարանը, որտեղ վանականները պահել են հայերեն լեզվով գրված ամեն բան: Հաղպատն ունեցել է գրչության իր դպրոցը, իր գիտնականները, որոնցից շատերը մեծ հռչակ են վայելել ամբողջ Հայաստանում: Այնտեղ գրվել են բազմաթիվ ձեռագիր գրքեր, որոնց թվում մի շարք գլուխ-գործոցներ, ինչպիսիք է, օրինակ՝ Հաղպատի 1211 թվականի Ավետարանը՝ հաղկված Մարգարե մանրանկարչի ձեռքով:

Անցյալում Հաղպատի ձեռագրերը համարվել են ընտիր, ստույգ և վստահելի օրինակներ, որոնք գրվել են ուսումնական հայրերի հսկողության ներքո, և մյուս վանքերի միաբաններն աշխատել են արտագրություններ կատարել այդ գրադարանի օրինակներից:

Գիտենք, որ այդ գրատունն ունեցել է ձեռագրերի հարուստ ժողովածու, որից քիչ բան է հասել մեր օրերին: Օտարների հաճախակի ավերածություններից բացի, վանքի տգեղ միաբանները ևս «հնազաձ», կազմահան եղած և թերթերը պոկված ձեռագրերը այրել են և, այդպիսով, ոչնչացրել հայ գրչության ամենահին և ամենաթանկագին զանգեղը:

Գրադարանը քառակկյունի, գրեթե հա-



վաճարակողմ շինությունն է՝ ս. Նշանի նշուհի-արևելյան անկյունի մոտ շինված (11-րդ դար), հավանաբար մի քիչ ավելի վաղ կառուցված, քան Սամահնի գրադարանը։ Նույնպես փայտածածկ է եղել հազարաշեն եռոսկով, բայց 19-րդ դարի կեսերին (1258—1262 թթ.) վերանառուցել են, ծածկը և պա-



Նկար 12. Հաղպատավանքի գրատուն հերթին տեսարանը

տերի որոշ մասերը փոխել. ծածկը քարաշեն են դարձրել՝ խաչաձևվող կամարներով. կենտրոնում կա երդիկով բույս զմբեթ։ Հին շենքը, պատերին, յուրաքանչյուր կողմում ունեցել է երեք մեծ որմնախորշեր՝ գրքերը շարելու համար, որոնցից մի քանիսը փակվել են նորոգության և ծածկը փոխելու ժամանակ։

Գրատան շենքը, հետագայում, հավանաբար 15—17-րդ դարերում, երբ ձեռագրերը ապահովության համար տեղափոխել են մոտակա անմատչելի քարայրների մեջ, դարձրել են մատանատուն և այնտեղ պահել միաբանների պարենը և գինին՝ զետնի մեջ թաղված մեծամեծ կարասներում։

Գրատունն ունի ընդարձակ սրահ ս. Նշան

եկեղեցու արևելյան պատին զուգամետ, գրեթե ամբողջովին թաղված հողի մեջ։ Այդ սրահի միջոցով գլխավոր եկեղեցու արևելյան պատն ազատել են հողից։

4. Փոքր ժամատուն (զավիթ)։ Ինքնաքարաքար առաջացել է ս. Նշան եկեղեցու և նրա հյուսիսային կողմը կառուցված Համազասպի ժամատան միջև։ Նշանավոր է նրա միջի ամենափրկիչ խաչքարը, որի վրա պատկերված է Քրիստոսը խաչված վիճակում։

Այդ գեղեցիկ խաչքարը, ինչպես նաև նմանները, ուսումնասիրել և հրատարակել է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը³⁴։

Փոքր զավիթը կառուցված է 1273 թվականին նախորդող մի քանի տարիների ընթացքում՝ վանքի առաջնորդ Հովհաննեսի կողմից։

5. Համազասպաշեն ժամատուն։ Վանական շինությունների մեջ ամենարճարձակն է և իր հավասարակողմ քառակյունի ձևով ընդգրկում է 393 ք. մ. տարածություն։

Իր կառուցվածքով ոչնչով չի տարբերվում սովորական ժամատներից։ Կենտրոնական չորս սյուների և յուրաքանչյուր պատից առաջացող երկու-երկու որմնասյուների միջոցով դահլիճը բաժանված է ինը հատվածի. մեկը, որ կենտրոնականն է և ընկած է չորս սյուների միջև, իր վրա կրում է երդիկավոր բացվածք ունեցող բույս զմբեթ։ Ծեռքի բարձրությունը ընդամենը 7,2 մետր է, որ նրա ընդարձակության համեմատությամբ զգալիորեն քիչ է։

Ժամատան եկեղեցին այնքան փոքր է, որ շատերն անտեսում են այն. ժամատունը դիտում են որպես առանձին շենք և այն համարում զանազան նպատակներով օգտագործման (դատարան, խորհրդարան)։ Եկեղեցին ունի ընդամենը 20 ք. մ. մակերես։ Ժամատան հատակին կան տապանաքարեր։ Ժամատունը կառուցել է վանքի վանահայր Համազասպ առաջնորդը 1257 թվականին։

6. Ս. Գրիգոր եկեղեցի։ Կառուցված է 1025 թվականին։ Նշանակում է՝ վանքի հնագույն շենքերից մեկն է։ Մի փոքրիկ եկեղեցի է մանքի գլխավոր խմբի հարավ-արևմտյան ծայրին, աստապի ներսում։

Աղտաքուտ ուղղանկյուն քառակյունի, արևելքից արևմուտք երկաթուղուց քիչ չափով գերազանցում է լայնքին, ներքուստ տաճարի չորս անկյուններում կառուցված

³⁴ Գարեգին արքեպս. Հովսեփյան, Հավուց Թատի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1987 թ., էջ 88։

ավանդատների շնորհիվ հատակագիծը դարձել է խաչաձև, ըստ որում արևելյան կողմում ավանդատները միահարկ են, իսկ արևմտյան կողմիցները՝ կրկնահարկ։ Վերջիցներս հատկանշաբար արդյունք են 1211 թվականի նորոգությանը, որ կատարել է մեծ ժամատունը կառուցող Հովհաննես Խաչենցին։



Նկար 13. Հաղպատավանքի գլխավոր միջնաբերդը

Միակ մուտքը արևմուտքից է, և այդ ճակատին է, որ ունի զուսպ և չափավոր զարդեր՝ մուտքի շրջապատում, մուտքի գլխի լուսամուտի շրջանակին, նրա գլխին՝ պսակը, ավանդատների փոքրիկ լուսամուտների պսակները և այլն։ Գմբեթ չունի, և ծածկը երկթեք է։

7. Մի եկեղեցի էլ գտնվում է ս. Նշանի ժամատան հյուսիսային կողմում, քաղկականի բարձրադիր գմբեթով, որ նստած է չորս պատերի հետ կառուցված որմնասյուների գլխին։ Կառուցողն է Դեստմանց Հասան իշխանի դուստր Նաթունը 13-րդ դարում։ Կառուցման արձանագրությունը թվական չունի։

8. Զանգակատունը։ Հայկական միջնադարյան ճարտարապետությանը նշանավոր կոթողներից մեկն է և իր ձևով ու տեսքով միակը։

Կառուցված է վանքի ըսկի արևելյան բարձրադիր հարթակի վրա և իր վեհությանը իշխում է թղթի մյուս կառուցվածքների վրա։ Ներսում զանգակատունն ունի երեք հարկաբաժին, որոնց գլխին կանգնած է սյունազարդ զանգակատան գմբեթը, իսկ տանիքները հարկերը հարմարեցված են եղել որպես մատուռ օգտագործվելու։ Նշանակում է՝ բացի զանգակատան պատվանդան լինելուց, նաև եկեղեցի է եղել և ունի պատարագի յոթ սեղան։

Հմայիչ է զանգակատան գեղեցիկ տեսքը

նաև արտաքինից։ Կառուցել է վանքի առաջնորդ Հստազասար 1245 թվականին։ Կառուցման արձանագրության մեջ ասված է.

«Շինեցաւ գեղեցկազարդ տաճարս Աստուծոյ՝ զարթոցանող փառաբանչաց տեառն» եւթն խորանաւ ի տէր Համազասպայ։

9. Սեղանատուն։ Աշխարհիկ շինություն է և բացառիկ տեղ է գրավում մեր միջնադարյան կառուցվածքների մեջ։

Շինության ձևերի հիմքում ընկած է առաստաղի վրա միմյանց հատող կամարների շնորհիվ առաջացած բութ գմբեթավոր երդիկը, որ նման է ժամատների, գրատների երդիկներին և վերցված է ժողովրդական տան և իշխանական ապարանքների դահլիճների ձևերից։ Սակայն, սեղանատան դահլիճն այդքանով չի ավարտվում, ճարտարապետը մեկի փոխարեն այդպիսի երկու դահլիճ է կառուցել իրար կից և, այդ երկուսը միացնելով միմյանց, մի երկար սեղանատուն է ստացել։ Այդ նպատակին հասնելու համար դահլիճները միմյանցից բաժա-



Նկար 14. Հաղպատի զանգակատունը

նող պատի փոխարեն միայն երկու սյուն է դրել՝ կլոր քներով, որոնք հիմք են հանդիսացել երկու կողմերի վրա գնացող խաչածնվող կամարների համար։ Հասկանալի է,

որ այդպիսի դահլիճն ունենալու է երկու երգիկավոր գմբեթ, ոլունջ միաժամանակ այդ միացյալ երկու դահլիճների լուսի աղբյուրն են հանդիսանում: Թեև 18-րդ դարի գործ է, թայց չգիտենք ճիշտ թվականը, և ոչ էլ հայտնի է կառուցող ճարտարապետի անունը: Բայց, քանի որ ճիշտ այս սեղանատան մասն մի ուրիշն էլ գոյություն ունի Հաղարծիկում, որ անկասկած նույն ճարտարապետի կառուցածն է, կարող ենք վստահորեն ասել, որ ճարտարապետը վարպետ Սիրման է, որի անունը պահպանվել է Հաղարծիկում: Հաղարծիկի սեղանատունը կառուցված է 1248 թվականին, Հաղպատինը՝ հավանաբար մի քանի տարի առաջ, որովհետև Հաղարծիկի սեղանատան մեջ վարպետ Միմասը դահլիճներն՝ իրարից քաժանող սյուներն ավելի հաստատուն հիմքերի վրա է դրել:



Նկար 15. Հաղպատի աղբյուրը գյուղի ծայրին

Սեղանատան այս ձևը իր կրկնակի դահլիճով, սովորական պետք է եղած լինի, քաջ այսօր այդ ոճի միակ վկաներն են Հաղարծիկի և Հաղպատի սրահները:

10. Հետաքրքրական կառույց է նաև աղբյուրը, որ մեծ և գեղեցիկ շինություն է սրբառաջ քարով կառուցված: Ներսը թաղակապ է, և ճակատի արձանագրությունից իմանում ենք, որ կառուցվել է 1258 թվականին վանքի առաջնորդներից մեկի՝ Հովհաննեսի «ի հայալ ընչից իւրոց»:

Վանքն ունի նաև այլ շենքեր, թե՛ պարսպի միջին (եռախորան տապանատուն, մատուռներ, խաչքարեր) և երանցից դուռն (անապատ, ս. Սիրոն եկեղեցի և այլն), թայց դրանց վրա կանգ չենք առնի, այլ միայն կանգ կառնենք ամրոցի վրա, որ պատկանել է Հաղպատա վանքին:

11. Ամրոց Հաղպատա ս. Նշանի: Լայն է և կոչվել այդ ծայր աստիճան հետաքրքրական բերդը, որ կառուցված է Հաղպատի և Սանահին միջև ընկած մի ցից քարձուների

վրա: Այժմ այդ ամրոցը կոչվում է Կայան բերդ կամ Դոսեվանք, որոնք նոր անուններ են:

Կառուցման արձանագրությունը պահպանվել է ամրոցի միջի եկեղեցու ճակատին: Ըստ այդ արձանագրության բերդը և եկեղեցին կառուցել է Հաղպատավանքի առաջնորդ Հովհաննեսը (Զաքարեի և Իվանեի քեռորդին) 1288 թվականին, մոնղոլ-թուրքերի արշավանքից անմիջապես առաջ՝ վանքի հարստությունները պահելու և միսրաններից պատերազմների ժամանակ իրեն ասպատարան ծառայեցնելու համար: Արձանագրության մեջ ասված է. «Էհա սառանումն աշխարհիս մերոյ անարեն խորագմեցն, ոչ գոյր տեղի ապաստանի սք. Նշանիս և եղբարցս հրամանալ քեռոյն իմոյ Իւանէի... շինեցի զամրոցս ևս գեկեղեցիս Հաղբատայ սք. Նշանիս բազում աշխատութեամբ»²⁵:

Այս ամրոցի շուրջը վեճ է ծագում սանահնեցիների և հաղպատցիների միջև և, ինչպես հաղորդում է դեպքերին ժամանակակից Կիրակոս Գանձակեցի՝ «Եւ յետ նորա միւս Յովհաննէս (եղեւ առաջնորդ), քեռորդի իշխանացն Զաքարեի և Իւանէի...: Սա շինեաց բերդ մի գեղեցիկ ամրագոյն պարսպսք մէջ ընդ Հաղպատ»՝ եւ ընդ Սանահինս: Վասն որոյ գծաութիւն ընդ երկու մեծամեծ վանքերն եղեւ, որպէս թէ ի հողոյ Սանահինի, իցէ, եւ վրէժխնդիր եղեւ իշխանն Ծառքառ՝ որդին Զաքարեի՝ Սանահինն. զի հայրն նորա անդ թաղեալ էր... յայնմ ժամանակի իջրել մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս, քակեցին զպարիսպ բերդին հրամանալ թաթարին»²⁶:

Հավանաբար պարսպի միայն որոշ մասերն են քանդել թաթարները, որովհետև տեղում մինչև այժմ պահպանվածն այնքան է, որ այնքանի վրա մեծ տպավորություն են գործում թե՛ դիրքը և թե՛ ավերակների մնացորդները:

Սանահին և Հաղպատի վանքերն անգամ մեկ հազարամյակում իրենց ճարտարապետական մեծարժեք մնացորդներով, գիտնական և շինարար միաբաններով, քարձրագույն դպրոցներով, արվեստի, գրչության հրշարձաններով մեծ դեր են կատարել միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում:

Նոր է սկսվել հայ մշակույթի պատմության մանրամասն ուսումնասիրությունը, և այդ պատմության մեջ Սանահինն ու Հաղպատն ունեն իրենց պատվավոր տեղը:

²⁵ Ղաֆադարյան Կարո, Հաղպատ: 1908, երևան, էջ 260:

²⁶ Նույնտեղ:



ԱՍ. ՄՆԱՏԱԿԱՆՅԱՆ

ՍԱՆԱՀԻՆ ԵՎ ՀԱՂՊԱՏԻ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Այդ հաստատությունների հիմնադրման 1000-ամյակի առթիվ)

Հեռավոր ժամանակներից Անդրկովկասում, Ասիայի և Եվրոպայի սահմանի վրա, ընկած էր բավականին ընդարձակ մի աշխարհ՝ պատմական Հայաստանը։ Իր անկախության դարերում այն համարվում էր ժամանակի քաղաքակիրթ և հզոր պետություններից մեկը, իսկ նվաճված տարիներից՝ մաքառումներով և թագավորություններով հյդ մի վտանգ՝ բոլոր իշխողների համար։ Բավական էր, որ հանգամանքները ներքին, և նա նորից ոտքի կկանգներ իր ողջ մեծությամբ և ստեղծագործական բնատուր հանճարով։ Դրա փայլուն ապացույցներից մեկն էր հայոց Բագրատունյաց թագավորության ծնունդն ու հերոսական պատմությունը։ Մեծ չէր նրա գոյատևման շրջանը. ընդամենը երկու դար, այն էլ հաճախակի բռնկվող պատերազմական գործողություններով լի. բայց մեծ եղավ նրա յոդած ազդեցությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության պատմության մատյանում։ Աղթամարն ու Անի, Հաղպատն ու Սամահինը, Գրիգոր Նարեկացին ու Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավազն ու Մխիթար Գյուշը, «Սասունցի Գավիթ» էպոսն ու մեր բարձրարվեստ հայրենիքները բավական էին հայ ժողովրդին դասելու իր ժամանակի ամենաառաջավոր երկրների շարքը։ Իսկ եթե հիշենք նաև Կիլիկյան Հայաստանի ծնունդն ու ծաղկումը, նրա քաղաքներն ու տաճարները, քերդեյն ու ամրոցները, ինչպես նաև աշխարհին պարզենած նրա տիտանների՝ Ներսես Շնորհալույսն և Թորոս Ռուսիհին, Ներսես Լամբրոնացուն ու Վարդան Այգեկցուն, ապա պատկերն ավելի պարզ կլինի, որովհետև այդ թագավորությունը Բագրատունիների ռազմա-քաղաքական, սոցիալ-տնտե-

սական, կրթա-մշակութային կյանքի գոյատևման մի նորորակ բունկումն էր՝ Միջերկրական ծովի բարձրադիր ափերին։

Հայ ժողովրդի հոգևոր հարստություններից քաջատեղյակ ռուս գիտնական Վ. Բրյուսովը, խոսելով Բագրատունիների ժամանակաշրջանի գիտության և գրականության զարգացման աստիճանի մասին, գրում է.

«Այդ դարաշրջանի ստեղծագործությունները վկայում են, որ հայ գիտնականների իմացությունների մակարդակը 10—11-րդ դդ. ոչնչով պակաս չէր նրանց եվրոպացի զորչակիցներից»։ «Բոլոր հիմքերը կան ասելու, որ Բագրատունիների ժամանակաշրջանում կրթության միջին մակարդակը Հայաստանում եվրոպական այն ժամանակվա մի քանի երկրներից բավականաչափ բարձր էր»։ Ստեղծված գրական արտադրանքը՝ այն ժամանակվա քանաստեղծությունը, արդեն բովանդակում է հաջորդ դարերի փառքամ ծաղկումի սաղմերը և մի շարք առումներով մնում է յգեթազանցված»¹։

Բագրատունիների թագավորության անդրանիկ քայլը եղավ որոնել Արտաշեսյան և Արշակունի թագավորների ազգաբանական ու պետական սահմանները։ Գեթ հյուսիսում դա նրանց հաջողվեց։ Հիշենք Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունը հայոց Սմբատ Առաջինի տիրույթների մասին. «Եւ այսպէս, ձգտեալ ամեցուցանէր գշաւիդ տերութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցկարնոյ քաղաք, և անդր ևս քան Գկդարջու՝ քերեալ մինչև առ աւին ծովուն մեծի, և մինչև

¹ В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван. 1940, стр. 87.

գսահմանն Եզերացոց և մինչև ցատորոտ մեծի լեքինն Կովկասու, գԳուգարացիս և գԾա-նարս մինչև ցԴուտն Ալանաց»:

Բագրատունիների թագավորությունն իր քաղաքական և տնտեսական խնդիրներից քացի, հատուկ ուշադրություն նվիրեց նաև երկրի կրթական, լուսավորական և առևտրային մշակութային հարցերին: Մաշտոցյան դպրության հալածական ավանդները, որ թիկունքում ունեցին 5-րդ դարի ոսկեդե-նիկ դպրությունը, մտան զարգացման նոր հոսանքի մեջ:

Բագրատունյաց թագավորական տան նախաձեռնություններից մեկը, և թերևս ամենաարդյունավետը, եղավ Սանահին և Հաղպատ մենաստանների ստեղծումը: Անշուշտ, դրանք կենտրոններ էին, ուր պիտի հոգացվեին ժամանակի կրոնական պետքերը, բայց դրանք միաժամանակ այդ օրերի բարձրագույն ուսումնական հաստատություններն էին:

Պատկերավոր մտածած լինելու համար եթե թույլ տանք մեզ 8—13-րդ դարերը պատկերացնել համատարած գիշերվա սեփությանը, ապա այդ խավարը փարատող ամենահզոր ջանքերը կտեսնենք հաղպատ-սանահինյան բարձունքներում, հետո նաև՝ Գրանց լեռանից Նոր Գետիկում, մեկ էլ՝ Ռեռավոր Կիլիկիայում: Այստեղից հասկանալի է, թե որքան մեծ դեր ու ճակատագրական անելիքներ էին վիճակված մայր հայրենիքի այդ սրբազան օջախներից: Այդտեղ, այդ լեռնագագաթներին մի կողմից մարմնավորվում էին հայ ժողովրդի ճարտարապետական փայլուն կարողությունները, քանդակագործական բարձրաճաշակ արվեստը, իսկ մյուս կողմից՝ ծաղկում էին գրչության, մանրանկարչության և մանավանդ գիտության, գեղարվեստական գրականության, մանկավարժական ուսումնառության բնագավառները: Հիրավի, հոգևոր սննդի լուսավոր աղբյուրներ, որոնք դարեր շարունակ ռոզգեցին հայ միտքն ու մշակույթը:




Հայ կնոջ անունը հաճախ է հնչել մեր կյանքի ճակատագրական, ինչպես և առօրյա իրադարձություններում: Սանահինն ու Հաղպատն էլ կանացի նախաձեռնության արգասիք հանդիսացան: Բագրատունյաց Աշոտ Երրորդ կամ Ողորմած թագավորի ուսումնասեր կինը՝ Խոսրովանուշ թագուհին

էր այս անգամ, որ միտք հղացավ Հայոց աշխարհին իր պարգևած երկու արքայազուն զավակների՝ Սմբատի և Գուրգենի արևշատության համար կերտել երկու անգուսկան կոթողներ՝ Սանահինի և Հաղպատի անսկանաբեր բարձունքներում: Բարեբախտ զուգահեյությունը նույն ժամանակաշրջանում Տրդատ ճարտարապետը, որի հանձնարով էլ, ըստ որոշ տվյալների, մարմնավորվեցին Խոսրովանուշ թագուհու երազանքները:

Սանահինը հիմնադրվեց 867, իսկ Հաղպատը՝ 877 թվականին: Ծուռով այնտեղ հավաքվեցին կես հազարից ավելի մտավորականներ, հոգևորականներ, ճգնավորներ, որպեսզի ոչ միայն աղոթքով ու ճգնությամբ, այլև մտքի ու արվեստի նորակերտ հրաշալիքներով իսկապես հավերժացնեին Բագրատունյաց տոհմի և նրանց ծնող սերունդների հիշատակը:

Այդտեղ, Սանահինի և Հաղպատի կրթօջախներում իրենց մեծահարուստ գիտելիքներն ի սպաս դրին հայ դպրության զարգացման գործին այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիքներից են Դիոսկորոս կաթողիկոսը, Անանիա Սանահինեցին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավազը, Գրիգոր Տուտեորդին և ուրիշներ: Մինչև հիմա էլ Սանահինի հոյակապ կառույցների մեջ կանգուն է «Մագիստրոսի ճեմարանը», որտեղ դասավանդել է հայ իրականության այն ժամանակվա ամենամեծ մտածողը՝ Գրիգոր Մագիստրոսը: Վերջինիս թղթերից և քանաստեղծություններից մեր առաջ հառնում է դեռևս իր ամբողջական գնահատությանն անասող փիլիսոփան, լեզվաբանը, քերականը, թարգմանիչը, բանաստեղծը, աստվածաբանը, մանկավարժը, տեսաբանը, ինչպես նաև գորականն ու գորավարը: Այդ նա էր, որ ճիշտ գնահատելով պատմական դեպքերի զարգացումը, նկատում էր, թե հայ գրերի գյուտից հետո, սեփական պետության քաղաքացիության պատճառով, գրի և դպրության սքանչելի գյուտը դարձավ լոկ հոգևոր բնագավառի մենաշնորհը: Այժմ, ասում էր նա, երբ սեփական թագավորություն վերատեղծված է, պետք է զարկ տալ աշխարհիկ մանկակրթությանը, նկատի ունենալով պետության և ժողովրդի անմիջական ջանքեր դրսևորող գիտության և գրականության ստեղծման անհրաժեշտությունը: Դա արդեն մշակույթի աշխարհականացման մեծ երեվոյթի տեսությունն էր՝ մշակված Անի-Բջնի-Հաղպատ-Սանահին շառավիղով գործող Գրիգոր Մագիստրոսի կողմից: Այդ նա էր, որ մոռացության փոշույ դուրս քաշեց Անա-

² Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 181:



Սուրբ Կիսկիոսի տաճարի խորհրդարանը

(Կիսկիոսի Կր. Սուրբազան)

Գիտ Ժիրակացու գիտական և մանկավարժական աշխատությունները՝ պահանջելով պատշաճ վերաբերմունք։ Նրա գրչի տակ էր նաև, որ ծնվեց հայրենասիրական և աշխարհիկ բովանդակությամբ գրված առաջին կամոնավոր բարձրավանդ բանաստեղծությունը։ Այստեղ նա, դիմելով ժամանակի երիտասարդությանը, մի կողմից կոչ է անում՝ ելնել երկիր մտած և «Արարարտեանն գազաթ» պղծելու եկած թշնամու դեմ, իսկ մյուս կողմից՝ համահման բանաստեղծություններ գրելու արվեստը սովորել։ Ահա այդ հազվագեյ, իր տեսակի մեջ միակ բանաստեղծությունից մի նմուշ, ուր նա զենքի է կոչում ընթերցողին։

Աղէ՛, զինեա՛, զինուորեա՛, ապառազի-
նեա՛, դու վառեա՛...

Արդ, միարեայն դու պնդեա՛, զլայնալիճ
հայրենիցն,

Ջերեքթեանն մխեա՛, յառաջ մատիր և
քաղեա՛,

Այս քեզ Բելայն հաս հանդէս և թորգով-
եանն Հայկալ...²

Որքա՞ն աշխարհիկ բանաստեղծական մտածողություն. բավական է այս տողերը թարգմանել աշխարհաբար, և կատարվի ժամանակակից բանաստեղծություն։

Իր նամակներից մեկում նա, արդեն շատ հեռվից, Միջագետքից, կարոտով և արտասվալից հառաչանքով դիմում է Սամահին իր ծանոթներին, ընկերներին՝ «Յիշելով զհայրական ձերոց ծայրագունից խնամա առ մեզ և խրատ և ողորմութեամբ քարեկարգութիւնս, և զերիտասարդացն, որք ի վարժարանս, հոնտորական և երաժշտական գնոցայն զմտաւ ածեալ հանդէս և զմրցումն և զգեղեցիկ մոլութիւնս և զմանկանցն սաղմոսերգութիւնս քաղցրաճաւունութեամբ վերառեցեալ, որ գրեթէ պետութեանցն և բոլորն երկնային դասու և զօրութեանց գերակատար գտեալք»³։ Այս ուշագրավ տողերում նա Սամահին ուսումնառության, երգասացության, երաժշտության և գիտական մրցահանդէսների մակարդակը բարձր է դասում անգամ երեվակայվածից։

Անհրաժեշտ էր լինի այս նամակից հիշել նաև այն տողերը, ուր նկարագրվում է, թե ինչպես են ապրել տեղի ճգնաժամները։ Նրանք «ի մորթոց փայտից զգեստաւորեալ... խոտովք փայրենի շատացեալք. և ո-

ւանց մաշկեօք միայն և առանց պարեգօտի և զգեստո՛ւ՝ գտաւ ամարայնոյ և զաւսմամանեացն... ձմերայնոյ... սովու և ծարսու համբերեալ»։ Նա պատմում է, որ շատերն էլ, ճիշտ է, կրում էին զգեստ, բայց տակից հագնում էին այնի մորթոց կարկասուծ, չորացած կշկոտութեւր, որոնց ատամնախոր չոր եզրերը, ժամանակի ընթացքում, կտրատում էին որովայնի մաշկը և պատճառում «տեղեւալի» մահ։ Գրիգոր Մագիստրոսը միշտ էլ իր տեսածներից մեկին, որը ձիու ձառից և անասունների պոչերի մագից խիստ ծանր քուրձ էր պատրաստել՝ կոշտ ու կոպիտ հանգուցներով, իսկ ոտքերին ու ձեռքերին՝ «տեղեւալանս երկաթիս և շղթայս և ձեռնակապանս և կանդրիս... Ծանրութիւն երկաթոյն և թոռտպին էր լտելու ի և իս» (140, շուրջ 45—50 կգր...)։ Իսկ սնունդը՝ «ի տերևոց ցաքոյ և ի կորգաց հիւնից աղացեալ թրէին. յարեգակնային տաւոյն արարեալ բլիթս. և այն իսկ էր նոցա կերակուր. և ոչ հաց. այլ ամենեին ջուր, բայց միայն եթէ թթուիկ յեթերորդում ասուրն. և մերկք և բոկանիք և ամենայն գիշեր սաղմոսերգութեամբ...»⁴։ Հետաքրքրական է նաև նրանց առողջության վիճակը. «Զօրութեամբն Աստուծոյ ոչ հիւանդացեալք, այլ քաղցողութեամբ իրոյ զակն ի մարմնի բոլոր Արամեանս գտեալք»⁵։ Այսինքն, նրանք ողջ հայ ժողովրդի ամենաառողջ մարդիկն էին։

Նման կենսագրություն է ունեցել նաև հրոշակավոր գիտնական և բանաստեղծ Հովհաննես Սարկավագը։ Հաղպատի գրիչներից մեկը, հիշելով նրա շիրիմը, գրում է. «Սարկավագի վարդապետի... և թեկալէր ճգնաւորի սուրբ շիրմիս»⁶։ Այս սնունդ-թեփը՝ հոգի կորիզի և ցաքվի տերևի փոշերիցն է՝ եկված արևի տակ։ Այդ նույն Հովհաննես Սարկավագն էր, որ մի քանի օր պատահաբար փակված էր մնացել Հաղպատի վանքի գրատանը։ Երբ մի օր դուռը բացելով զարմացած հարցրել են, թե ինչո՞ւ է սնվել, նա ցույց է տվել գրապահոցի հին ձեռագրերը՝ ասելով։ «Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաուրս զայստսիկ»⁷։

Եվ այս Հովհաննես Սարկավագն էր, որ հաղպատ-սամահինյան լեռնաստանների գազաթներից երկնեց իր մեծահույս մաթեմատիկական, տոմարագիտական, պատմա-

² Աճղ, էջ 198:

³ Աճղ, էջ 189:

⁴ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դար, Ա, էջ 414:

⁵ Կիրակոս Գառնակեցի, Պատմութիւն Հայոց, 1861:

⁶ Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, 1910, էջ 284:

⁷ Աճղ, էջ 198—187:

կան, մեկնողական երկերը, հոգեշունչ աղոթքները և մանավանդ «Առ ձագն...» խոհական, դրամատիկական երկարաշունչ քերթվածը: Այս քերթվածում տեսական ծանրակշիռ իմացությունների տեսակետից, առաջին անգամ, քննվում և լուծվում է միջնադարի ամենամեծ հարցը՝ բնության և դոգմատիզմի հարաբերության խնդիրը, և այն՝ հագուստ բնության: Տեսություն, որը ժամանակի համաշխարհային մտածողության ամենագլուխավոր կետերից մեկն է: Այստեղ էր, որ ծղկվեց նրա մյուս հանճարեղ միտքը, որով տեսության և փորձի հարաբերության մեջ առաջնությունը տրվում էր փորձին:

Անճնությունամբ գիտությանը, մանկավարժությանը և փիլիսոփայությանը նվիրված Հովհաննես Սարկավազի «դպրոցին» մեջ էր, որ առաջին անգամ, — ասում է հայագետ Արշակ Ալպոյանյանը, — հնչեց բացատրությունը մեր մեթոդի մը, որ իր ժամանակին 4—5 հարյուր տարի վերջ Պեդրոնի և Տեգարդի կարող գրիչներուն տակ քանաձևված, առաջադիմության գորավոր և արդյունաշատ նոր ազդակ մը պիտի ըլլար»⁹:

Ծանր օրեր տեսան Սանահինն ու Հաղպատը, Անին ու Հայաստանը: Հունական հալածանքներին հաջորդեցին սելջուկյան ավերածությունները, քարոքանդ անող տեղահանությունները: Հովհաննես Սարկավազն իր աղոթախցից երկնյի անհունին հայեց և մրմնջաց:

Տէ՛ր, տեսանես զվարատումն երամոց աղանեաց քոց՝ յորսոյդաց չարաց,
Տեսանես զգահալիծութիւն հօտի քո՝ ի
զագանաց շաղղակներաց,
Մի՛ անփոյոջ առներ, աղաչեմք,
Այլ հալածեա՛... ի վերայ մեր յարձակմունքս...¹⁰

Սրանք են մայր հայրենիքում ծնված այդ օրերի բանաստեղծության հայրենասիրական ջերմ տողերը, և դրանց բնօրրանը Հաղպատն է:

Հաղպատ-սանահինյան մենաստանները դարեր շարունակ եղել են ոչ միայն գիտության, կրթության, լուսավորության տարածման խոշոր կենտրոններ, այլև դրանցից անբաժան՝ գրչության ու մանրանկարչության զարգացման վիթխարի օջախներ:

Այստեղ էր, որ, աստիճանաբար, նվիրատվությունների, ընդօրինակությունների և շարադրանքների եղանակով հավաքվեցին մեծ քանակությամբ ձեռագրեր՝ պահանջ առաջացնելով, որ ստեղծվեին նաև հատուկ գրատուն-գրապահոցներ թե՛ մեկում և թե՛ մյուսում:

Անշուշտ, միայն ճգնալիտական կյանքի ու հոգևոր կոչումի նվիրված մարդկանց ջանքերով չէր, որ աճում էին ձեռագրերն ալտեղ: Նրանց թիկունքում կանգնած էին ժամանակի կարող մեծատունները և ժողովուրդը, որոնք արժեքավոր նվիրաբերություններ էին կատարում և՛ վաճակաճ հաստատություններին առհասարակ, և՛ գրատուն-գրապահոցներին: Հասկանալի է, որ դա միայն վաղից կարիքների համար չէր, այլ նաև գրչական պարագաներ հայթաթելու և տարբեր վայրերում ընդօրինակություններ պատվիրելու, գնումներ կատարելու համար: Իսկ, ինչպես հայտնի է, Հաղպատ-Սանահինը ոչ միայն, եթե կարելի է ասել, «արտահանում» էին ձեռագրեր, այլև «ներմուծում»՝ հավասարակշռելով իրենց և մյուս օջախների պահանջն ու առաջարկը: Հայտնի է, օրինակ, որ Գրիգոր Տղա կաթողիկոսը (12-րդ դար) Կիլիկիայից դիմում էր Հաղպատ-Սանահին միաբաններին (օրինակ՝ Գրիգոր Տուտեղյուդուն), խնդրելով «մաշկալաթ» (այսինքն մագաղաթ) հին գրքեր: Հայտնի է նաև, որ Ղրիմում, Երուսաղեմում, Կիլիկիայում և այլուր գրվում էին ձեռագրեր՝ Հաղպատի և Սանահինի համար:

Թե որքան ձեռագրեր են ծնվել Հաղպատում և Սանահնում, ստույգ տվյալներ չունենք: Խոսքը վերաբերում է լոկ պահպանվածին, իսկ պահպանվածը շատ չնչին մասն է ընդհանուր ամբողջության: Ոչ լրիվ տեղեկությունների համաձայն այժմ Հաղպատում գրված ձեռագրերից փրկվածների թիվը հասնում է ընդամենը չորս տասնյակի, իսկ Սանահինից փրկվածներինը՝ երեք տասնյակի¹¹: Ի՞նչ եղավ մնացածը: Ծանր ճակատագիր էր փհակված գրչական այդ մեծ հարստությանը: Դեռ վաղ ժամանակներում վաճակաճ միաբանները, օտար ասպատակություններից փրկելու նպատակով, ձեռագրերը տեղափոխում են մոտակա անդոդախո ձորի անմատչելի քարայրները:

Թե ինչպիսի նվիրվածություն և անձնագոհություն են ցուցաբերել սանահինցիներն ու հաղպատցիները ազգային այդ սրբություն-

⁹ Ա. Ալպոյանյան, Պատմություն հայ դպրոցի, Գաղթի, 1947, էջ 270:

¹⁰ «Սովիեր հայկական», 1884, ԺԷ, էջ 34:

¹¹ Այս տվյալներն առնված են Ա. Մաթևոսյանի «Հայկական գրչական կենտրոններ» մեծարժեք քարտաթղթի (Մատենադարան):

ները պահպանելու համար, կարելի է պատկերացնել հետևյալ օրինակով: Սահմանի հոշակավոր ավանդամատյանում («Հոթոլ») կարողում ենք. «Իսկ ի ժամանակս առաջին» բռնադատացն շաղաթայիցն եկեալ ի ձորն Ստորդեաց վասն աւերելոյ վանորէիցն Հաղպատու և Սահմանայ և Կանուրջերացն քանդելոյ, ի նոյն զարացն յիմաստ մի առաջ գնացեալ հասեալ Սահմանին, ի այն տեղն, որ երեք կրանաւորք և երկոտասան սարկաւագունք վանից անաթն, սուրբ ճշանք և ըզգեալ տարեալ ի արևմտեան կողմն պահեալ և եկեալ պատահեալ ի մէջ տափին անաւրէն զարացն. բազում նեղութիւն ետուն, թէ սրբութեանց տեղիսն ճշանց տան, և միարանքն ոչ կամեցան զսրբութիւն գերի տալ, և անաւրէնքն սուր եղեալ մահաւանդեցին երեք կրանաւորքն և երկոտասան սարկաւագ: Եւ յետոյ առաջնորդք երեք խաչ կանգնեցին ի վերայ գերեզմանացն, որ մինչև ցայժմ ասի երեք խաչ...»¹²:

Փաստերից երևում է, որ Հաղպատ-Սահմանի քարայրներում ձեռագրեր և հարստություններ են պահպանվել ոչ թե օրերով, ամիսներով, տարիներով, այլ դարերով: Դեռ հուսալի օրերի չհասած և պահուստները ետ չերաժ՝ տեղացիները, նորանոր աղետների պատճառով, դրսում կուտակված հետագայի հարստություններն ու ձեռագրերը տարել և պահել են ուրիշ քարայրներում: Եթե հայտնի է, որ սելջուկ-թաթարական արշավանքների ժամանակ է տեղի ունեցել ձեռագրերի հիմնական հավաքածուի տեղափոխությունը, ապա մեր Մատենադարանում գտնվող Սահմանի ավանդամատյանը, վկայում է, որ ինքը քարայր է մեկնել 18-րդ դարում, որովհետեւ ինքը ծնված է 17-րդ դարում: Այդ մատյանը քարայրից դուրս է բերվել 18-րդ դարի վերջերին և այդ մասին ունի հատուկ հիշատակարան: Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը գրում է, թե ինչպես ինքը գալով Սահմանի՝ առաջում է «զՍահմանեցի Մուրատենց Առաքել վարդապետն վասն որոնելոյ գրեացն, ի յայրս նորին քացեալ յԱջառաց յայն ընդ բազում գրեանց և զանկակաց գրեալ էր և այս Բեթթոլ գիրքս, որ ունի զօրինակ ամենայն հարկաւոր թղթոցն նոյն վանիցն»¹³: Ստանալով այդ ձեռագիրը՝ նա վերստին նվիրում է Սահմանի վանքին, որտեղից և այն հետո տեղափոխվում է Թիֆլիս, ապա գալիս Մատենադարան:

Որ, իրոք, դրսի աշխարհում, այսինքն՝ Հաղպատ-Սահմանի մեհաստաններում նո-

րից կուտակվել էին ձեռագրեր, այդ մասին և վկայում են Սահմանի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը 17-րդ դարի կեսերին՝ գրելով. «Եւ ... Սարգիս եպիսկոպոս... ճատար ի յսթոս Սահմանիս...»: Ապա նա պատմում է իր մեծամեծ շինարարական, բարենորոգչական աշխատանքների մասին, այդ թվում նաև ձեռագրերի գնման և նորոգման. «Եւ Մովսէս գիրք, (իմա՝ Մովսէս Խորենացի), Յովաննէս գիրք (իմա՝ Հովն. Դրասխանակերտցի), Միխայել գիրք (Միքայել Ասորի), Վարդան (Արևելցի), Ստեփաննոս (Օրբելյան), Ռըստակէն (Լուստիկերցի), Կիրակոս (Գանձակեցի) և գիրք, Բ կանոնք, անտարանի լուծմունք, շարակնոց, աղթարացոյց գնեցի... և ետու Ս. Աստուածածնի դռան վախմ, և այլ բուն աղոթարարան, և այլ ժամագիրք գնեցի, և այլ՝ հին գրեւանք նորոգել ետու, որ ոչ գոյ համար»¹⁴:

Նույն դարի երկրորդ կեսի մասին կա տեղեկություն, որի համաձայն Հաղպատում Մխիթար իշխանը հանդիպում է քաղմաթիվ ձեռագրերի. «Գտանէ,—ասում է պատմիչ— Հովհաննէս Լրիմեցին,—գերկոսին վերնախորանս սուրբ Գրիգոր եկեղեցոյ լի անհամար գրչագիր և երկաթագիր հնագոյն մատեանք, նոյնպէս և զչորեային խորանս միջնայարկի զանգակատան»¹⁵:

Հաղպատ-Սահմանի քարայր-պահոցների մասին ուշագրավ տեղեկություն է թուրկ վրաց Վախուշտի արքայազնը իր «Վրաստանի աշխարհագրության» մէջ: Ի միջի այլոց, նա այն սխալ պատկերացումն է ունեցել, թե «Հաղպատը և Սահմանի կառուցվել են վրաց թագավորների կողմից», որոնցից իրոք թե հետագայում անցել է հայերին: Գալով ձեռագրերի պահոցների՝ նա գրում է. «Այստեղ, բարձր ժայռի մէջ գտնվում են քաղմաթիվ այրեր, իսկ նրանց մէջ պահպանվում են մեծ թվով հին ձեռագրեր, որոնք սակայն չեն կարող օգտագործվել, որովհետեւ անհնար է մարդուն հասնել այդ քարայրները»¹⁶:

Վախուշտին, որ գրել է այս տողերը, հավաստում է, որ մինչև 18-րդ դարի առաջին կեսը քարայր-պահոցներն անձեռնմխելի են եղել:

Բայց ահա գտնվում են մարդիկ, որոնք կարողանում են թափանցել այդ անմատչելի քարայրները և այնտեղից հանել ձեռագրերն

¹² Ձև. № 8150, թերթ 91ա—92բ:

¹³ Հովն. Լրիմեցի, Պատմութիւն հռչակավոր վանիկ Հաղպատայ ս. Նշանին, Վիեննա, 1885, էջ 120—121:

¹⁴ Вахушты, Географія Грузии, Тифлис, 1904, стр. 33.

¹⁵ Ձև. № 8091, թերթ 117ա:

¹⁶ Անդ, թերթ 1բ:

ու այլ հարստությունները: Այդ մասին նույն Հովհ. Ղրիմեցին պատմում է, թե ինչպես Հալսլայաի ստաջնորդ Աբրահամ Թիքերտալոյցին և ում բախտախնդիր Պետրոս Տիրացու, դուրս են հանում քարայրների ձեռագրերը և դրանք, ինչպես նաև վանքում գրտնդվող վերոհիշյալ ձեռագրերը, կարճ ժամանակում անհոգաբար շտայլում են, վատնում, ցրում, իսկ նրանց հին, մաշված, թերթահան, կազմահան օրինակները հրկիզում: «Ժողովեալ առհասարակ և դիզեալ հանդէպ զանգալատան դրան» իբր տասն կամ երկուտասան ոտնաչափ քարձրութեամբ,—պատմում է նույն հեղինակը,—հուր էարկ և այրեաց իբրև անպիտան»¹⁷:

Այդ, եղել են նաև այսպիսի հոգևորականներ: Եվ դրանցից հետո էր միայն, որ քարայրներում դեռևս մնացած ձեռագրերի բախտով սկսեցին հետաքրքրվել Հովսեփ արք. Արղությանը, Սարգիս արք. Զալալյանը, Աղեքսանդր Երիցյանը, Գլուտ քահանա Աղանյանը և ուրիշներ՝ հասնելով մասնակի արդյունքի:

Հաղպատ-Սանահինի ձեռագրերի ոչնչացման հիմնական պատճառը, սակայն, եղել են սելջուկյան, մոնղոլական, պարսկական, կովկասյան լեռնցիների և ուրիշ ասպատակողների քարքարոսությունները: Նրանք կա՛մ հրկիզում և ոչնչացնում էին այդ արժեքները, կա՛մ գերեվարում, որպեսզի հետո ծանր գնով վաճառեին հայերին:

Նման արշավանքներից մեկի մասին Սարգիս վարդապետը գրում է. «Յարշառան անդ Մահմատայ արքային պարսից ի վրաստանի գերել նորա զՏիֆլիս» ոչ միայն գրությունը և մատենը յիշատակարանաց վանսց, այլև բովանդակ անօթք և կայք նորա ի քաղաքի անդ գոլով՝ համանգամայն յափշտակեալ կորան»¹⁸:

Ըստ երևույթին այդ հարստությունները նախապես փոխադրված են եղել Թիֆլիս՝ պահպանության: Երևի հենց այդ ժամանակ, գուցե և ձեռագրերի հետ Հաղպատից Թիֆլիս է տեղափոխվել նաև Սալաթ-Նովան և մի քանի օր հետո Թիֆլիսի ավերման ժամանակ նահատակվել:

Կորած ձեռագրերից է Հաղպատի վանքի ավանդատալյանը կամ «Քոթուկը»: Այն ստեղծված է եղել վաղ ժամանակներում, և նրա մեջ արձանագրված են եղել արքայական ու անհատական բոլոր նվիրատվությունները, համապատասխան իրադարձությունները, դեպքերը: Վկայված է, որ այն

1795 թվականին, Աղա Մահմեդ խանի նշված արշավանքի ժամանակ, «կորցի և անհետ լինի ընդ այլոց կայից մեծաստանիս... Քանակութիւն նորա, ըստ պատմելոց ականատեսից, ի չափ մեծութեան Աստուածաշունչ մատենի. տուփ նույա... շղթայագործ արծաթի պահպանակօք, յորում կային արձանագրեալ անուանք և ընծայք և պատճէնք հրովարտակաց և ձեռնադրութեանց քաղում թագաւորաց և իշխանաց Հայոց և Վրաց, և այլ քազմագան իրք և բանք պիտանիք...»¹⁹:

Ասեմք, որ նման մատյան չունենք առհասարակ. եղածը Սանահինի «Քոթուկն» է, որը շատ աղքատիկ ու անշուք է այս կորածի համեմատությամբ:

Վրաց Վախուշտի արքայազնի վերոհիշյալ աշխատության 1804 թվականի հրատարակության մեջ, քարայրներում պահվող ձեռագրերի մասին խոսք եղած տեղում, տրված է հրատարակողի հետևյալ ծանոթությունը. «Վախուշտիի հաղորդումը (ձեռագրերի մասին) ճշմարտվեց. այդ քարայրներում գտնված մի քանի քարացած ձեռագրեր հանձնրված են գիտությունների ակադեմիային. իսկ «Իվեքիա»-ի անցյալ տարվա դեկտեմբեր ամսվա համարում տպված հաղորդման համաձայն նորից գտնված են շատ ձեռագրեր»:

Մեր Մատենադարանում այժմ կան մի քանի մեծարժեք ձեռագրեր՝ հանված այդ սյրերից: Դրանցից արդեն հիշեցինք Սանահինի հուշակալոր «Քոթուկը»: Այդպիսիներից են նաև ամբողջապես քարացած ձեռագիրը և ուրիշներ:

Վերջերս Մատենադարանից հատուկ մի արշավախումբ մեկնեց և այդ քարայրներում («Աչառաց այր», «Զառնի այր», «Պառնի այր», «Ծակ այր»), հայտնաբերեց 8—15-րդ դարերին պատկանող խիստ քայքայված քազմաթիվ ձեռագրերի քեկորներ, կազմի տախտակների և կաշիների մնացորդներ, որոնք տեղափոխվեցին Մատենադարան²⁰:

Հաղպատ-Սանահինյան մատենադարանները, այդուամենայնիվ, իրենց գոյությունը պահպանեցին մինչև 1930-ական թվականները: 1931-ին այդտեղից Մատենադարան են տեղափոխվում հազարամյա գոյատևության վերջին փաստական վկաները, ընդամենը 45 ձեռագիր (12-ը՝ Հաղպատից, 33-ը՝ Սանահինից): Դրանցից հետո նրանք, որպես մատենադարաններ, ավարտում են իրենց պատմական պանծալի դերը: Պետք է ասել, սակայն, որ նրանք հիմա էլ որոշ տուումով

¹⁷ Աճ, էջ 128:

¹⁸ Հովհ. Ղրիմեցի, Նշված աշխ., էջ 122—129:

¹⁹ Հովհ. Ղրիմեցի, Նշված աշխ., էջ 45—46:

²⁰ Բանբեր Մատենադարանի, № 5, 1960, էջ 535—538 (11. Քաղաքային մարտկոցում):

դեռ չեն «հանձնվել»: Խոսքը քարայր-պահոցների մասին է, որոնց խորհրդավոր խորշերում այսօր էլ շատ մասունքներ, ով գիտե, գուցե և քաղմայթիվ ամբողջական ձեռագրեր կան:

Հաղպատ-Սանահինի ձեռագրական ֆոնդերը, կազմված լինելով հին ձեռագրերից, իրենց մեջ ունեցել են նաև խիստ հազվադեպ ունիկոմներ, որոնցից է, օրինակ, «Թարգմանչագիր» կոչված սաղմոսարանը, որի ծնունդը կապվում է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց աշակերտների հետ: Այդ ձեռագրի հայտնաբերողը եղել է Հովհաննես Սարկավազը: Նշված ձեռագրի հըռչակը ժամանակին այնքան մեծ է եղել, որ Հովհաննես Գառնեցիին ոտքով մեկնել է այնտեղ և ընդօրինակելով՝ տարել Գառնի: Այդ ձեռագրից նաև շատ ուրիշներն են օգտվել: Մեծ հույակ է ունեցել Սանահինի «Մաշտոց»-ը: Արվեստի բացառիկ նմուշ է 1211 թվականին ստեղծված Հակոբ Գրչի և Մարգարե Նկարչի Ավետարանը: Այստեղ է, որ խորանների սրբազան վերամասերում տեղ են գտել իշխանական ծագում ունեցող մի աղջիկ և մի տղա՝ ձեռքին մեծ ձուկ: Դիմացից, ավետարանական համաբարբառների միջից, լսվում է աշխարհիկ մի առօրյա ձայն՝ հասնելով՝ «ասես մինչև մեր ականջը. «Ծերանի՛կ, քանի գաս՝ ձուկն բեր»:

Ըստ երևույթին Ծերանիկը կամ Ծերենիկը ոչ այլ ոք է, քան Սանահինի այն մեծահարուստ Ծարենիկի հաջորդը, որի մասին 1152 թվականի արձանագրությունն ասում է. «...տուաք գտուրք Սարգսի տանն՝ Սարգսի՝ Ծերենկանն որդոյն»²¹: Եթե այդ, ապա նշված ձեռագրում առկա են իրական դիմապատկերներ:

Հետաքրքիր կլինեղ իմանալ, թե որն է ելել տեղում ստեղծված առաջին ձեռագիրը: Բարեբախտաբար ունենք համապատասխան վկայություն: Սանահինի «Քրթուկում» արտագրված է նրա հիշատակարանը. «Էս անարժան... գրիչս Սիմեան... ՆԻԱ (թուականին) ի նորաշէն վանքս, որ կոչեցեալ Սանահին, հրամանաւ հար իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս շինութեան ամբ Զ...»²²: Այստեղից էլ՝ վանքի շինության թվականը 972—8—966 կամ 987, նայած, թե տոմարական ճշգրտված հաշիվները ի՞նչ ցույց կտան: Ինքը՝ ձեռագիրը գրված է եղել 972 թվականին, Սանահինի վանքի կառուցման 6-րդ տարում: Լորած է նաև այս ձեռագիրը:

Վերևում ակնարկ արվեց մայ կնոջ դերի մասին Սանահին և Հաղպատ մենաստանների հիմնադրման և վանքերի կառուցման առնչությամբ: Դա լինելով հայ իրականության բնութագրական կողմերից մեկը՝ յուրովի արձագանք գտավ Լուսիա ձուրերում և անարվանդակներում: Խոսքովանուշի օրինակով այդ կողմերում, ազնիվ նպատակներից մղված, նորանոր տիկիներ և օրիորդներ երևացին, նրանցից մեկը (Վանեհի) մի ամուր կամուրջ կապեց Հաղպատ տանող ճանապարհի գետնացի վրա, մյուսը (Մարիամ) հիմնեց Հաղպատի Կյուրիկյան սրբալատոհմի տապանատունը, երրորդը կառուցեց ս. Աստվածածնի եկեղեցին, որը հաճախ նրա անունով կոչվում է Խաթունալեն, մի ուրիշը «ուկենմած» ձեռագիր ընծայեց վանականների, և յուրաքանչյուրն իր ուժի սահմաններում նպաստեց ընդհանուր գործին:


Հաղպատ-սանահինյան մենաստանները, նվիրված լինելով գրչության, դպրության, լուսավորության, գիտության նպատակներին, միաժամանակ հանդիսանում էին քաղաքական կյանքի նեղ կապված կենտրոններ: Չմոռանալ, որ դրանք հիմնադրված և հարստացված էին թագավորական ընտանիքների կողմից: Այդտեղ էին հաճախ թաղվում երկրի կյանքում մեծ դեր խաղացած գործիչները՝ ավելի քան պատկառելի դարձնելով սրբավայրերի հեղինակությունը: Ըստ երևույթին, այդտեղ են պահվել նաև թագավորական հին ու նոր զանազան ձեռագրեր, հրովարտական և թղթեր: Այդ մասին է հուշում մեր Մատենադարանի № 7777 ձեռագիրը, վկայելով, թե Հովհաննես Սարկավազը վերոհիշյալ թարգմանչագիր սաղմոսարանը գտավ «ի յարկեղ սուրբ վարդապետացն և թագաւորացն»: Հայ գորավարները, ռազմի դաշտ մեկնելուց առաջ, հաճախ, այստեղ էին գալիս երդվելու, աղոթելու և օրհնությունն ստանալու:

Հովհաննես Թումանյանը մեծ արարողություններ է նկատի ունեցել՝ «Անուշի» առաջին տարբերակում՝ գրելով.

Այս ձորերումն էր, որ Բագրատունին
Բախտի հետ խաղաց յուր խաղը վերջին.
Սեզ Տուտեղդին, Օհան Օձնեցին
Հայրենյաց պաշտպան սուսերն օրհնեցին:

²¹ Կ. Պաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1857, էջ 88—100:

²² Ձեռ. № 8081, թերթ 18բ:



ՀԱՆՐԱՍԻ ԵՒՆՎԵՐԻՆ ԵՒ ՏԱԳԱՏՈՒԴԱՆԸ (X—XIX դդ.)

(Նկարիչ՝ Գր. Ավագյան)

Հաղպատ-Սանահին մենաստանների հայրենասիրական աշխատանքների մեջ առանձին տեղ էր գրավում դավանանքի անխտոր ընթացքի պահպանությունը: Ինչպես երևում է, այստեղ էր տեսական այն անխախտելի ամրոցը, որին բախվում էին հունամոլ գործիչները և Բյուզանդիոնի գործակալները Անիի անկման նախօրյակին: Դրա փայլուն վկայությունն է քաղաքական առումով կասկածելի Պետրոս Գետադարձ կաթողիկոսին՝ Դիոսկորոս կաթողիկոսով փոխարինելու միջոցառումը. իսկ վերջինս Սանահինցի էր: Ըստ երևույթին, դեպքերն այլ ընթացք կրատանային, եթե Գետադարձի կողմնակիցները նորից չհեռացնեին Դիոսկորոս Սանահինցուն և տեղը չբազմեցնեին Պետրոս Գետադարձին: Շատ չանցավ այդ օրից, երբ վերջինս հույներին հանձնեց քաղաքի մուտքերի բանայինները: Դիոսկորոսի առողջ և անդալաճան վարքն էր պատճառը, որ իր միջավայրում հա մինչև վերջ հորջորջվեց կաթողիկոս:

Անեցիներն էլ, որ մի օր, նրա դեմքի կաթողիկոսական քողո պատռելով, գահնկեց էին արել նրան, ըստ երևույթին, շուտով զղջացին: Պահպանված մի գրույցի համաձայն, Անիի բնակիչները այդ դեպքից հետո Անիին հասած կոտորածների ու ավերածությունների հիմքում տեսնում էին Դիոսկորոս կաթողիկոսի գահագրկումը: Ուստի նրանք մարդ ուղարկեցին Սանահին՝ նրա գերեզմանից մասունքներ գողանալու և Անի տանելու, որպեսզի անեցիները զղջալով աղերսեին ու հալցեին նրա օգնությունը, «զի թերևս թողութիւն արասցէ քաղաքիս»: Սանահինի առաջնորդը, իմանալով այդ մասին, արգելեց նշխարներ տեղափոխելը՝ ասելով. թող «ժողով բազմութեան բնակչացն Անույ այստ գայցեն, և մեք ընդ նորա պաղատեսցուք՝ խնդրել զթողութիւն»²³:

Ջրույցը՝ զրույց, բայց այս զրույցի հիմքում ընկած է Դիոսկորոսի քաղաքական հալացքների պաշտպանության գաղափարը:

Երևում է նաև, որ այս նույն միջավայրի այնքան անվանի գործիչ Գրիգոր Մագիստրոսը գայթակղվել և հեռացել էր հաղպատ-սանահինցիներից՝ մտնելով Պետրոս Գետադարձի կուսակիցների շարքը: Սանահինցիները չեն մոռազել այդ և կշտամբական նամակ են ուղարկել նրան՝ Հայոց Միջագետք: Գրիգոր Մագիստրոսը, որ արդեն զղջացել էր, տեսնելով հույների խաբեությունը, նամակ է գրում, հավատացնելով, որ երբեք չպիտի մոռանա նրանց, ինչպես Ալև-

ոքիկ, որք վարեալք էին ի հաբելովն ուխտելն առ յԵրուսաղէմ: Ուշ էր արդեն: Սանահինը, սակայն, կայուն էր, արդարադատ ու ճշմարիտ՝ իր լեռնային անցված բարձունքների նման:

Կկամեմայինը գնահատական խոսք ասել նաև Հաղպատ-Սանահին այն դերի մասին, որը վերաբերում է Հյուսիսային Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում գտնվող հայ բնակավայրերի ազգային կյանքը հրկելու և «հովվելու» բնագավառին: 18-րդ դարի մի վավերաթուղթ տալիս է մի հազվագյուտ ցանկ, որն օգնում է տեսնելու հայ ժողովրդի էթնիկական լայնասփյուռ այն սահմանները, որոնց վրա իր հոգևոր իշխանության պահպանիչ լեներն էր տարածել Հաղպատը: Ըստ այդ վավերաթղթի Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի թագավորները 11-րդ դարում Հաղպատի իրավունքների տակ են դնում հայաբնակ և լուսավորչական հետևյալ թեմերը (անունները մասամբ աղավաղված են). «Ալստեանցն, Տաշիրն... Լոռի... Բազանց տաղան... Խորանուտակուն... Հայունույ և Ծանկունույ տախտն... Օձնու տախտն... Թիֆլիզ քաղաքն, Վեր[ի]ն Գօրի, Սամշվերդեն, Դմոնիսն և Բուդամու ձորն... Վերի Ցիելվան, Թամարշեն, զՕրինսն, Չիխորն, Սամծուերն և Մծովերթն... Բրինձն, Նաբաստելն... Սուրամն, Ղօզիցին, Ատենն, Դեղումն, Կախթն, Ծաքին, վարխրոանն, Ջուրութաթի Ծայրն, քոյր Սուրխեթայ տանն, Նախե Դուռն, Ծապալայն, Տալաւերն... Ախալքալաքն, Սամցխեն, Իմօզլին (Թմոզլին), Մաջալախօն, Ջալպեն, Իմերեթ, զԱրդանուճն, Բուրսուեանն, Քօրուեանն, Սանտալեն, Թատումն, Աժողվերն... Տայօղն, Գօրականն, Զորագեղն, Կայեանն, Կայեձօնն, Աղեստաֆեն, Խօջարազարն, Մահկանն, Գաբեն, Ծամբօրն, Ծաքեն... Գաւազենն, Բարամն... Մանասն... մինչև ի Վօդամած՝ իւրեան շրջակայ գիւղօրէիւքն» ու նրանց թեմերով²⁴:

Անշուշտ, նշված ոչ բոլոր վայրերի ամբողջ բնակչությունն է եղել հայ և դրանք ոչ բոլորն են ի սկզբանե եղել հայապատկան բնակավայրեր ու գավառներ, բայց որ այդպիսից զգալի տեղ են գրավում նշված ցանկում, վերջինս կանկալիք: Ուշագրավ է նաև Ատենի կոչված թեմը, որ մինչև օրս էլ կանգուն է հայոց ճարտարապետական կոթողներից մեկը՝ կառուցված 7-րդ դարում հայ ճարտարապետ Թողոսակի գլխավորությամբ: Պահպանված հայագիր և հայաբառ հիշատակարանն ասում է. «Եւ Թողոսակ շինող սըր-

²³ Հովհ. Ղրիմեցի, Նշված աշխ., էջ 258:

²⁴ «Լուսնայ», 1898, Ա., էջ 260—264:

բոյ եկեղեցոյս»²⁶։ Նման այդ թեմի վրա է, որ իշխել է Հաղպատը, որպէս մայ լուսավորչական թեմի։

Նման խնդիրները մեզ տանում են դեպի իր ժամանակի հայ-վրացական հարաբերությունները, որոնք միշտ էլ եղել են քարի-դրացիական։

Հայ-վրացական քարեկամական փոխհարաբերությունները՝ կապված Հաղպատ-Սանահինի հետ հինգ են գալիս։ Պետք է ասել, որ հենց սկզբից Հաղպատն ու Սանահինը հարգայից վերաբերմունքի են արժանանում նաև վրաց թագավորների և իշխանների կողմից։ «Ոչ միայն թագաւորք Հայոց, — գրում է Հովհաննէս Արքայի, — այլև թագաւորք Վրաց... պատուի կալան միշտ զայս աթոռ»։ Որպէս օրինակ մա հիշում է «Դավիթ որդի Գեորգեայ» արքային, «Գեորգի քաջն՝ հայր Թամարայ թագուհոյն», իրեն՝ «Թամար թագուհոյն», և ուրիշների²⁷։

Այդ քարեկամության բազմաճյուղային դրսևորումներից մեկն է Հովհաննէս Սարկավազի և Դավիթ Վրաց թագավորի մտերմությունը։ «Քարթլիս Տխովրեբա» երկի ներմուծման հեղինակը գրում է, թե Վրաց Դավիթ արքան, որ շատ էր սիրում հայերին (և կիցն էլ հայ էր), գալիս է առ ոտն «հոռետուր վարդապետի ի Հաղպատ»՝ Սարկավազ անուն խոստովանէր մեա զյանցանս իւր, և կորացուցեալ զպատուական գլուխն՝ ալորհմէր ի մեանէ. և նստէր ընդ մեա և փարէր զպարանոցաւ նորա։ Եւ մա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս. ի քաց գնա յիւնէն, զի մի՛ աշխատ լիցիս»։ Եւ թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յիւնէն, հայր պատուական»։ Եւ (Հովհ. Սարկավազը)... զայս ասէր՝ եղեալ զձեռս ի վերայ զլիտյն. «Գտի գԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով աւծի գնա»... Եւ զուարճանայր արքայն, և գովէր զգեղեցկատիպ թարգմանութիւնն Հայոց»²⁷։ Այդ թարգմանությունը իսկապէս, հռչակավոր էր, որովհետև նկատի ուներ Հաղպատի վերոհիշյալ թարգմանչագիր Սաղմոսարանը՝ գտնված Հովհաննէս Սարկավազի ձեռքով։ Ուշագրավ է նաև այն պարագան, որ Վրաց Դավիթ արքան այնքան լավատես է եղել

մայրց լեզվին և դպրությանը, որ նկատել է այդ Սաղմոսարանի ընտիր թարգմանություն լինելը։

Հաղպատ-Սանահինում, դարեր հետո, եղել է մաև Վրաց Հերակլ Երկրորդ թագավորը և 1780-ական թվականներին Հաղպատում վերահաստատել մրա՝ կովկասահայության վրա ունեցած հին իրավունքները։ Հասկանալի է, որ մա այդտեղ պիտի հանդիպած լիներ մաև իր վաղեմի քարեկամին և պալատական երգչին՝ Սայաթ-Նովային (արդեն տեր Ստեփանոս), որն այդ ժամանակ Հաղպատում տխուր կատակով մրմնջում էր.

Հաղպատի լուսարար Սայաթ-Նովեն իմ,
Մե կանթեղս վառելու ձեթ չունիմ...

Առհասարակ Հաղպատն ու Սանահինը հանդիսացել են արքայական մեծաստաններ, և նրանց հետ ավելի շատ թագավորական առօրյա է կապված եղել, քան որևէ այլ մեծաստանի հետ։

Կիլիկյան հայ թագավորներն անգամ, հետվից հետո, չէին մոռանում Հաղպատն ու Սանահինը։ Հայտնի է, օրինակ, որ 1271 թվականին Լևոն Երրորդ թագավորը, իր օժանդակով, Հաղպատին է նվիրում շատ ընծաներ, այդ թվում մա «ընտիր գրչագիր օրինակ մի Սաղմոսամեկնչի կամբրոնացոյ»։

Հիրավի, մեծ և հարուստ է եղել Հաղպատ և Սանահին մեծաստանների առօրյան։ Նշուածն ապրել են հազարամյա մի փառահեղ ու փոթորկոտ կյանք, որի մշանաբանն են հանդիսացել հետևյալ պատգամները. հայրենիք, ազգային անխտոր դավաճանք, լուսավորություն, մշակույթ, ժողովուրդների քարեկամություն և խաղաղություն։ Այդ հայրենապահական պատգամներով է, որ նրանք անցել են իրենց դժարին ուղին՝ ձգված 10-րդ դարից մինչև 20-րդ դարը։

Պահպանված տոհմի ներկայացուցիչներից մեկը, դեռևս 1080-ական թվականներին մի նվիրաբերության առթիվ, Հաղպատի տեղավայրերից մեկի մասին գրել է. «զԱրծուէքոյնն ի Հաղպատ»։ Հիրավի արծվաբոյն, այդ թվում և՛ Հաղբատը, և՛ Սանահինը, որոնց ճարտարապետական սրբազան կամարների տակ դարեր շարունակ ապրեց և հզորացավ, մաքառեց ու դիմացավ հայ ժողովրդի ազատասեր և արվեստասեր ոգին։

Մենք հպարտ ենք այդ սրբարաններով։ Աշխատենք միայն արժանի պահպանել ու մեկնաբանել լինել այդ լուռ կոթողների։

²⁶ Լ. Մելիքսեթ-Քեկ, Տեղեկագիր, 1845, № 5, էջ 4։

²⁷ Հովհ. Արքայի, Նշված աշխ., էջ 84։

²⁸ Բարթիս ցխովրեբայի... հին հայերեն թարգմանությունը (հայերեն և վրացերեն), Թբիլիսի, 1958, էջ 255։



ԱՐՏԱԾԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ,

ՍԱՆԱՀՆԻ ԵՎ ՀԱՂՊԱՏԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Սանահինի և Հաղպատի վանքերը կառուցվեցին 10-րդ դարավերջում, Բագրատունիների թագավորության վերելքի շրջանում՝ նրա ներկայացուցիչների կողմից, որպես մշակութային կենտրոններ: Այդ եմ ապացուցում ոչ միայն Ռիշյայ ուխտերի առաջին առաջնորդներ Հովհաննես գիտնականի և Սիմեոն վարդապետի գիտության ու մշակույթի մարդ լինելու հանգամանքը, այլև նրանց դարավոր գործունեությունը՝ իրենց ուսումնական երկրում, մատենադարաններում, գրչության կենտրոններում:

Միջնադարյան ամեն մի վանք ու դպրոց միաժամանակ նաև գրչության կենտրոն էր, ուր գրչի և նրան օժանդակող մարդկանց համատեղ և ծանր աշխատանքով ձեռագրեր էին ստեղծվում: Ձեռագիրը, որի մեջ մարմին էր առնում մենքության գիրը, գիտության և դպրության ճիմնական զենք լինելուց բացի, միաժամանակ, պետականությունը կորցրած հայ ժողովրդի ազգապահպանության անփոխարինելի և անդափանց զենքը մընաց, սկսած իր ստեղծագործության առաջին օրից:

Այդ մատյանները, որոնք իրենց մեջ ամբարում էին ոչ միայն Բայ ժողովրդի մտածողությունն ու պատմությունը, գրչության կենտրոններում բազմացվում և փոխանցվում էին հաջորդ սերունդներին: Սակայն այդ կենտրոններում միայն արտագրելով չեն զբաղվում, այլ նաև ստեղծագործում էին, մշակում գրչության արվեստը, մանրանկարչության արվեստը, ճիմում մատենադարաններ: Սրանք մի կողմից պահպանում էին ձեռագիրը, մյուս կողմից՝ այն տրամադրում ուսման և ընթերցանականության:

Գրչության կենտրոններում ձեռագրերն ստեղծվում էին հմուտ և գիտնական վարդապետների ու գրչապետների հսկողությամբ:

Նրանք անպայման սրբագրվում էին, ստուգվում, ուղղվում, այլապես անխուսափելի սխալները փոխանցվելով ու կոտակվելով, կաղավաղեին բառը և բանը: Իսկ ձեռագրերի վրա ամբողջ ժողովուրդն էր դաստիարակվում:

Ձեռագրերը գեղեցիկ և հաճելի դարձվելու համար նկարագրվում էին: Նկարները, զարդանկարները և զարդագրերը, սակայն, միայն հաճելի տեսք ստեղծելու համար չէին, նրանք քացահայտում էին ընդօրինակվող ձեռագրի թվանդակությունը, նպաստում այն ավելի հեշտ ու ճիմնակող ըմբռնելուն: Արվեստի գործ էր նաև կազմը, երբ գիրքը ամփոփ ու անվտանգ պահելու պարտականությունից զատ, զարդարվում էր դրոշմազարդերով, թանկարժեք մետաղներով ու քարերով:

Սանահինն ու Հաղպատը հայ գրչության նշանավոր կենտրոններից են, որոնք տվել են գիտնական վարդապետների, մատենագիրների, հմուտ գրիչների, վարպետ ծաղկողների նշանավոր ներկայացուցիչներ, որոնց մտքի, գրչի ու վրձնի արդյունքը դուրս է եկել իրենց վանքերի շրջանակներից և համահայաստանյան նշանակություն ստացել: Հայ ժողովրդի և նրա մշակույթի դառն պատմական ճակատագրից չէին կարող խուսափել մշակույթի նրա խոշորագույն կենտրոններ Սանահինն ու Հաղպատը, որոնք զարգացման փառավոր շրջանների հետ ունեցել են անկման ու անհայտության դարեր:

Զնայած այդ հսկայական կորստին, նրանցից մեզ են հասել մատենագրական երկերի, գրչական, մանրանկարչական, կազմարարական արվեստի հիանալի նմուշներ, որոնք

գաղափար են տալիս Հաղպատի և Սանահինի հոգևոր կենտրոններում ծաղկած վշակույթի մասին: Սանահինի Քեթուկ կոչված ավանդամատյանը¹ և վերջերս լույս տեսած Հովհաննես Ղրիմեցու Հաղթա վանքի պատմությունը² քավականին նույն են պարունակում հիշյալ կենտրոնների վերաբերյալ: Այս բուրիճ լրացնում են վանքերի արձանագրությունները, որոնք խնամքով հրատարակել է Կ. Ղաֆադարյանը³: Օգտակար աշխատանք է Հ. Ոսկյանի Սանահինի և Հաղպատի վանքերին նվիրված ուսումնասիրությունը⁴:

ՍԱՆԱՀԻՆԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Սանահինի գրչության կենտրոնի պատմությունը սկսվում է վանքի հիմնադրումից վեց տարի հետո, 972 թվականին, Սիմեոն գրչի ընդօրինակած հիշատակարանով: Այն ոչ միայն Սանահինի գրչության կյանքի ծաղկման մասին մեզ հայտնի առաջին վկայությունն է, այլ վանքի հիմնադրման և հարակից հարցերի վերաբերյալ ժամանակակցի և ակամատեսի հավաստի վկայությունը, որ գրված է «Սանահինի քեթուկ» կոչված ավանդամատյանում⁵:

Ձեռագիրը մեզ չի հասել: ԺԷ դարում հիշատակարանը մոծվել է Ավանդամատյանում, հաստատելու Սանահինի հիմնարկության թվականը. «և այլ ևս բերից մեծապատիւ վրկայ զՍիմեան քաջ քարտուղարն Սանահնու, որ զսրբութիւն Աստուածածնիս հիմնարկութեանն և աւարտմանն ակամատեսն էր եղեալ, որ ի ժամուն յայնմիկ գրել զգիրս Բարադի Կեսարացոյ յաղագս ճրգնաւորաց»⁶:

Հիշատակարանից երևում է, որ Սանահինի վանքը կառուցելիս վանահայրն էր հայր Պողիկարպոսը, որին Հ. Ոսկյանը նույնագրում է Կամրջաձորի վանքի կառուցողի հետ⁷: Սա 10-րդ դարի 2-րդ կեսի սկիզբներին Կամրջաձորի վանքը կառուցելուց և կարգավորելուց հետո, 986 թ. ավարտում է Սանահինի վանքի կառուցումը և վախճանվում

970 թ.: Նրան հաջորդում է հայ Գրիգորը: Այդ նույն ժամանակ Սանահինի առաջնորդ է հիշվում Հովհաննեսը: Ինչպես տեսանք, 972 թ. Սիմեոնը, «հրամանս հար իմոյ Յովհաննիսի» ձեռագիր է ընդօրինակում, իսկ Ասողիկը համարում է «առաջնորդ Սանահինի» Յովհաննես գիտնական⁸: Հովհաննես գիտնական առաջնորդին Սանահինի հիշյալ առաջնորդներից հետ և առաջ հարմարեցնելու հարկ չկա, նա եղել է Սանահինի րաբունապետ թե՛ Պողիկարպոսի և թե՛ հայր Գրիգորի ժամանակ: Հովհաննես գիտնականի ներկայությունը Սանահինում արդեն դարձի գոյություն է ենթադրում: Այդ դպրոցի առաջնորդ րաբունապետ⁹ Հովհաննես գիտնականի մոտ սովորում և նրա հրամանով ձեռագիր էին ընդօրինակում նորակազմ ուխտի միաբան գրիչներն ու գրոց աշակերտները: Սանահինում ուսուցման համար ընդօրինակվող ձեռագրերը այդ ժամանակ պատահական չէին կարող լինել, ինչպես նշում է Կ. Ղաֆադարյանը¹⁰, որքան էլ մեզ հասած տեղեկությունները քիչ լինեն: Նոր կազմակերպվող միաբանության ու դպրոցի համար, որտեղ մի քանի հարյուր մարդ կայ, դրանք անհրաժեշտ գրքեր էին, որոնք այլևայլ տեղերից գտնում, ընդօրինակվում, ընդօրինակել էին տալիս և ուսուցման հիմք ստեղծում: Այդպիսի նպատակների համար էր նաև մի այլ ընդօրինակություն, որ արել էր մեր կարծիքով նույն Սիմեոն գրիչը, բայց արդեն Հաղպատի համար:

Վեցնետիկի Մխիթարյան մատենադարանում է պահվում արժեքավոր այդ ձեռագիրը, որն իր մեջ պարունակում է Պողոս առաքյալի թղթերի Ծիրնեմ խորհրդի ու Հովհաննես Ոսկեբերանի մեկնությունները¹¹: Ձեռա-

¹ Ստեփանոս Տարբեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181:

² Հովհաննես գրիչը 1415 թ. ձեռագիր է ընդօրինակում Մեծփա վանքում, «ի յառաջնորդութեան... տեսոն Յովհաննես և առ ռոս լոյս վարդապետիս Թովմայի...» (Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, Ա, էջ 175—176): 1424 թ. նույն վանքում մեկ ուրիշը ընդօրինակում է «ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս... մեծ րաբունապետիս մերոյ Թովմա վարդապետի» (անդ, էջ 820—821): Այդ ժամանակ ուխտի առաջնորդն էր Հովհաննեսը և նաև Թովման որպես րաբունապետ:

¹⁰ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 39:

¹¹ Գ. Ալիշան, Հայապատում, Բ, Վեցնետիկ, 1801, էջ 308—312, հիմն. նույնի Այրարատ, Վեցնետիկ, 1880, 487, Գարեգին կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, Ա, Աճթիլիաս, 1851, էջ 188—189:

¹ Մատենադարան, ձեռ. № 8031:

² Հովհաննես Ղրիմեցի, Պատմություն հռչակաւոր վանքի Հաղպատայ, ս. Նշանին, Վիեննա, 1865:

³ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957: Հաղպատ, ճարտարապետական կառուցվածքները ու վիմական արձանագրությունները, Երևան, 1968:

⁴ Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1800:

⁵ Մատենադարան, ձեռ. № 8031, էջ 19ր, 20ր:

⁶ Անդ, էջ 19ր:

⁷ Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1800, էջ 106:



Աւնաթիւն. Գրիգոր Մագիստրոսի ճեմարանի սրահը
(Նկարիչ՝ Գր. Ավագյան)

գոի գրիչը և ստացողը Սիմեոն վարդապետն է։ Բագրատունյաց եպիսկոպոսարանում, տեղ Թաղեոսի¹² ժամանակ։

«...այն ժամու և ի ձեռն նորա գրեցաւ զիրքս ի նն և ուր (448—898) թուականութեանս հայոց...»¹³։ Թաղեոսի այս ընդօրինակությունից էլ արտագրել է Սիմեոն վարդապետը։ Նա Աղթնա և Կոզովիտ գավառներից չէր, ուրիշ տեղից էր եկել։ Այս հանգամանքը նկատի ունենալով Ղ. Ալիշանը գրում է. «Կարծիք եղեմ երբեմն ոմանց, եթէ զրիչ Մատենիս Սիմեոնով իցէ նոյն ինքն սքանչելագործ սուրբն պաշտպան Մանտուայ քաղաքի Իտալիոյ, որ եկն յերկրս Հայոց, ի սկիզբն ԺԱ դարու, և հանգեալ ի սահմանս նորին, ի հողակապ վանս Բենեդիկտեանց, ի Բոլիորոն գեղջ»¹⁴։

Մեր կարծիքով Սիմեոնը Սանահնեցի գրիչն է, հետագայում Հաղպատի վանքի կառուցողն ու առաջնորդը։

Հաղպատի ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ, լուսամտի գլխին գրված է. «ի նն (881) թուակ (անութեանս) Սիմեոն հայր եւ Տիրանուն երեց շինեցաք զեկեղեցիս...»¹⁵։ Նա հիշվում է նաև 1005 թվականին, երբ «ի հայրութեան Սիմեոնի...»¹⁶ խաչ եմ կանգնեցնում Հաղպատում։ Ասողիկը գիտե «առաջնորդ Հաղպատայ՝ Սիմեոն ճգնազգեաց»¹⁷։

Աղթնայում ու Կոզովիտում ընդօրինակություններն ավարտելուց հետո, գրիչը վերադառնում է իր ուխտը և երկու ձեռագիրը միասին կազմել տալիս Տիրանունին «Եւ զՏիրանունն զկազմիչ և զյարիցիչ գրոցս ամսոսաց ունել»¹⁸։

Ծառ կարևոր է Սիմեոն անվան գրությունը։ Հաղպատի արձանագրության մեջ գրված է. «Սիմեոն», այստեղ՝ «Սիմեոնովն» ձևով։ Այդպես է եղել, անշուշտ, նաև Բարսեղի

ճառերի հիշատակարանում, քայք 17-րդ դարում արտագրել են «Սիմեան»¹⁹։

Մեր ենթադրության օգտին է խոսում նաև այն, որ գրությունից ոչ շատ անց ձեռագիրը ընկնում է Բագրատունյաց Հովհաննես թագավորի ձեռքը, իսկ սրա մահից հետո՝ Անի քաղաքի գրատունը։

Ձեռագիրը գրված է թղթի վրա. գրիչն այն համարում է «աղքատ քարտէս»։ Թուղթը, որ նոր է գրության նյութ դարձել և շատ տարածված չէր, բնական է, որ առաջին հերթին կարող էր Հայաստանի մայրաքաղաքում գտնվել, թագավորաշեն զրչության կենտրոնում։ Մեզ հասած երկրորդ թղթյա ձեռագրերն է այս։ Հավանաբար Անիի շրջակայքում կամ Սանահնում է գրվել նաև 981 թվականից մեզ հայտնի հայերեն առաջին թղթյա ձեռագիրը։ Հետաքրքրական է, որ թղթյա այս երկու հնագույն ձեռագրերը գրված են բոլորգույն, որը Սիմեոնը համարում է «անհեթեթ գիր»։ Առաջին օգտագործման համար ստեղծված բոլորագիրն իր դյուրընթեռնելիությամբ մյուս գրատեսուկների համեմատությամբ ավելի մատչելի էր շատերին։

Ջարգացող Անին, թագավորաշեն Սանահնում ու Հաղպատը ժամանակի պահանջներին համապատասխան գրանյութ ու գիր էին առաջարկում հայ գրչության դպրոցներին ու կենտրոններին։ Հիշյալ կենտրոններում ուսուցման համար արտագրվող ձեռագրերը այնուհետև թղթի վրա էին գրվում և բոլորագրվում։ Կիլիկիայում ավելի մշակվելով բոլորագիրը դառնում է գրչության հիմնական գիր, իսկ թուղթը՝ մասսայական գրանյութ։ Այսպիսով, Սիմեոն Սանահնեցուց մեզ հայտնի է Բարսեղի ճառերի ընդօրինակությունը՝ կատարված Սանահնում, Պողոսի թղթերի՝ Եփրեմի մեկնության ընդօրինակությունը՝ կատարված Աղթնայում, նույն թղթերի Ռսկեբերանի մեկնությունը՝ արված Կոզովիտում, և դրանց հիշատակարանը՝ գրված Հաղպատում։

Սիմեոնը Սանահնի և Հաղպատի մեզ հայտնի առաջին գրիչն է։

Սանահնի դպրոցի ծաղկումը շարունակվում է վանքի առաջնորդ Դիոսկորոսի ժամանակ ու նրա ջանքերով, որը հռչակված էր որպես «մեծ հոնտոր»²⁰։

Նրա ժամանակ Սանահնի դպրոցում ծաղկում են մատենագրությունը և գրչությունը հմուտ իմաստասեր և աստվածաբան գործակիցների և աշակերտների, հատկապես

¹² Գրված է «Թաղեոս» ձևով, քայք 17-րդ դարիս գրիչը սխալվել և ուղղել է, որի հետևանքով գլխագիծը մի քիչ երկար է մնացել։ Երկու տող ներքև Թաղեոս առաջալի անունը ճիշտ է գրված։ Ղ. Ալիշանը, նրա հետևողները, և Գ. Հովսեփյանը գրում են «Դաթեոս» ձևով։ Ձեռագրում այդպես չէ, տե՛ս «Այրարատ», էջ 498, լրագրի համահասանդությունը։

¹³ Անդ, էջ 811։

¹⁴ Անդ։

¹⁵ Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, Երևան, 1883, էջ 115, 141։

¹⁶ Անդ, էջ 181 և 248։

¹⁷ Ստեփանոս Տարոնցի, Պատմություն, էջ 181։

¹⁸ Հայապատում, էջ 309։

¹⁹ Անդ, էջ 312։

²⁰ Մատթեոս Ռոմայեցի, Պատմություն, էջ 88։

վարդան, Անանիա Սանահինցիների, Հակոբ Քարապետեցու և այլոց ջանքերով²¹։ Կիրակոս Գանձակեցին Անանիա Սանահինցուն համարում է «այր մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի, և գրոց աստուածայնոց մեկնող»²²։ Ուստի խնդրոյ հար Դիոսկորոսի» կատարում է «բացատրութիւն տէրունական բանից կենսաբեր տեստարանին»²³։ Նրա գլխավոր գործն է «Բանք հակահառութեան» կոչված գրությունը... Ոչնչն են վերագրում բազմաթիվ ճաներ, մեկնություններ և այլն²⁴։

Դիոսկորոսի նշանավոր աշակերտներից էր նաև Հակոբ Քարապետեցին, որ կոչվում է նաև Սանահինցի։ Մ. Ուոհայեցին նրան կոչում է «այր հօգր կորուի», «տուեալ և հասեալ ի վերայ հոնտորական իմաստութեանց և տեղեկացեալ ամենայն վիճիտիայական խորին գիտութեանց»²⁵։ Սա հավանաբար հաջորդում է Դիոսկորոսին, ստանձնելով Սանահինցի ուսուցչապետական աթոռը և որպես այդպիսին 1065 թ. հրավիրվում մասնակցելու Կ. Պոլսի աստվածաբանական վիճարկության։ Հայրենի ավանդները մինչև վերջ պաշտպանել չկարողանալով, միաբանության գիր է կազմում և հանձնում Դուկաս կայսրին «և ի կողմն Հոռոմոց դարձաւ»²⁶։ Ն. Աղոնցի կարծիքով այնուհետև չվերադարձավ հայրենիք, զնաց Ուոհա, որ մահացավ 1086 թվականին։ Միաթար Այրիվանցուն հիշած Հակոբ Ուոհայեցին նույն ինքը Քարապետեցին է, Սոկրատի եկեղեցական պատմության ներկորդ թարգմանչի»²⁷։

Սանահինցի դպրոցի ու միաբանների հետ սերտ կապի մեջ էր Գրիգոր Մագիստրոսը, որի ապացույցը ոչ միայն այնտեղ եղած «Մագիստրոսի ճեմարանն» է, այլև Միգագետից Սանահինցի միաբաններին ուղարկած նրա թուղթը²⁸։

Սանահինցի դպրոցը ծաղկում է Գրիգոր Տուտերորդի և Գրիգոր Աքաա որդի նշանավոր մատենագիր-թարգմանիչների օրոք։ Հիշյալ ժամանակների մատենագիրներ-

ի և գրիչների մեզ հասած երկերն ու ընդօրինակությունները հազվադեպ են։ Սակավ են նաև տեղեկությունները նրանց մասին։ Սակայն այդ սակավն էլ բավականին հարուստ և արժեքավոր նյութ է պարունակում Սանահինցի դպրոցի և գրչության կենդանության վերաբերյալ։

Ժ. Գ. դարասկզբից մեզ է հասել Սանահինցու ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարան։ Ձեռագիրը մինչև անցյալ դարը պահվում էր Սանահինցի գրադարանում, որից այդ ժամանակ ընդօրինակվել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 9854 ձեռագիրը։ Այդ «Ժողովարանը պատմութեանց առասպելացն» գործն է, արտագրված «ձեռամբ Յովաննիս յովանեղ կրօնատրի ի թի Հ(այոց) ՈՅԵ (1206)»²⁹, ի հռչակելու Սանահինցի³⁰։ Գրիչը հիշում է ինչպես թարգմանիչ³¹, որից հանդիպում ենք նաև հետագայում, որպես գրչության ուսուցիչ և ճովանալոր։

Մաշտոցի անվան Մատենադարանում Սանահինցի՝ որոշակի թվականի ու տեղի հիշատակությամբ հայտնի ձեռագիրը № 1204 թղթյա ժողովածուն է, գրված 1231—1233 թվականներին։ Ձեռագիրը միասյուն բոլորագիր է։ Մի մասի ստացողը Համագասպն է³²։ Մի մասի գրիչն ու ստացողը՝ Սանահինցի դպրոցի աշակերտ Մատթեոսը, որը 1231 թ. ավարտում է «ընթերցութեան մեկնութիւնս, ի մեծահոգակ ուխտս Սանահինցի»։ Սակայն շուտով մահանում է։ Պատանի գրչի ձեռագիրը նրա եղբայր Կարապետը³³ հանձնում է Մատթեոսի «սիրելի ուսումնակցին»՝ Ստեփանոսին։ Վերջինս 1233 թ. այս ձեռագիրը միացնում է ուսման համար կատարած իր ընդօրինակություններին և ստեղծում մի ժողովածու, որը պարունակում է շուրջ քսան նյութ։

Ստեփանոսը սույն ժողովածուի մասին գրում է, որ «ի քազում արինակաց ժողովեցի գիրքս գայս»։

Մինչև Սանահինցի գալը, Ստեփանոսը գրում է, որ հոգևոր ծնողները «թագմածամանակեայ ատուրքս սնուցին գիս»։ Որեմն բա-

²¹ Աճղ, էջ 148—150։

²² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 112։

²³ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 221—222։

²⁴ Լ. Ոսկյան, Գուգարքի վամբերը, էջ 148—150։

²⁵ Մ. Ուոհայեցի, Պատմություն, էջ 278։

²⁶ Աճղ, էջ 164։

²⁷ Ն. Աղոնց, Փոքր Սոկրատի Ուոհանակը, «Միմն», 1936, էջ 306։

²⁸ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 136—138։

²⁹ Գ. Հովսեփյանը «Յիշատակարանքի» 738 էջում այն բերել է այլ աղբյուրից, որի թվականը ՈՄԴ (1208)։

³⁰ Մատենադարան, ձև. № 9854, էջ 101ա։

³¹ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 739։

³² Մատենադարան, ձև. № 1204, էջ 16ա, 29ա, 33ա։

³³ Գ. Հովսեփյանը գրիչներ է համարում Մատթեոսին և Կարապետին, այնինչ Մատթեոսը և Ստեփանոսն ինքնագիր են գրիչները. տե՛ս Յիշատակարանք, Ա, էջ 878։

վականին կրթությունը ստանալուց հետո միայն կարելի էր Սահմանի դպրոց մտնել: Սահմանում այդ ժամանակ բոլորն թափով ծաղկում էր ապրում գրչության արվեստը: Մաշտոցի անվան Մատենադարանում 11—12-րդ դարից մեկնողական, ուսումնական ձեռագրեր կան, որոնք գրությամբ, թղթով ձևավորվում են Սահմանում և Հաղպատում այդ ժամանակ կատարված ընդօրինակություններին, բայց հիշատակարան չունեն: Դրանցից է նաև № 7491 ձեռագիրը, գրված Սահմանի առաջնորդ Հովհաննեսի համար, որի տեղը և ժամանակը անհայտ են և կարելի է ճշտել օժանդակ վկայություններով: Մի քանի հիշատակագրություններում Գրիգորես գրիչը հիշում է ստաբողիկոս «գառաջնորդ սուրբ և մեծափռչակ ուխտիս Սահմանիս գառորք հայրս Յովհաննես ստաբող սուրբ Համատաստիս առաքելոյն Պաղոսի...»³⁴: Այս մասամբ հուշում է վայրը, բայց ձեռագիրը կարող էր նաև այլ վայրում գրվել Սահմանի առաջնորդի համար: Գրիչը 861ա էջում հիշում է «զխաչատուր վարդապետ, որ զշիրիոնս ետ»³⁵:

Շիրիոնը այն տախտակն էր, որի վրա գրվում էր ձեռագիրը: Շիրիոնը գրչի գրանդան էր: Ուրեմն ձեռագիրը գրվել է այն ժամանակ և այնտեղ, երբ և որտեղ խաչատուր վարդապետն էր, այսինքն՝ ԺԳ դարի առաջին կեսում, Սահմանի վանքում:

Գրիչը հիշում է նաև «զվարդապետս եւ գուսուցիչ, որ աւծանդ(ակ)եաց ինձ բազում ինչ և յորդորեաց զիս գիրս յայս»³⁶, իսկ դիմացը՝ փակագրում՝ «Աւետիք վարդապետ»: Այսպիսով, Հովհաննես առաջնորդի հետ Սահմանում աշխատում էին գրչության երկու ուսուցիչներ՝ խաչատուր և Ավետիք վարդապետները: Այս Ավետիքն է, անջուշտ, հաջորդում Հովհաննես (Ե) առաջնորդին՝ Աւետիս (Բ) անունով, որը հիշվում է 1251 թ.³⁷: Ավետիս վարդապետի ներկայությունը վերստին ապացուցում է, որ ձեռագիրը գրվել է Սահմանում, 1241—1250 թթ., Հովհաննեսի առաջնորդության ժամանակ:

Գրագետ գրիչ է Գրիգորեսը, ինչպես ցույց են տալիս ձեռագրում նրա անցած սրբագրությունները:

Երկար է աշխատել Գրիգորեսը մոտ 60 պրականոց ձեռագրի վրա, որի թերթերը բավականին մեծ են: Հոգնածություն է զգաց-

վում, և շատ է տրտնջում վիճակից ու քնից, երբեմն էլ գալափարի սխալներից, որոնց մասին բազմաթիվ նշումներ կան ստորին լուսանցքներում. «տառապեցայ ի գիրս», «կարի խիստ եմ ձանձրացեալ», որովհետև ամռանը «ճաննս եւ լոյս եւ քունս եման զիս ի գրելոյս և աւիրեաց»³⁸, իսկ ձմռանը «ոհ, ոհ, տոչորիմ ի սառնամանեացս... զի թանաքս սառոյց էր եւ ձեռս քուցումած...»³⁹:

Գրչության արվեստի զարգացման համար գրիչից բացի անհրաժեշտ էր օժանդակ անձնակազմ, թուղթ կոկող, թանաք եփող, սրբագրող, կազմող և այլն: Գրիգորես գրիչը այդ տեսակետից հետաքրքրական տեղեկություն է հալտնում թուղթ կոկողի մասին, որը թերևս նախորդ գրիչ Ստեփանոսի եղբայր Սարգիսն է՝ մեզ հայտնի ամենավաւստակավոր կոկողը: Գրիչը հիշում է նրան, «որ զքարտեզս կոկեաց վարձս առցէ ի Քրիստոսէ Սարգիս անուն քահանայ ՌԱ (2000) տետեր կոկեաց»⁴⁰:

2000 տեր կամ պրակ կոկել (իսկ սույն ձեռագրի յուրաքանչյուր պրակը 12 թելոյ է) նշանակում է 2400 թերթ կոկել, այսինքն՝ 100 ձեռագրի ավետարանի թերթ, որ հնարավոր է լավ արհեստանոց և օգնողներ ունենալու պայմաններում:

Ձեռագիր գուճավոր լուսանցքազարդերը և զարդագրերը սակավ են, հազվադեպ են զլիազարդ կիսախորանները: Գույները մուգ են և պղտոր, որ ծաղկողը հաստ շերտով դրել է թղթի վրա: Ձեռագրի կազմը գրչության ժամանակակից է և վարպետի գործ:

Այս փաստերը Սահմանում գրչության արվեստի ծաղկման աստիճանի հիանալի վկայություններ են:

1261 թվականին Վարդան Արևելյի ճշգրավոր վարդապետը «ի խնդրոյ արհիակալն տեսուն Համազասպայ և վարդապետին Գրիգորի, փափակալին սուրբ ուխտին Սահման», գրում է «Մեկնութիւն հնգեմատենի»⁴¹: Այս նույն Սահմանեցի է, հավանաբար, որին հանդիպում ենք 1280 թ.:

Սահմանում այդ ժամանակներում պետք է ընդօրինակված և սրբագրված լինի Տարեգիրքը կամ Ծաշոցը, որը հույակված էր Սահմանի օրինակ անունով. Մաշտոցի անվան Մատենադարանի № 9758 Ծաշոցը, որ շուրջ 1200 թերթից է բաղկացած, ընդօրինակված

³⁴ Մատենադարան, ձեռ. № 7491, էջ 582բ. տե՛ս նաև 181բ, 546ա, 637բ:

³⁵ Աճղ, էջ 881ա:

³⁶ Աճղ, էջ 251բ:

³⁷ Հ. Ոսկրան, Գուգարքի վանքերը. 117:

³⁸ Աճղ, էջ 580ա:

³⁹ Աճղ, էջ 544ա:

⁴⁰ Աճղ, էջ 624ա:

⁴¹ Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի, «եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.), «Հանքեր Մատենադարանի», Երևան, 1962, էջ 371:

է 1465 թ. «ի Սանահնոյ արինակէն»⁴², Գեղարքունիաց Կաթ Գլուխ, իսկ № 4557 ճաշոցը՝ 1500 թ., որը Մելիք-Ավանը՝ «թոռմ Գոշ վարդապետին... գրել ետոր... ի Սանահնոյ արինակէն»⁴³:

ԺԳ դարի վերջերից շուրջ հայրապետ արինակի գրչության կենտրոնի մասին տեղեկությունները չունենք: ԺԳ դարավերջում նորից ծաղկում է Սանահնի գրչության դրաքոցը՝ տեղի աշակերտների և դրսից եկած Ղազար վարդապետի և իր եղբայր Հովհաննեսի ջանքերով: Այս Հովհաննեսը և իր աշակերտ Հովհաննեսը ընդօրինակում են Ներսես Շնորհալու չափածո գործերը: Ղազար վարդապետը այդտեղ արդեն հիշվում է որպես «գարփիափայլ և գլուսատու դիտապետ»⁴⁴: Աշակերտ Հովհաննեսն արդեն քավակահին վարժ գրիչ է, նաև՝ ծաղկող: Ձեռագիրը գրված է մինչև 1399 թվականը⁴⁵: Այդ ժամանակ, 1397 թ., «ի Լոռու գաւառի ի գերաբնակ սուրբ ուխտն Սանահնի»⁴⁶ ընդօրինակվում է Գրիգոր Նարեկացու Մատյանը: Այս ձեռագրի գրիչն անհայտ է, հավանաբար վերոհիշյալ ուսուցիչ և աշակերտ Հովհաննեսներից մեկն է, որովհետև այդ ժամանակ ուրիշ գրչի չենք հանդիպում Սանահնում:

Գրչությամբ էր զբաղվում նաև դիտապետ Ղազար վարդապետը: 1420 թ. իր եղբոր՝ արդեն վարդապետ Հովհաննեսի հետ Մատիիրոսի համար ընդօրինակում է մի Ավետարան: Հիշատակարանը քայքայված է, և Ղազարի անունը չկա: Ձեռագիրը գրված է «ձեռամբ (յոգ) նամեղ և փրցուն գրչացս և Յովհաննէս վարդապետս՝ երկուց հարազատաց»⁴⁷: Սանահնում Հովհաննես վարդապետի հարազատը Ղազարն էր: Նրանք գրել են, իսկ Հովհաննես «սիրասնունդ աշակերտը»՝ նկարազարդել է ձեռագիրը: Այս փաստը ճշգրտվում է նրանց մյուս ընդօրինակությամբ:

Ձեռագիրը պահվում է Մայր Աթոռի ձեռագրատանը: Հ. Ռսկյանը Մարտիրոսին է համարում գրիչը⁴⁸, իսկ Ա. Երեմյանը՝ Հով-

հաննես Սանահնեցուն, որը սակայն միայն ծաղկողն է⁴⁹:

Մատենադարանի № 4435 Ավետարանը գրված է Սանահնում 1424 թ. «ձեռամբ ամենամեղ և փցուն գրչացս՝ Ղազար վարդապետի՝ առաջնորդի սուրբ ուխտիս և նորին հարազատի Յովհանէս վարդապետի»⁵⁰: Նրանց օգնել է «ի գիր և ի ծաղիկ և ի համարաբանոս» Հովհաննես աշակերտը: Ղազար վարդապետը հիշվում է որպես «քաջ լաբունապետ», իսկ եղբայրը՝ Հովհաննես վարդապետը, «երաժշտապետ» կամ «փիլիսոփա», նաև գրչության և մանրանկարչության ուսուցիչ: Ահա «առ ոտս» սրանց Սանահնում ամուսն և բեղմնավոր գործունեություն է ծավալում ճշմարտ գրիչ և ծաղկող, հետագայում նաև ուսուցիչ Հովհաննես Սանահնեցին: Վարդանի և Նոննի որդի Հովհաննեսը Սանահնեցի է կոչվում, որովհետև «ի մանկութենէ սնեալ և վարժեալ ի դրան սուրբ Աստուածածնիս Սանահնոյ»⁵¹: ԺԳ դարավերջից նա արդեն գրիչ էր, որին տեսանք ուսուցչի հետ ընդօրինակություն անելիս:

Հովհաննես Սանահնեցին, որ իր ընկերներ Մարկոսի և Գրիգորի հետ գնացել էր Երուսաղեմ «յերկրպագութիւն սուրբ տնայինակցս», 1411 թ. այնտեղ ընդօրինակում է մանրուսմունք «ի լաւ և լընտիր արինակէ Կարապետոյ»⁵²:

«Հայկազեան տունարի ՊԿԷ (1418)» թվականին «ձեռամբ փցուն գրչի Յովհաննէս Սանահնեցոյ», արդեն Սանահնում ընդօրինակվում է մի Ավետարան⁵³: Այս, ինչպես նաև նախորդ ձեռագիրը նկարազարդել է գրիչը:

Վիեննայի Մխիթարյանների № 419 Մանրուսմունքի գրիչը նույնպես Հովհաննեսն է: Այն ընդօրինակված է Սանահնում 1421 թ. «Առ ոտս Ղազար վարդապետի և հարազատ նորբ իւրոյ Յովսէփ (պետք է լինի Հովհաննէս—Ա. Մ.) փիլիսոփայի»⁵⁴, դարձյալ «լաւ և ընտիր»՝ այս անգամ «Առաքելոյ արինակ» կոչվածից, հավանաբար Մշու Առաքելոց վանքի անվամբ: Հովհաննեսը 1447 թ.

⁴² Մատենադարան, ձեռ. № 3758, էջ 1170ա:

⁴³ Մատենադարան, ձեռ. № 4557, էջ 572ա:

⁴⁴ Հ. Ռսկյան, Գուգարքի վանքերը, էջ 122:

⁴⁵ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 328, ծթ. 1:

⁴⁶ Սրվանձտյան, Թորոս Աղթար, Բ, էջ 385—386:

⁴⁷ Մայր Աթոռ, № 80, «Էջմիածին», 1951, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 88:

⁴⁸ Հ. Ռսկյան, Գուգարքի վանքերը, էջ 128:

⁴⁹ Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննէս Սանահնեցի (ԺԵ դար), «Բազմավեպ», 1957, էջ 78:

⁵⁰ Մատենադարան, ձեռ. № 4435, էջ 316ա:

⁵¹ Մատենադարան, ձեռ. № 1537, էջ 181բ:

⁵² Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 180—181:

⁵³ Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննէս Սանահնեցի (ԺԵ դար), «Բազմավեպ», 1957, էջ 80:

⁵⁴ Հ. Տաշյան, Յուդակ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի, Վիեննա, 1885, № 419, էջ 878:

րոնք գրել, ծաղկել և միացնելով կազմել է ծերունի Հովհաննեսը՝ աշխատելով պահել գրության և ծաղկի ոճը, բայց մնալով Հովհաննես գրիչ և ծաղկող: Այդ 1468 թվականին էր: «Ի դուռն գերեզմանին հասնալ» ծերունուն վերջին անգամ հանդիպում ենք 1462 թ.: Հովհաննես Սանահնեցին իր երկարամյա, շուրջ յոթ տասնամյակ գրչական գործունեությամբ մոտենում է հայ գրչության ամենաերախտավորներից Հովհաննես Մանկասարենցին, որը 72 տարի գրել է: Եթե նկատի առնենք, որ Սանահնեցին մահ ծաղկել է և կազմել, որ մահ եղել է մահ եկեղեցական պաշտոնյա, ավելի կապածառանա Սանահնեցու կերպարը և մշակության զործունեությունը: Այս երկու գրիչների վերջին ընդօրինակությունները գտնվում են Մատենադարանում: Հովհաննես Մանկասարենցի ձեռքը գրելիս դողում էր, ինչպես ինքն է գրում, և ինչպես երևում է ձեռագրից: Այնինչ Հովհաննես Սանահնեցու մոտ այդ չի նկատվում, դեռ ավելին, մահ այնպես գեղեցիկ է գրում, որ մրա գիրը կիլիկյան գրչության մոտ չի նսեմանում: Հովհաննես Սանահնեցին ինքնատիպ էր որպես նկարիչ, որի «ստեղծագործության անաճմահատկությունները միաժամանակ ընդգծում են Սանահնի մանրանկարչական դարձի էությունը»⁶³:

Ինչպես տեսանք, մահ է ծաղկել Հովհաննես Անեցի եպիսկոպոսի և Շմավոն Տաթևացու ընդօրինակած Ծարակնոցները, ընդ որում վերջինս ընդօրինակել է առաջինից: Մաղագաթյա փոքրադիր ձեռագրեր են երկուսն էլ, համարյա նույնչափ, երկուսն էլ գտնվում են Մատենադարանում: Նույնպես զարդանկարչություն ունեն բոլոր կանոնները: Սակայն ի տարբերություն միջնադարյան նկարիչներից մեն մասի, որոնք օգտագործում էին կաղապար-ուրվագները, և որոնց օգնությամբ նույն ձևերն ու նկարները կրկնվում էին իրենց զարդագծած տարբեր ձեռագրերում համարյա նույնությամբ, Սանահնեցին Ծարակնոցներից մեկում ծաղկած չափն ու ձևը չի կրկնել: Յուրաքանչյուր զարդ ու զարդագիր-լուսանցազարդ ու նույնիսկ ամբողջ էջն զբաղեցնող նկար կատարված է ստեղծագործաբար: Պահպանելով քովանդակության նույնությունը՝ տարբեր ձևեր է օգտագործել նկարիչը:

Հովհաննես Սանահնեցին մահ գրչության և մանրանկարչության ուսուցիչ էր: Մյա աշակերտներից են՝ եղբորորդիները, Ներսես

գրիչն ու երաժիշտը, Վարդան ծաղկողը, Բենուշ դպիրը, ապա, Տերունական և Արիստուկես Տիրատուր գրիչները, Աստվածատուր և Կարապետ կազմողները և այլք:

Իր ուսուցչի՝ Հովհաննեսի հետ էր աշխատում Սանահնի մյուս գրիչ Տերունական արեղան: Ետիկ և Թամարխաթունի որդուն առաջին անգամ հանդիպում ենք 1429 թ. իր ուսուցչին մագաղաթ շնորհելիս⁶⁴: 1441 թվականից Տերունական գրիչը «ձեռացեալ և նեխեալ անձամբ, յետինս աշակերտաց սորա (Յովհաննեսի—Ա. Մ.)» ընդօրինակում է մի Ավետարան «ի յերկահանգետ և ի գերահոշակ սուրբ ուխտս Սանահն...» կամակցութեամբ եղբարցս Ներսես փիլիսոփայի և այլ միաբանիցս» և ետու ծաղկել Յոհաննես վարդապետի՝ տիրական պատկերաբ՝ բոլոր տնօրինակաբ, փառաւոր աւետարանչօք, և գեղեցկատեսիլ խորանօք, և դիրաճայեաց ծաղկաբ և գոյներանկ ցեղօք, և ձեռացեալ ալեօք աշխատեալ և նեղացեալ յուրվ»⁶⁵: 1447 թ. Հովհաննես կաթայեցին ստանում է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը»՝ գրված «ձեռամբ Տերունական(ի) և Յոհաննես կրօնաւորի Սանահնեցոյ»⁶⁶: Հասկանալի է, որ Սանահնիում ձեռագիրը կրկնագիր մագաղաթ է, հաստ և կոշտ: Հագիվ նշմարվում է, որ գրված է եղել մանր երկաթագրով: Մատենադարանի № 2657 գանձարանի գրիչը նույնպես Տերունականն է: Հիշատակարան չկա, բայց մի էջում խնդրում է «գմեղօք մեռեալ ոգիս գՏերունական աղաչեմ յիշել ի Քրիստոս»⁶⁷: Վարժ գրչի գանձարանը նկարազարդել է անշուշտ Հովհաննես Սանահնեցին, մրանն են ոճը և գույները. ամեն կանոնի կամ գանձի լուսանցքում նկարված է համապատասխան սուրբը: Աստվածածնի գանձերից մեկից հետո գրում է. «Այս չէր լայս տեղ գրելու, ապա վասն սիրող Աստուածածնի և երկիւղին գրեցի»⁶⁸: Գրիչը Սանահնի ս. Աստվածածնի սիրուն է խախտել գանձարանի կարգը: Ձեռագիրը միշտ պահվել է Սանահնի գրատանը և այնտեղից երեսնական թվականներին մուծվել Մատենադարան:

Տերունականը 1441 թ. արդեն «ձեռացեալ և նեխեալ» էր, ձեռագիրը պետք է գրված լինի այդ ժամանակներում, այսինքն՝ ԺԵ

⁶³ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, մկ, Ա, էջ 309:

⁶⁴ Նույն տեղում, ԺԵ, Գ, էջ 396—397:

⁶⁵ Մատենադարան, ձև. № 2130, էջ 425ր:

⁶⁶ Մատենադարան, ձև. № 2656, էջ 89ա:

⁶⁷ Անդ, էջ 89ա:

⁶⁸ Ա. Երեմյան, Գրիչ և ծաղկող Յովհաննես Սանահնեցին... էջ 78:

դարի առաջին կեսում, այնինչ այն համարում են ժՋ դարի ընդօրինակությունը⁶⁸:

Հովհաննես Սահահեցու աշակերտների մեջ աչքի են ընկնում իր եղբոր որդիները և թոռները, որոնք շարունակում են Սահահեցու գոյությունը կենտրոնը հարստացնել ընդօրինակություններով: Ներսեսից և Վարդան Գալուստից բացի հայտնի են Զանգիաշյի և Հովհաննեսի եղբայրներից Արիստակեսը և Նաչատուրը՝ գրիչ և ծաղկող:

Հովհաննես Սահահեցին ելքոր թոռան, Զանգիաշի և Նուկրարի որդի Արիստակեսի ուսուցիչն է: Սա 1469 թվականին Սահահեցու Հաղպատի առաջնորդի համար ընդօրինակում է մի Ծարակնոց⁶⁹:

1469 թ. Սահահեցու ընդօրինակվել է մի ժաշոց⁷⁰, որի գրիչը հայտնի չէ: Արդյոք Արիստակեսը չէ՞ գրիչը: Նրանցից մեզ հայտնի մյուս ձեռագիրը 1475 թվականից է: Բարսեղ եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ Արիստակեսը գրում և ծաղկում է մի Ավետարան⁷¹: Ձեռագրում ուրվագծված են բոլոր ավետարանիչները, բայց չեն գունազարդված: Նստած ավետարանիչների շքրջանակի վերին շրջանում կիսաշրջանից դուրս են նայում ավետարանիչների խորհրդապատկերների զլուխները: Նաչատուր աշակերտը վկայում է, որ իր ուսուցիչ Արիստակեսը ծաղկել է իր՝ 1485 թ. ընդօրինակած Ավետարանը. այդ առթիվ հիշում է՝ «ուսուցիչն իմ գՏեր Արիստակեսն, որ քազում աշխատութեան ծաղկազարդեաց զսուրբ Աւետարանս...»⁷²: 1480 և 1486 թվականներից

Արիստակեսից հայտնի են մեկական Ավետարան⁷³, իսկ 1497 թ.՝ մի Ծարակնոց: Ծարակնոցը պատվիրում է գրչի Ռոբեղթորդի Հովհաննես վարդապետը:

Իսկապես հաջորդ, ժՋ դարից մեզ են հասել Մկրտիչ կրոնավորից երեք ձեռագրեր. 1504 թ. օրինակած Ավետարանը, 1507 թ.՝ Ծարակնոցը, և 1518-ին՝ Ժամագիրքը՝ Թումա րաբունու օրինակից⁷⁴: 1534 թ. Տերունականը ընդօրինակում է մագալաթյա մի Ավետարան:

ԺԷ դարից մեզ հայտնի են Սրապիոն գրչի երկու Ավետարանները՝ 1648 և 1647 թվականներից⁷⁵: Այդ դարում է կազմվել Սահահեցի Քոթուկը⁷⁶ և լուսցվել է տարբեր գրիչների կողմից՝ հասցվելով մինչև 19-րդ դար:

Հայ գրչության արվեստը իր զարգացման քարձրագույն աստիճանին է հասնում 14—15-րդ դարերում: Այդ երևույթը նկատվում է նաև Սահահեցու: Հովհաննես Սահահեցու և իր աշակերտների ջանքերով այն համահայաստանյան նշանակություն է ստանում: 18-րդ և հաջորդ դարերում գրչության արվեստն այլևս այդ մակարդակը չի ունենում, բայց շարունակում է իր գոյությունը:

Սահահեցի գրչության կենտրոնը, սկսած 10-րդ դարից, իր տքնաջան գրիչների ու վարդապետների ջանքերով հայրենի մշակույթի ջահը պայծառ պահեց՝ հարստացնելով հայ ձեռագրական մշակույթը մատենագիտական կարևոր երկերով, գրչության և մանրանկարչության նշանավոր գործերով ու ընտիր օրինակներով, որոնք բազմացվում էին ոչ միայն տեղում, այլև Հայաստանի զբլչության տարբեր կենտրոններում:

⁶⁸ Յուդակ ձեռագրաց Մաշտոցյան Մատենադարանի, հտ. Ա, Երևան, 1965, էջ 847:

⁶⁹ Բ. Կյուլեսբեյյան, Յուդակ Ղայաթիոյ, էջ 1042: Հմմտ. Լ. Նաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 288, Գ, 2:

⁷⁰ Մ. Տեր-Մովսիսյան, Յուդակ, 54—52:

⁷¹ Մատենադարան, ձեռ. № 8889:

⁷² Մատենադարան, ձեռ. № 10147, էջ 298ա:

⁷³ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ, Գ, էջ 147: Մատենադարան, ձեռ. № 8889:

⁷⁴ Հայերեն ձեռագրերի համահավաք քարտարան:

⁷⁵ Մատենադարան, ձեռ. № 8889 և Գ. Սրվանձատյան, Թորոս աղքար:

⁷⁶ Մատենադարան, ձեռ. № 8031, էջ 210:





ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԶԲՈՍԱՅԳԻ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 25-ին, շաբաթ օրը, Հոկտեմբերյանի շրջանում հանդիսավորապես կատարվեց Սարդարաբադի հերոսամարտի հիշատակին կոթողացված զբոսայգի-հուշարձանի բացումը:

Մայիսյան սպիտակ օրը Սարդարաբադի հերոսամարտի վայրում էին հավաքվել բազմահազար ուխտավորներ, որոնք հոսել-եկել էին Հայաստանի տարբեր ծայրերից՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու 1918 թ. մայիսի 22-ից 26-ի մարտերում քաջաբար ընկած հերոսների հիշատակին:

Բացումը կատարվում է ժամը 11-ին: Բեմահարթակ են բարձրանում Սովետական Հայաստանի ղեկավարները, արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորներ, հայ արվեստի ու գրականության մշակներ, Սարդարաբադի հերոսամարտի մասնակիցներ:

Նվագախումբը կատարում է ՍՍՀ Միության և Հայկական ՍՍՀ պետական հիմները:

Ելույթ է ունենում Ա. Քոչինյանը, որն իր ճատի մեջ խոսելով Սարդարաբադի հերոսամարտի դերի ու նշանակության մասին, ասում է. «Սարդարաբադի ճակատամարտը տարեբայցորեն պայքարի ելած ժողովրդական մասսաների անձնագոհության և խիզախության վայրում արտահայտությունը հանդիսացավ: Այն ժամանակ այն դաշտում կարճես թե հավաքվել էր ամբողջ հայ չարքաշ ժողովուրդը: Կյանքի գնով հաղթանակի հասնելու պատրաստ մարտիկների կողքին

կանգնել էին ծերեր, երեխաներ, կանայք, ղեռատի աղջիկներ:

Սարդարաբադի հերոսամարտը անցնչելի տառերով է գրված հայ ժողովրդի պատմության մեջ: Դա համաժողովրդական մի կոչիլ էր պատվի ու գոյության համար»:

Այնուհետև ելույթ են ունենում շինարար բանվոր Հ. Մանուկյանը, գրող Ն. Զարյանը, Նոր Արմավիրի կոլտնտեսության վարչության նախագահ Ն. Սիմոնյանը և հերոսամարտին մասնակից զինվորներ:

Ապա միտինգի մասնակիցները ողջվում են դեպի հուշարձանի մուտքը: Ա. Քոչինյանը կարում է կարմիր ժապավենը, որից հետո ծովաձավալ բազմությունը շարժվում է դեպի կոթողները:


Ի թիվս բազմահազար հանդիսատեսների հուշարձանի թացմանը ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունն ու լաշտոնեությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Առաջին հայացքից մեզ զարմացրեց այն հսկայական աշխատանքը, որը կատարված էր յոթն ամիսների մի սեղմ ժամանակամիջոցում:

Զբոսայգի-հուշարձանը կառուցված է հենց հերոսամարտի վայրում: Նրա հեղինակներն են ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, քանդակագործներ Ա. Հարությունյանը, Ա. Զահրյանը, Ս. Մանասյանը: Այն զբաղեցնում է մոտ 25 հեկտար տարածություն: Առաջին պլանի վրա գտնվում է հուշարձանի մուտքը՝



Հուշարձանի բացման օրը



Մուտք դեպի զբոսայգի—Բուշարձան


երկու տիտանական ցուլեր, որոնք խորհրդանշում են այն ուժը, որն ունի այսօր վերակենդանացած հայ ժողովուրդը: Քիչ հեռվում 35 մետրանոց կամարավոր զանգակատունն է՝ վտանգի պահին մեր ժողովրդի ունեցած զգոնության խորհրդանշը: Զանգակատնից դեպի ձախ, մոտ 200 մետր հեռավորության վրա, կառուցված է 55 մետր երկարություն ունեցող կիսակոր պատը՝ Սարդարաբադի հերոսամարտի հաղթանակը խորհրդանշող քանդակներով: Հուշարձանը կառուցողների մտահոգել է նաև այցելուների հանգիստը: Պաստի կենտրոնում բացված կամարակապ մուտքը առաջնորդում է դեպի ճաշարան-հյուրանոցի շենքը, որը կառուցված է հայ հին ճարտարապետության ոճով: Այս կառույցից դեպի աջ գտնվում է ջրավազանը, որը նույնպես հանդիսանում է հանգստավայր այցելուների համար:

Թող այս զբոսայգի-հուշարձանը խորհրդանշի ժողովուրդի խորին հարգանքը նրանց նկատմամբ, ովքեր հերոսաբար ընկան Սարդարաբադի անհավասար ճակատամարտում: Նրանց հիշատակը միշտ վառ կմնա երախտապարտ ժողովրդի սրտում, գալիք սերունդների սրտում:



Սարդարաբադի ճակատամարտը խորհրդանշող որմնակարներ





ՌՌԻՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԷԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԸ ԵՎ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցնող, 1987 թ. լրացել էր ուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքական Աթոռի վերաֆաստատման 50-ամյակը: Ահա այդ հոբելյանը հանդիսավոր և խանդավառ պաշտամունքներով նշվեց սույն թվականի մայիսի 28-ից մինչև հունիսի 2-ը Մոսկվայում:

Պետք է նշել, որ ուսաց պատրիարքության սկիզբը պատմականորեն ձգվում է մինչև 18-րդ դար, երբ մայիս 1586 թ. Մոսկվայի պատրիարքության հաստատման խնդրով մտահոգված՝ Ամտիոքի պատրիարքն է եկել այստեղ՝ հենց ուս եկեղեցու հրավերով, և ապա երկու տարի անց, մույն մտահոգությանը եկել է նաև Կոստանդնուպոլսո Երեմիա Բ պատրիարքը: Այդ ժամանակ երկու կողմերի միջև տեղի ունեցած բանակցությունների ու ժողովների ընթացքում կայացվել է համաձայնություն, որով իրավունք է վերապահվել ուս եկեղեցուն արդարորեն ունենալու իր նվիրապետության գլուխը՝ պատրիարքը: Այսպիսով, 18-րդ դարից սկսած, ուս քույր եկեղեցին ղեկավարվել է իր պատրիարքով, որը հետո օրինականացվել է 1590 և 1593 թթ. Կոստանդնուպոլսո գլուխ ժողովներում:

Ռոս եկեղեցու պատրիարքությունը վերացվել է 18-րդ դարի սկզբին Պետրոս Ա կայսեր ժամանակ և նրա ինքնակամ միջամտությամբ: Ավելի քան 200 տարի, այսինքն՝ մինչև մեր դարասկիզբը, գոյազուրկ մնալով, միայն 1917 թ. Մեծ հեղափոխությունից հետո այն նորից հաստատվեց:

Պետք է ավելացնել, որ պատրիարքության բացակայության այդ երկու դարերում, միշտ է, ուս եկեղեցին չի ունեցել իր պատրիարք-

ընկալարը, սակայն այն միշտ ղեկավարվել է ս. Սիմոդով՝ անկախ այն քանից, թե նրա անդամները ցարերի կողմից առաջ քաշված մարդիկ են եղել:

Եվ հիմա նորից, ավելի քան 50 տարի է, ինչ ամեն մի ուս եկեղեցի իր պատարագների և այլ հոգևոր ծիսակատարությունների ընթացքում միշտ հիշում է իր սրբազան պատրիարքի անունը և նորից, ինչպես հզում է եղել, ս. Սիմոդը ղեկավարում է ինքը՝ նվիրապետության գլուխը, պատրիարքը:

Այս 50 տարիների ընթացքում ուս պրավոսլավ եկեղեցին տվել է երեք հեղինակավոր պատրիարքներ՝ հանձինս հանգուցյալ Տիմոն և Սերգեյ պատրիարքների և ներկայիս ծերունազարդ Ալեքսի պատրիարքի:

50 տարի, և հիմա հորելյանական տոն:

«Պատմական քարի ավանդությունն է արդեն, որ հայ եկեղեցին ուրախությամբ լուսավորվում է ամեն անգամ, երբ ուս պրավոսլավ եկեղեցին տոնական օրեր է ապրում փառավոր հանդիսություններով», — այսպես էր գրում Նորին Ա. Օծություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, իր 25 ապրիլ 1988 թ. կոնդակում (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, հմր. Դ)՝ ուղղված Ալեքսի պատրիարքին, ի պատասխան այն հրավերի, որ վերջինս ուղարկել էր Հայոց Հայրապետին՝ հրավիրելով նրան մասնակցելու ուս եկեղեցու պատրիարքական Աթոռի վերաֆաստման 50-ամյա հոբելյանին:

Հարգելով եղած հրավերը և մանավանդ այդ «քարի ավանդությունը» շարունակելու նպատակով Վեհափառ Հայրապետը երեք հոգուց բաղկացած մի պատվիրակություն է

կազմում: Պատվիրակության ղեկավար է նշանակվում Մայր Աթոռի լուսարարապետ և Գերագույն հոգևոր իտրոհողի ստեղծապետ գեր. տ. Հայկազուն Երբեյ: Արարհամյանը և անդամներ՝ գեր. տ. Պարզե եպս. Գևորգյանը՝ առաջնորդ Ռուսիո հայոց, ու ս. Գեղարդա վանքի վանահայր հոգ. տ. Նալբեկ վրդ. Շաքարյանը:

Մայիսի 25-ին Մայր Աթոռի պատվիրակության երկու անդամները մեկնում են Մոսկվա: Այստեղ պատվիրակության խմբին միանում է նաև տ. Պարզե եպիսկոպոսը: Հայ եկեղեցու պատվիրակությանը դիմալորելու և բարի գալուստի խոսք ասելու էին եկեղեցու պատրիարքարանի ներկայացուցիչներ՝ գեր. տ. Ալեքսի միտրոպոլիտը՝ գործերի կառավարիչը, տ. Գեղեճն եպիսկոպոսը՝ Սմոլենսկի առաջնորդը, և ուրիշներ: Ուղեգրություններից հետո երկու եկեղեցիների բայթրաստիճան ներկայացուցիչների միջև տեղի ունեցան ողջույնի խոսքի փոխանակումներ: Ապա հայ հյուրերին առաջնորդում են և տեղավորում մատարապառի շքեղ հյուրանոցներից մեկում՝ «Ռուսիա»-ում: Մի փոքր հանգստանալուց հետո, պատվիրակության ղեկավար տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հյուրանոցի իր հարկաբաժնում ընդունում է պաշտոնական այցելությանը բարի գալուստի խոսք ասելու համար եկած ռուս եկեղեցու ս. Սիմոնի անդամ ու Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ տ. Պիմեն միտրոպոլիտին և ուրիշներին: Տեղեկացվում է, որ հանդիսությունների բոլոր օրերին հայ եկեղեցու ներկայացուցիչներին ուղեկցելու պատիվը վերապահվելու է տ. Գեղեճն եպիսկոպոսին ու խորհրդակցելու: Պաշտոնական բաժնի վերջում տ. Հայկազուն սրբազանը ռուս եղբայրներին խնդրում է, որ Ն. Ս. Ս. Ս. Վազգեն Ա կաթողիկոսից իր բերած եղբայրական ողջույնը հաղորդեն Ն. Ս. Ս. Ալեքսի պատրիարքին:

Հսկա հյուրանոցն արդեն ընդունել է տարբեր երկրներից եկած շատ հոգևորական հյուրերի: Այստեղ են եկել Կ. Պոլսո, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Վրաց, Հարավսլավիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Մադագասկարի, Ֆինլանդիայի և ուրիշ շատ եկեղեցիների պատվիրակություններ: Սպասվում են նաև եկեղեցիների համաշխարհային խորհրդի քարտուղարը, հնդկ մայաբար, հոլանդիայի ռեֆորմատ և այլ եկեղեցիների պատվիրակությունները:

Մայիսի 26, կիրակի: Հանդիսությունների առաջին օրն է: Այսօր, ըստ ծրագրի, տոնակատարությունների մասնակիցները կա՛մ ս. պատարագ են մատուցում Մոսկվայի

տարբեր եկեղեցիներում և կա՛մ ներկա են լինում ս. պատարագի արարողության: Հայ եկեղեցու պատվիրակության երկու անդամները՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և տ. Նալբեկ վարդապետը, ս. Հարություն եկեղեցում ներկա են լինում ռուսական ծեսով պատարագի, իսկ տ. Պարզե եպիսկոպոսը պատարագ է մատուցում հայոց եկեղեցում: Վերոհիշյալ ռուս եկեղեցում, խոսմանքում հավատացյալների ներկայությամբ, պատարագ էր մատուցում Չեխովսկայիսի պրավոսլավ եկեղեցու միտրոպոլիտ Տ. Դորոֆեյը: Հավարտ ս. պատարագի եկեղեցու ավագները հավատացյալներին ծանոթացնում է պատարագի սրբազանին և հայ եկեղեցու պատվիրակներին, որոնք իրենց օրհնություններն են բաշխում ներկաներին:

Ժամը 12-ին, երբ մեր էր սկսվում հայոց եկեղեցու պատարագը, տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և իր ուղեկիցները շտապում են այնտեղ՝ ս. պատարագի, ինչպես նաև հաղորդելու Վեհափառ Հայրապետի օրհնությունները տեղի հայ համայնքին: «Սուրբ, սուրբ»-ի խորհրդանշանը պահել է, երբ հյուրերը հասնում են այնտեղ: Թեմակալ առաջնորդ գեր. տ. Պարզե եպիսկոպոսի մատուցած ս. պատարագի ավարտից հետո տ. Հայկազուն արքեպիսկոպոսն ասում է. «Գալով ս. Էջմիածնից, ռուս պրավոսլավ եկեղեցու տոնախմբությանը մասնակցելու՝ մենք մեր արտի մեջ ձեր բոլորի կարոտը ծրարած՝ բերեցինք մեկ ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի օրհնությունները բոլորիդ»:

Երեկոյան ժամը 6-ին ռուս եկեղեցու բոլոր հյուրերը Սոկոլնիկի շրջանում գտնվող ս. Հարություն եկեղեցում ներկա են լինում գոհարահաման աղոթքի: Եկեղեցին և բակը լեկ-լեցուն են հավատացյալներով: Արարողության հանդիսապետն է Լեոնիդոսի տ. Նիկողոսի միտրոպոլիտը: Ասլանում տեղ են զբաղեցրել Ն. Ս. Ալեքսի պատրիարքը՝ կենտրոնում, իսկ նրանից աջ ու ձախ՝ մյուս եկեղեցիների պետերը կամ նրանց ներկայացուցիչները: Հսկա եկեղեցու աջակողմյան ու ձախակողմյան դասերում են տեղավորված դպրաց դասերը: Վերջիններս գեղեցիկ երգի տակ նույնքան գեղեցիկ են հնչում նաև եկեղեցու զանգերի դողալիցները և հավատացյալների աղոթքի մրմունջները: Ամեն բան վեճ է ու խորհրդավոր: Ռուս եկեղեցու պետ Ալեքսի պատրիարքը բոլոր հյուրերին և ներկաներին դիմում է ողջույնի ճառով: «Հավաքվել ենք այստեղ,—ասում է նա,— որպեսզի աղոթքով սկսենք մեր եկեղեցու պատմության համար մեծ նշանակություն ունեցող պատրիարքության վերահաստատ-

ման 50-ամյակին նվիրված տոնախմբությունը:

Պատրիարքի ճառից և վերջին հանդիսությունից հետո ներկա եղող պատգամավորները մեկ առ մեկ մոտենում են Նորին Արքեպիսկոպոսին և ողջագուրվում:

Մայիսի 27, երկուշաբթի: Այսօր ամեն մի պատգամավորություն ատաճարկված ծրագրերից մեկնումենք ճախընտրելու իրավունք ունի: Հայ եկեղեցու պատվիրակությունը առավելագույն ժամը 10-ին այցելություն է տալիս Կրեմլի հոյակերտ տաճարներից, այսպես կոչված, «Ջինապալատ»-ին՝ թանգարանին, իսկ ժամը 12-ից հետո հայ պատգամավորությունը այցելում է ճախ Լոմոնոսովի անվան պետական համալսարանը և ապա՝ 1812 թ. հոկտեմբերի 26-ին հորոդինյի ճակատամարտում ռուս զորքի տարած հաղթանակը խորհրդանշող պանորամային թանգարանը:

Երեկոյան հայ եկեղեցու պատվիրակները հարգանքի այցելություն տվեցին նաև Երուսաղեմի հունաց պատրիարք ամենապատիվ Ս. Բենեդիկտոսին «Ուկրաինա» հյուրանոցի իր հարկաբաժնում:

Մայիսի 28, երեքշաբթի: Տոնական խանդավառ և լարված մի օր Մոսկվայից դուրս գտնվող Զագորսկ քաղաքի պատմական մայրավանքում: Այսօր առտեղ հոբելյանական ժողովի բացումն է Մոսկվայի հոգևոր ճեմարանի կամարների տակ:

Նախաճաշից անմիջապես հետո հյուրերը մեկնում են Զագորսկ: Մերձմոսկովյան անտառների և դաշտերի եզրերով անցնելով, մեկուկես ժամ հետո ավտոմեքենաների երկար շարասյունը հասնում է տեղ: Արդեն հեռվից մայրավանք այցելող ուխտավորներից ճախ դիմավորում են մայրավանքի գմբեթներն ու աշտարակները, ապա նաև՝ զանգերի դողալները:

Պատգամավորները Մայր տաճարի դարպասների մոտ իջնում են մեքենաներից և արժանանում դիմավորողների ողջագուրումներից, վանքի միաբանների կողմից կատարված հաղթական երգերին:

Այսօրվա նշանակալից օրը հետևյալն է մերձավոր վայրերից այստեղ է քերել բազում ուխտավորների ու հավատացյալների: Պատգամավորները շարքով այցելում են ռուս եկեղեցու ազգային մեծ սրբին՝ ս. Սերգեյին, որի աճյունը գտնվում է իր իսկ անունը կրող պատմական եկեղեցու կամարների տակ:

Մոսկվայի մարզի Զագորսկի այս հայտնի մայրավանքը ռուս պրավոսլավ եկեղեցու նշանավոր մենաստաններից մեկն է: Այն հիմնվել է 14-րդ դարում ս. Սերգեյի կողմից:

Միշտ ապստեղ են տեղի ունենում ռուս եկեղեցու կարևոր հանդիսությունները:

Հանգիստը տևում է մեկ ժամ: Միշտ ժամը 12-ին աղոթքով բացվում է հոբելյանական հիստը: Եվ ահա նախագահության սեղանի շուրջն են Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ս. Ալեքսի, Երուսաղեմի հունաց պատրիարք Ս. Բենեդիկտոսը, համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ-ն, Ռումինիայի օրթոդոքս եկեղեցու պատրիարք Ս. Ժուստինիանը, Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցու պատրիարք Ս. Կիրիլը, Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք Ս. Հերմանը, հայ եկեղեցու պատվիրակության ղեկավար տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, ինչպես նաև այլ եկեղեցիների ներկայացուցիչներ՝ հանձինս Զորք Պատրիկ Դուպեյի (Հոմի պապի ներկայացուցիչ), Արուստ Թեոփիլեսի (Եթովպիայի եկեղեցու ներկայացուցիչ), Արքանաժ Մար Կլեմիսի (հնդկ մալաբար եկեղեցու ներկայացուցիչ), Ֆրեդերիկ Նորման եպիսկոպոսի (անգլիկան եկեղեցու ներկայացուցիչ), Ալեքսանդրաս աղքեպիսկոպոսի (Կոստանդնուպոլսո հույն եկեղեցու ներկայացուցիչ), Կիպրիանոս միտրոպոլիտի (Ալեքսանդրիայի եկեղեցու ներկայացուցիչ), միտրոպոլիտ Եպիփանի (Անտիոքի եկեղեցու ներկայացուցիչ), միտրոպոլիտ Գեմադիոսի (Կիպրոսի եկեղեցու ներկայացուցիչ), Անտոն քահանայի (Հունաստանի եկեղեցու ներկայացուցիչ) և շատ ուրիշների: Ներկա էր նաև Համաքրիստոնեական եկեղեցիների խաղաղության պաշտպանության կոմիտեի նախագահ դոկտ. Հոմաստկան՝ Պրազայից:

Ռուս եկեղեցու պատրիարքության վերահաստատման 50-ամյա հոբելյանին նվիրված ճառով առաջինը հանդես եկավ գեր. տ. Նիկողիմ միտրոպոլիտը: Նա հանգամանորեն խոսեց 1721 թվականին ռուս եկեղեցու ծնունդի տեղի ունեցած ռեֆորմի և Պետրոս Մեծի հակակառնական քայլի մասին, որ արվել էր ուժի դիրքից ելնելով: Ինչպես նշեց հոգևորը, ինքնակալության կործանումով ռուս եկեղեցու պատրիարքությունը նորից հաստատվեց՝ առաքելական (84) ու տիեզերական ժողովների ոգուց համաձայն և ճշտվեց ռուս եկեղեցու դիրքը մյուս քույր եկեղեցիների հանդեպ: Գեր. արքագան չի մոռանում նաև նշել այս 50 տարիների ընթացքում երեք երախտավոր պատրիարքների կատարած մեծ գործը: Նրանց շնորհիվ ռուս եկեղեցին որդեգրեց նոր դիրք և այժմ նա պայքարում է եկեղեցիների միության ու աշխարհի խաղաղության համար:

Այնուհետև Ալեքսի պատրիարքի առա-

քարկույթյամբ հերթականությամբ ուղծվելի խոսքերով հանդես են գալիս և. Պուլսի տիկ-գերական պատրիարքի ներկայացուցիչը, երուսաղեմի հունաց պատրիարքը, միտրոպոլիտ Կիպրիանոսը (Ալեքսանդրիա), միտրոպոլիտ Եպիփանը (Դամասկոս), Վրաց եկեղեցի Բ կաթողիկոսը, Հարավսլավիայի Ս. Հերման, Ռումինիայի Ս. Ժուստինիան, Բուլղարիայի Ս. Կիրիլ պատրիարքները և մյուս եկեղեցիների ներկայացուցիչները: Ի մասնավորի պետք է նշել, որ հայ եկեղեցու պատվիրակության ղեկավար տ. Հայկազուն արքեպիսկոպոսը կարդաց Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգեն Ա-ի կոնդակը՝ ուղղված Ալեքսի պատրիարքին: Այդ կոնդակով հայ եկեղեցու պետը ռուս պապականությանը եկեղեցու հորեկանի առթիվ իր ուրախությունն էր հայտնում: «Մենք.—գրում էր վեհապետ Հայրապետը Իր կոնդակում,—եղբայրաբար երջանիկ ենք Ձեզ շնորհավորելու և հոգեպես մասնակցելու Ձեր տոնախմբությանը»: Անտարակուր, Հայոց Հայրապետը ոչ թե հոգեպես, այլ անձամբ պիտի ցանկանար ներսև լինել այս կարևոր տոնին, ինչպես ներկա էր չլինել 10 տարի առաջ, երբ նույնանման խանդավառությամբ նորից նշվել էր ռուս եկեղեցու պատրիարքության վերահաստատման 40-ամյա հորելանը: Միհրդեռ Ռիմա հայոց վեհապետ Հայրապետը Ամերիկայի Իր հավատացյալ հոտին այցելություն է տալիս:

Ժողովի վերջում Եզրասիակիչ ճառով և շնորհակալության խոսքով հանդես եկավ Ս. Ալեքսի սրբազան պատրիարքը, ապա հոգեվոր երգերի քաղցրալուր հնչյունների տակ հանդիսականները այցելեցին հորելանական ցուցահանդես, որը հատկապես բացվել էր 50-ամյակի կապակցությամբ:

Երեկոյան ժամը 8-ին, նախքան հյուրերի վերադարձը Մոսկվա, հոգևոր ճեմարանի կամարների տակ տրվեց ընդունելություն և հոգևոր համերգ:

Մայիսի 29, չորեքշաբթի: Այսօր Մոսկվայի երկու տարբեր եկեղեցիներում տեղի է ունենում հոգեհանգստյան պաշտամունք՝ նախորդ երկու պետերի՝ երջանակահիշատակ Տիմոն և Սերգեյ պատրիարքների շիրիմներին վրա:

Ժիշտ ժամը 11-ին սկսվում է առաջին հոգեհանգիստը: Դպրաց դասի հոգեհանգստյան հուգիչ երգերի տակ կատարվում է հոգեհանգստյան հանդիսավոր արարողությունը:

Ժամը 12-ին բոլոր պատգամավորները իրենց մեքենաներով գնում են քաղաքի մյուս մասը՝ երկրորդ հոգեհանգստի: Այս հոգեհանգիստը ևս հավաքել ու այստեղ է բերել

բազմաթիվ մավատացյալների: Հոգեհանգստից հետո, բոլորը մեկ առ մեկ մուտենում են հանգուցյալ Սերգեյ պատրիարքի շիրիմին և խոնարհվում նրա առաջ:

«Ցիշատակն արդարաց օրհնությամբ և պիցի»:

Մայիսի 30, հինգշաբթի, Համբարձումն Ջրիստոսի (հին տոնարով): Այսօրվա հանդիսավոր ս. պատարագը ըստ ծրագրի տեղի է ունենալու Ջագրսկի մայրավանքի վերափոխման տաճարում:

Առավոտ կանոնի հյուրերը դարձյալ շտապում են դեպի Ջագրսկ: Ս. Սերգեյի վանքն ու բակը նորից լի են ուխտավորներով: Դարձյալ տոնական ու բազմադրոհման հնչում են շարժի աշտարակի ծանոթ զանգերը: Ս. պատարագը սկսվելու է ժամը 10-ին:

Վերափոխման եկեղեցին, ինչպես արդեն անունն է հուշում, ս. Աստվածածնի անունով կառուցված՝ մայրավանքի ամենախոշոր ու ամենաշքեղ եկեղեցին է: Այն կառուցված է Իվան Ահեղ թագավորի (16-րդ դար) կապերության վերջին շրջանին: Տաճարն ունի ռուսական ոճի հինգ խոշոր գմբեթ: Ներսիս բոլոր պատերը, ամեն մի անկյուն զարդարված են որմնանկարներով, որոնք զխավորապես պատկերում են Տիրամայր ս. Աստվածածնի կոմքը:

Ժամը տասն է: Ջանգերը բոլորին հրավիրում են ս. պատարագի: Պատարագում է երուսաղեմի հունաց պատրիարք Ս. Բենեդիկտոսը: Հայ եկեղեցու պատվիրակության անդամներն ու մյուս եկեղեցիների ներկայացուցիչները տեղ են գրավում հսկա տաճարի ընդարձակ առյուծում: Հաղթականորեն երգում է վանականների ու ճեմարանի ուսանողների միացյալ խումբը՝ մեկ կողմից, ու Մոսկվայի պատրիարքի հետ եկած քառաձայն խումբը՝ մյուս կողմից:

Ս. պատարագը տևում է մոտ երեք ժամ, որի ընթացքում, հավուր պատշաճի քարոզ է ասում նաև ռուս պապականության Եկեղեցու Արքեպիսկոպոս Իվրոպայի ու Անգլիայի հայրապետական Ավիդիակ և ներկայացուցիչ տ. Անտոնի Եպիսկոպոսը:

Ս. պատարագի ավարտից հետո Ալեքսի պատրիարքը պատարագի Ս. Բենեդիկտոս պատրիարքին շնորհակալության ու եղբայրական սիրտ ջերմ խոսք է ասում, ապա, որպես հիշատակ ս. Սերգեյի վանքից, նրան հանձնում է ռուս եկեղեցու այս սրբի գեղեցիկ սրբանկարը: Երուսաղեմի հունաց պատրիարքը իր ուրախությունն ու գոհունակությունն է հայտնում ջերմ խոսքերի և ստաղծած հիշատակ-սրբապատկերի համար:

Կեսօրվա ժամը 2-ին բոլոր պատգամավոր-

հյուրերը վաճառի սեղանատուն-եկեղեցու/ հրավիրված էին մեծ ճաշկերույթի, որից հետո, ուլքեր ցամկանում են, ծամոթանում են հոգևոր ճեմարանին, վաճառի միաբանական կյանքին և այլն:

Մայիսի 31, ուրբաթ: Դեռևս հախորդ օր-վաճից ինչպես շատերը, նույնպես և հայ եկեղեցու պատվիրակության անդամները հատուկ հրավերներ ունեին երեկոյան մասնակցելու արտասահմանյան եկեղեցիների պատվիրակությունների համար տրվող ճաշկերույթին: Ընդունելությունը կազմակերպել էր ՍՍՀՄ Միևհատրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհուրդը:

Ընդունելությունը տևում է մոտ մեկ ժամ: Ուշ երեկոյան թուրք հյուրերը դիտում են «Ռուս պրավոսլավ եկեղեցին այսօր» կինոֆիլմը՝ ռուս եկեղեցու պատվերով պատրաստված:

Հունիսի 1, շաբաթ: Այսօր հայտնի դարձավ, որ ռուս եկեղեցու հանդիսություններին մասնակցելու է եկել նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ դոկտ. Բելկը:

Հանդիսությունների նախավերջին օրն է: Այսօր նորից գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսին իր հարկաբաժնում այցելություն են տալիս ռուս պրավոսլավ եկեղեցու կառավարիչ տ. Ալեքսեյ միտրոպոլիտը, Գեղեցն սրբազանը՝ հանդիսությունների օրերին հայ եկեղեցու պատվիրակության մշտական ուղեկիցը, և ուրիշներ: Այս այցելությամբ գեր. միտրոպոլիտը մի անգամ ևս եկել էր իր շնորհակալությունը հայտնելու այն բանի համար, որ Նորին Ս. Օծություն Հայոց Հայրապետը, ընդառաջ գնալով այս հանդիսությունների համար ռուս եկեղեցու ուղարկած հրավերին, ուղարկել էր իր պատվիրակներին, որոնք միասին կիսեցին այդ թուրք ուրախությունները: Այս բանը միտրոպոլիտ սրբազանը համարում է եկեղեցիների մերձեցման գրավականներից մեկը: Իր հերթին Հայկազուն արքեպ. Աբրահամյանը շնորհակալություն է հայտնում ցույց տրված ընդունելությունների համար և գեր. միտրոպոլիտին խնդրում, որ իր թարգմանը հանդիսանա Ալեքսի Սրբազան պատրիարքի մոտ:

Հունիսի 2, կիրակի: Հանդիսությունների վերջին օրը: Այսօրվա ս. պատարագը տեղի է ունենալու ս. Աստվածաթաղության տաճարում: Օրվա պատարագից է Հարավսլավիայի Տ. Հերման պատրիարքը:

Ուղիղ ժամը 10-ին սկսվում է ս. պատարագը:

Գեղեցիկ է ռուսաց եկեղեցու այն ավանդությունը, ըստ որի ս. պատարագի ընթաց-

քում թուրք ներկաները միասին և միախորհորդ երգում են «Հավատամքը», «Հայր մեր»-ը և մյուս հոգևոր երգերը:

Ս. պատարագի ավարտից հետո Ն. Ս. Ալեքսի պատրիարքը բեմ է բարձրանում, ուղջունում պատարագչին և զոհունակություն հայտնում առ Աստված, որ Իդ ողորմությամբ ու օգնությամբ թուրքին արժանի դարձնե: Հերման պատրիարքի աղոթքներով, այսօրվա ս. պատարագի շնորհներին:

Կեսօրվա ժամը 3-ին «Ռուսիա» հյուրանոցի մեծ ճաշասրահում Ալեքսի պատրիարքը մեծ ընդունելություն է տալիս պատգամավորներին: Ջերմ միջուրոտ է: Առաջինը ներկաներին է դիմում ռուս եկեղեցու պետը և շնորհակալություն է հայտնում պատրիարքներից, պատվիրակության ղեկավարներից ու ներկաներին: «Չնայած ձեր քաղաքադավաժության»՝ եկեղեցական պարտականությանը, — դիմելով նրանց առում է նա, — քրիստոնեական սիրով ընդառաջ գնացիք ռուս եկեղեցու հրավերին և բարեհաճեցիք գալ Մոսկվա՝ միասին անցկացնելու այս գեղեցիկ օրերը: Փա՛ռք Աստծուն»:

Այնուհետև ելույթներ են ունենում Երուսաղեմի հունաց և Հարավսլավիայի պատրիարքները, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի քարտուղարը, ՍՍՀՄ Միևհատրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ֆուրովը և ուրիշներ:

Հունիսի 3, երկուշաբթի: Վերջացել են հանդիսությունները: Դարձյալ Վնուկովոյի օդանավակայանը: Վերադարձի վերջին պահերն են: Նորից ռուս եկեղեցու ներկայացուցիչներ, ի դիմաց Ալեքսի գեր. միտրոպոլիտի, Գեղեցն եպիսկոպոսի, եկել են իրենց հայ եղբայրներին ճամփու դնելու:

Ողջաօրումնե՛ր, ողջագործումնե՛ր... Հայ պատվիրակության անդամներից տ. Պարզև եպս. Գևորգյանը մնում է այնտեղ՝ Մոսկվայում, իր պաշտոնատեղիում, իսկ մյուսները ուղղություն են վերցնում դեպի Երևան:

Այսպիսով հայ և ռուս քույր եկեղեցիների պատմական և բարի ավանդության մատյանում գրանցվում է մի կարևոր ու լուսավոր էջ ևս:

Մենք ևս Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի բառերով ասենք.

«Թող Աստված անսասան և փառքի մեջ պահպանի ռուս պրավոսլավ եկեղեցին և նրա պատմական ս. Աթոռը, խաղաղության և լուսավոր ծաղկումի մեջ՝ ի միեկալությամբ ռուս աստվածաբան ժողովրդի և հուրախություն մեզ թողորիս»:

ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԾԱՔԱՐՑԱՆ:



Մ Ա Յ Ր ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 23-ին՝ հինգշաբթի.— և օր 3ի-
նանց: Համարձումն Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագն հոգ. տ.
Գնորդ վրդ. Սերայդարյանը և քարոզեց
«Համարձաւ Տէրն մեր յերկինս» թուրանով:

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղ-
թանք՝ հայրապետական Աթոռի Ասից ս. Էջ-
միածին փոխադրութեան հիշատակին, հան-
դիսադրութեամբ զեր. տ. Հայկազուն արքեպ.
Աբրահամյանի:

• •

Մայիսի 25-ին՝ շաբաթ.— Ռուս եկեղեցու
պատրիարքարանի հրավերով Մայր Աթոռից
Մոսկվա մեկնեց հայ եկեղեցու պատվիրա-
կութիւնը՝ գլխավորութեամբ զեր. տ. Հայ-
կազուն արքեպ. Աբրահամյանի, մասնակցե-
լու համար ռուս պրավոսլավ եկեղեցու պատ-
րիարքական Աթոռի վերահաստատման հիս-
նամյակի տոնակատարութիւններին: Հայ ե-
կեղեցու պատվիրակութեան մյուս անդամնե-
րն էին՝ Ռուսաստանի հայոց թեմի առաջ-
նորդ զեր. տ. Պարգե եպս. Գնորդյանը և ս.
Գեղարդի վանքի վանահայր հոգ. տ. Նարեկ
վրդ. Շաքարյանը:

Մեկ շաբաթ Մոսկվայում մնալուց և տո-
նակատարութիւններին մասնակցելուց հե-
տո, հունիսի 3-ին, երկուշաբթի օրը, հայ ե-
կեղեցու պատվիրակութիւնը վերադարձավ
Մայր Աթոռ:

• •

Մայիսի 26-ին՝ կիրակի.— է կիր.: Երկուրդ
Մաղկազարդ.

Մայր տաճարում պատարագն հոգ. տ.
Գնորդ վրդ. Սերայդարյանը և քարոզեց «Մե-
ծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ
մեզ հասեալ» ընթարանով:

Հունիսի 1-ին՝ շաբաթ.— Հոգեգալստեան ս.
պատարագ մատուցելու նպատակով զեր. տ.
Հուսիկ եպս. Սանթուրյանը, իրեն ուղեկից
ունենալով բարեշ. Գրիգոր սրկ. Բուխաթյա-
նին, Մայր Աթոռից մեկնեց լենինական:
Գեր. սրբազանը կիրակի օրը, հունիսի 2-ին,
ի ներկայութեան հոծ բաղմութեամբ, լենինա-
կանի ս. Աստվածածին առաջնորդանիստ ե-
կեղեցում մատուցեց ս. պատարագ և քարո-
զեց «Ձի եթէ ես ոչ երթայց, Մխիթարիչն ոչ
եկեացէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքելից
զեա առ ձեզ» ընթարանով:

Երկուշաբթի օրը, հունիսի 3-ին, տ. Հուսիկ
եպիսկոպոսը վերադարձավ Մայր Աթոռ:

• •

Հունիսի 2-ին՝ կիրակի.— Հոգեգալստեան
(Պենտեկոստէ, յիսնեւորդ օր ի զատկէն).
Մայր տաճարում պատարագն և քարոզեց
հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

• •

Հունիսի 9-ին՝ կիրակի.— Ա. կիր. Զկէի հո-
գեգալստեան: Սկիզբն Յարութեան կիրա-
կէից: Յիշատակ եղիայի մարգարէին.

Մայր տաճարում պատարագն արժ. տ.
Հովհաննես քհն. Մարությանը:

• •

Հունիսի 10-ին՝ երկուշաբթի.— Տօն Սրբոց
կուսանացն Հոփսիմեանց.

Ս. Հոփսիմեի վանքում պատարագն
վանքի վանահայր հոգ. տ. Պողոս վր. Նշան-
յանը: Քարոզեց զեր. տ. Հայկազուն արքեպ.
Աբրահամյանը:

Հունիսի 11-ին՝ երեքշաբթի.—Տօն Արքոց
կուսանացն Գայիանեանց.

Ս. Գայանեի վանքում պատարագեց արժ. տ. Նշան քհն. Բելլերյանը: Քարոզեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ «Անձինք նուիր-
եալք սիրոյն Քրիստոսի» քնարանով:

Հունիսի 13-ին՝ Հինգշաբթի.—Տօն Արքայն
Յովնանու Կարապետին և Աթանագիենայ ե-
պիսկոպոսին.

Ս. Շողակաթի վանքում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հունիսի 15-ին՝ շաբաթ.—Տօն Արքայն
Գրիգորի Լուսաուրչին մերոյ ելն ի վիրապէն.

Մայր տաճարում, իջման ս. սեղանի վրա,
պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկ-
յանը:

Հունիսի 16-ին՝ կիրակի.—Բ. կիր. Ջկնի
Հոգեգալստեան: Տօն Կաթողիկէ ս. Էջմիած-
նի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը: Քարոզեց զեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Հաճարտ ս. պատարագի կատարվեց մաղ-
թանք՝ հանդիսադրությամբ զեր. տ. Հայկա-
զուն արքեպ. Աբրահամյանի:

Հունիսի 18-ին՝ երեքշաբթի.—Հոնգոնի ս.
Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ հոգ. տ. Ար-
սեն վրդ. Բերբերյանը շուրջ երկու ամսվա
արձակուրդով Մայր Աթոռում մնալուց հետո
մեկնեց իր պաշտոնատեղին:

Հունիսի 23-ին՝ կիրակի.—Գ. կիր. Ջկնի
Հոգեգալստեան.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը:



ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային բովանդակ ճիգերու զանազան իրագործումներուն մեջ մարդու գերագույն տեսիլքը կմնա կատարելության իղձը: Կատարյալին իղեայլը մարդուն մեջ Աստուծո ձայնն է կամ Անոր ներկայությունը: Արդարեւ, երկար դարերու ընթացքին, մարդկության ստեղծագործությունները՝ կրոնը, արվեստները, գիտությունը, փիլիսոփայությունն ու դաստիարակությունը, մեկ խոսքով՝ իմացական ջանքերուն համապարփակ նվաճումները, որ ծանոթ են մեզի քաղաքակրթությունը ընդհանուր հասկացության տակ, ձգտեր են մեկ նպատակի՝ ձերբազատել մարդը իր անկատարության տառապանքեն: Մարդու մեծագույն կայունը այս սշխարհի վրա իր կատարելության երազն է, իսկ իր տարապայման վիճարդ՝ անկատարության դժբախտությունը: Մարդկային հոգիին այս հավիտենական տագնապանքին համար չըսվեցա՞վ արդյոք. «Եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր Լուստարեալ է»: Որովհետեւ, մարդը իր վերնագույն վիճակին, որուն կտեցնա անդադար, և որ իր բուն ճակատագրին կոչուով է, կատարելության ճամփով պիտի հասնի: Վասնզի կատարելության իրագործումը պիտի ծնի իր միջ Նոր Որակը՝ Աստվածությունը:

Պարզ նայվածք մը մեր շուրջ՝ և ահա ճշմարելի կդառնա կատարելագործման այս օրենքը մուցիսկ բնության ամենահասարակ երևույթներուն և իրերուն մեջ, որ իրարմով ամբողջանալու և գիրար լրացնելու ձգտումով կարտահայտվի: Բնությունը, որ այնքան գեղեցիկ և ներդաշնակ է, կմնա թերի ստանց մարդուն: Մարդը, որ ստեղծումներուն գլուխ-գործոցն է իբրև աստվածային հիասքանչ էակ մը, իր ամբողջականության մեջ սակայն անկատար, կմղվի ինքզինք լրացնելու հավանձայն այն մտապատկերին, որ իրեն լուգա կրոնի, արվեստի և գիտության աստեղահոծ շավիղներեն: Իր էության այլքերն տարժրացող անկատարության ձայնն է, զոր զգա անբարբառ, և կըղձա աստուծոմով ամբողջացնել և ներդաշնակել իր գոյությունը: Ինքզինքին պակասավորությունը... Ա-

տիկա մերթ հարուստին մեջ կարտահայտվի աշխարհիկ կյանքի փարթամ շքեղություններով, մերթ աղքատը դժբախտ արարած մը կընն իր գրկանքներուն մեջ, հաճախ տգետը կտոչոթն իմաստամեայու ծարավով և իմաստունը իրմն ներս և իրմն դուրս՝ աշխարհո նվաճելու փառասիրությամբ: Ինքզինքին պակասավորությունը: Այսինքն՝ ներաշխարհային պարապը, ամայությունը... Զգայաւորանական վայելքներու բացակայությունը չէ ատիկա, որ մարդը կընն ճիղն սողուն մը, և որոնց հափրացումեն վերջ կյանքի իմաստը կթվի սպառած ըլլալ: Ատիկա հոգիին հավերժական կիրքն է, որ կրցալատի վսեմագույնին իղեայլով կյանքի մշտարժամ հնոցին մեջ և մետաղի մը պէս կծուվի, կվերածալվի և բյուրագան ձևեր կստանա իր կատարյալ ու վերջնական ձևը գտնելէ առաջ: Եվ այդ անընդմեջ ու մշտնջենական ձևափոխությունները մարդեն ներս՝ իրենց խորհրդավոր ու հավասարակալ արտահայտություններով անկատարության ընդերկրյա խուլ ձայնեալ չեն միշտ հաճուն իրենց վերջնական տարազներուն: Եվ արդարեւ, իր կատարելության քարծուները գտնելու համար չէ՞, որ մարդը կվազե դարերու մեջն տրտում ու ողորջ պատրանքներով: Ահա Մակեդոնացի մը և Դիոգինես մը: Մեկուն համար աշխարհի անսահման տարածությունները նեղ կուգային, որոնց աշխարհակայությամբ կը ձգտեր ան իր մեջ և իրմն ներս՝ իր իսկատիւյը գտնել: Հակառակ բնեռն՝ Դիոգինեսի մը համար ալ տակաւի մը պարունակությունը շատ էր: Բայց Թիեոկոն ձգտումին տարալետ ձևերը կմնան անոնք, վասնզի Մակեդոնացին իր իսկ բերնով պիտի հայտարարեր.

— Եթե ես Աղեքսանդր չըլլայի, պիտի ուզեի Դիոգինես ըլլալ:

Մոկրատ «Թանի» գրեզ՝ Կպատգամեր, ո՛չ հարկաւ իբրև զգաւտ ինքնագիտակցություն մը լուր, ալ լայն անճանաչաւում, որով կուգեր խորաշաւիկ մարդկային ուժեռուն և արժեքներուն տարողությունը և որուն մեջ կթեմարեր կատարյալ մարդու իր մտաւիպարը: Ժամանակակից հեղինակ մը շատ

դեղեցիկ կեցողակացնե. «Ինքզինք ճանչնալ, վերջին հաշիւով, գլխաւոր ճանչնալ է»: Պղատուն բարիին բարձրագոյն գաղափարին մեջ կգտնեք մարդու նմանությունը Աստուծոյ հետ՝ աստիճանական կատարելագործմամբ: Չարեն փախուստ, կազդարարեր, որպէսզի հասնինք աստվածության կարելի և ամբողջական նմանեցման: Եվ ահա ան, ըջմարտության ու Արդարության դարեանդնեումն վրա բարձրացուցած մարդը՝ հարաբերիլ կուտար Աստուծոյ հետ: Եվ վերջապէս, Արիստոտել, ավելի իրատես և դրապաշտ՝ կուգա «մարդու վերափոխությունը Աստուծո» սկզբունքը, հակառակ իր խնամյալ վերապահության, գտնելու մարդկային էության ամբողջական ու անդաշնակ ծաղկման մեջ: Եվ այս պայսէս, հարատև որոնումներով, կշարունակվի մինչև Բանթ, Հեկել, Երբենհաուսեր և Նիցշե՝ հասնելով արդի ժամանակներու Պերկսոնի և Մորիս Պոնտելի մը բարոյագիտական վարդապետություններուն: Արդդք Նարեկա սրբակյաց Մոնագը իր անկատարության խելահեղ տառապանքներն չէ՛ր, որ «կնքներէր» և դեպի Աստուծո կատարելության դիրքերը իր ունեցած անհուն տենչանքին մեջ կաթվածահար կրլար կարծես: Մինչ Ենոքիային կմաքրագործէր, կըսրբացներ ինքզինք հեզամբմունց պաղատանքի մը մեջ. «Եւ ողորմես՝ քո արարածոց և ինձ բազմամեղիս»: Բոլոր ժամանակներու մեջ մարդը իր ճակատագրին այս կոչումով, թող ուրիշներ ըսեն՝ խորհրդով, պիտի մնա մարդկային իմացական բովանդակ գործունեությանց գլխավոր մտասնետուր: Կատարելության սկզբունքը Աստուծոյ դիտումն (considération) է իբրև անհրաժեշտ օրենք կատարելության քոյոր որոնումներուն մեջ: Կատարյալին պատկերը, սակայն, այն չէ, ինչ որ գերմարդու գաղափարը: Գերմարդը վայրագ ու ալլամերձ նկարագիր մը ունի՝ եւսկեդրոն բնավորություններու հատուկ բիրտ այլուրացությամբ: Գերմարդը արգավանդութեն ավելի կյանքի վրա ճնշող ծանր բեռ մըն է և բռնակալ մը՝ իրավունքներու տարադեպ տրամադրություններով: Գերմարդը չի կրնար ըլլալ հանձնարարելի այն օրինակը, որ մարդկության ընդհանուր ձգտումներուն հասանելի բարձրության վրա կգտնվի: Իր նպատակին հասնելու ճամփուն վրա ան՝ գերմարդը, կպարտավորվի չճանչնալ ոչ ոք ու չգթալ ոչ մեկուն: Ո՛չ վատը, ո՛չ լավը, ո՛չ բարձրը, ո՛չ բարձրագոյնը և ո՛չ նոյնիսկ ինքզինք: Խիղճ չունենալ ո՛չ ուժեղին և ո՛չ ալ տկարին հանդէպ: Իշխողներու բարոյականություն մը, որ ամբողջովին պետք է տարբերի հպատակներու բարոյա-

կանություններն և հերքեք զայն: Եթե, ստուգիլ, Չարաթուստրայի մը բերնով բարբառող գերմարդ մը հնարավոր է հեղինակի նկարագրածին պէս՝ «Մարդը բան մըն է, որ պետք է հաղթահարվի», դեպի իր տիպային դիրքերը ունեցած վերելքով, ապա այդ վերելքը բաժանում մը, հեռացում մըն է մեզմե, նմանական կապերու իզուր մը, որով մարդը կայակերպի և կդառնա նվազ մարդկային, հետևաբար նվազ ընդհանրական և իրեն միանալու առնչակցական կարելի տարածությունը կջնջն ու կխլն մեզմե: Եվ ահա այդ իսկ պատճառով ան մեզի չի՝ պատկանիր, և մենք չենք կրնար այդպիսին խորունկ սիրով մը պաշտել: Եթե գերմարդը պաշտումի առարկան է, որպէս այդպիսին, պետք է անպայմանորեն նախ ի՛նքը մեզի գա, պետք է մեզի իջնե, որպէսզի մեզ իրեն տանի: Գերմարդը, վերջին հաշիւով, իր իրագործման վերջնագոյն սահմանին վրա, ուժի տիրապետությունն է, իսկ մարդկությունը՝ կարոտ է սիրո՝ հաղթանակի: Այս անգամ ալ, ինչպէս միշտ, Քրիստոս է, որ կբերե լուծումը այս բարդ խորհուրդներուն: Եթե Քրիստոս Աստված էր, մարդ դարձավ, եթե գերմարդ էր, հասարակին պարզությունը հագավ: Եվ Ան նկալ, որպէսզի մարդը տանի ոչ թե դեպի երկբայելի գերմարդը, այլ՝ ապահով աստվածությունը: Այսինքն՝ դեպի կատարելություն, դեպի բյուրեղացում, դեպի ազնվացում ու ամբողջականացում: Գերմարդը հոռետեսությունն է մարդ-իրողության, իսկ քրիստոնեությունը՝ պանծացումը մարդու լուսավոր էության:

Կկարծենք, որ աշխարհային ազդակներն և գործունեներն չբավարարված, անգոր և հուսահատ մարդու հոռետեսությունն էր, որ ստիպեց Խոթմա Պոտտան, ի գին անհասկընալի խաղաղության մը երազմը, մարդուն մեջնե ջնջել և ուրանալ մարդուն անձը, հավատացյալը առաջնորդելով դեպի Նիրվանա՝ գերագոյն անէացում, տրված ըլլալով, որ մարդուն տանջանքները իր կիրքերն կըծնին, և հետևաբար՝ իբրև դարման, անձին մահացում, ինքնուրացում կթելադրեր: Մինչդեռ որքա՛ն տարբեր է Քրիստոս: Բեկկանի կարելի և անհերքելի հաղթանակներուն տեսիլքով խանդավառ՝ ճամփա ինկալ Ան: Բերավ կիրքերու տիրապետության առջև ո՛չ թե պարտություն, այլ անոնցմե ազատագրում, ո՛չ թե անձի մահացում, այլ անոր կատարելագործումը: Երբ մեկը կուրանա ու կծխտն, մյուսը կընդունի ու կվավերացնե: Երբ մեկը կոչնչացնե, մյուսը կապրեցնե, կըվեհացնե և մարդը կվերադարձնե իր նախահայրն ստեղծած Արարչի պատկերին:

Ահա թե ինչո՞ւ մեկուհի մեջ նախանշի պարտավորապաշտ ոգին մյուսին քով կվերածվի հաղթության փառապանակի:

Տեղին է այստեղ ոգեկոչել մարդկային հոգեկան ու մտավոր ճիգերուն քուն խորքը հանդիսացող այն հուզիչ ճշմարտությունը, որ այնքան խոռվիչ զգայնությամբ մը երգած է մեծ ու դժբախտ բանաստեղծ մը.

Born? dans sa nature, infini dans ses vœux,
L'homme est un Dieu tombé qui se souvient
des dieux.

Եվ հիրավի, երկինքներու երազներեն լուսավորված ճամփուն մեջ է, որ պիտի գան պտղավորի մարդկային ճիգերը, որոնցմով ինքզինք կատարելագործելու անդուլ վերելքին մեջ հուժկետու վատնված ջանքեր պիտի չմնան մարդուն պայքարները, հուսահատությունները, խարխալումները և արցունքները, որոնք ոչ թե իր կարողություններուն ապիկար ցուցանիշներն են, այլ իր իսկ արժեքը կկազմեն.


...C'est vraiment, Seigneur, le meilleur
témoinage
Que nous puissions donner de notre dignité
Que cet ardent sang:oi qui roule d'âge en âge
Et vient mourir au pied de voire éternité.

Կա՞ արդյոք այս աշխարհի վրա մարդու ձգտումներուն բարձրագույն ու ազնվագույն հարացույց մը, որուն վրա կենտրոնաձգվեին մեր բոլոր տենչերը, մեր բոլոր կարոտներն ու ազնիվ փառասիրությունները:

Անշուշտ: Եվ ատիկա կատարելության տեսլականն է մարդու մեջ: Ծեքսպիր ամեն մեկն ավելի Մարդը կգնահատեր մարդուն մեջ: Եվ ատիկա պետք է հասկնա՞յ՝ կատարյալ Մարդը, իր տեսանկյուն կատարելությունը: Կթվի, որ ատիկա մարդ արարածին անդուլ կատարելագործումն է ինքն իր մեջ, ցկարագրի կերտումը և բարոյականի մշակումը: Մեկ խոսքով՝ հերքումը իր անձնավարձակ մախատիպին: Մարդ ինքզինք կենդանական աշխարհի պատկանելիությունեն կազատագրե միայն բարոյականությամբ: Մտքի, տաղանդի և ձիրքերու փայլուն կարողությունները կրնան ապահովագրել մարդը, բայց չեն բարձրացներ: Իսկ բարձրանալու համար առաջնապահ գծի վրա բարոյականությունն է պետք: Մարդը, ինչքան ալ տկար ու թույլ, մարդ է և կոպտարի կենդանի ըլլալն, որքան ալ համեստ «ձիրքերու» տեր ըլլալն: Թող «կարողություններուն» պատիք շլացումները չգիւժկոյն մեզ և թող չքոնադատեն մեր միտքն ու սիրտը իրենց հեշտին ստորկության: Բարոյականության կատարելու-

թյունը թող գա իշխելու մեր մեջ, որ մերն է, մեզի պարգևված շնորհ մը, և թող անոր կորովը ամրացնե մեր սիրտերը: Կկարծե՞ք արդյոք, որ այս աշխարհի վրա սուտի ու կեղծիքի դեմ մաքառում մը ավելի դյուրին գործ է, քան զինված զորաբանակի մը դեմ կռիւլը: Ընդդէմ արդարության մը անտեսված իրավունքներուն պաշտպանությունը ավելի քիչ զոհողության և անձնուրացության կկարոտի, քան ասպատակված քաղաքի մը անմեղ քնակչության ազատագրությունը: Եվ վերջապես՝ ճշմարտության մը սիրույն վտանգան արիության մը նվա՛զ հերոսական է. քան հայրենիքի պաշտպանության արագան պարտքը: Արդարեւ, ատոնք միննույն առաքիհության մեծագույն կանոնները պիտի մնան, միննույն գործոցները՝ մարդը իր կատարելության տանող: Երբեմն նույնիսկ, ընկերային կյանքի մեջ, հոգեբանական ու շահաւիրական ինչ-ինչ շարժառիթներով կատարված ճշմարտագանցություններու դիմաց, ի խնդիր բարոյական սկզբունքներու, ավելի մեծ չափով դյուցազնություն կպահանջվի, քան ռազմի դաշտի վրա:

Զորաքանչյուր բարոյականություն կարգավորված գաղափարական հավատք մը կենթադրե: Բարիին և ժշմարիտին տեսիլքով համակված մեր մարդու բարոյական կատարելագործությունը մենք կսպասենք Աստուծո և Հավատքի ուղիներեն: Կյանքը Աստուծո օրենքներով պետք է ներդաշնակվի, և հոգին տիրապետե նյութին վրա: Այլապես մարդկության գլխուն թափվող աղետները վերջ պիտի չունենան: Աստված չէ, որ կստեղծե մարդուն դժբախտությունները, այլ մարդը՝ ի՛նքը: «Ես համոզված եմ,—կըսե Ռոսսո,—որ Աստված արդար է, և արդարությունը իր բարության հետևանքն է: Մարդոց անարդարությունը իրենց գործն է և ոչ թե Աստուծո: Որովհետև Աստուծո բոլոր ստորագելիներուն մեջ ամենահատկանշականո Բարությունն է, և Բարությունը իր հզորութենեն հառաջ կուգա: Ան բարի է, որովհետև մեծ է»: Ո՛հ, թող Աստուծո մեզի տրված բարությունը, խոնարհությունը և գթությունը ըլլան մեր ուղեցույց աստղերը կյանքի ամեն մարզի մեջ և գործունեության բոլոր դաշտերուն վրա: Անշուշտ, աստվածային մեծության չենք կրնար հասնիլ: Ատիկա վեր է մեր հոգեղեն քնությունեն: Բայց մեծության կարելիություններն ունինք մեր մեջ որպես աստվածային շնորհ: Պարտինք այդ կարելիություններն օգտագործել, որովհետև մարդու կատարելագործումը, մեծությունը Աստուծո պատվիրաններն արգասավորելու մեջ է, և մարդու ճշմարիտ կոչումը այս երկրի վրա Աստուծո սկսած գործին շարունակությունն է:



ԳՐԻԳՈՐ ՀԱՎՈՐԱՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՆ ԵՎ ԻՐ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Լայն են Լամբրոնացու քննադատության ընդգրկման սահմանները: Նրա համար ամենից բարձր է ու թանկ ճշմարտությունը: Հանուն այդ ճշմարտության նա չի խնայում ո՛չ յուրայիններին և ո՛չ էլ ուրիշ ազգերին. բայց նրա քննադատական խոսքը բարեկամական է և խրատող: Հարկ եղած պարագային նրա մեղակացնող խոսքերը հասարակ մահկանացուների վրայով անցնում, գնում հասնում են մինչև մարգարեներին ու թագավորներին, որոնք նույնպես անսխալական չեն: Աշխարհի բոլոր ազգերի միությունը Լամբրոնացին պատկերացնում է որպես մի մեծ, հոյակապ շենք, որի բարձր ու հաստ որմերի մեջ ամեն մի ազգ ու ժողովուրդ, դնում է իր քարը, մասնակցում այդ շենքի կառուցմանը: Եղեյ են աշխարհում մարգարեներ, որոնք իրենց բոցաշունչ մարդասիրական խոսքով նույնպես մասնակցել են այդ շենքի կառուցմանը: Մարգարեների ամեն բարձր մի անասան հիմնաքար է եղել շենքի որմերի համար: Այդ խոսքերն ու ժողովրդի դրած քարերը՝ անքակտելի կերպով շաղախվել, ամրապնդվել են: Սակայն եղել են և այնպիսի մարգարեներ, որոնք իրենց ազգախտի, վանող խոսքով ու տեսություններով վնասակար գործեր են կատարել ազգերի համերաշխության ու միության այդ շենքի կառուցման գործում. «Մարգարեքն քո... տեսանէին քեզ գոյր տեսիլս և առեղծուածս մարգարեանային: Զմիջնորդ խաղաղութեանն զՔրիստոս հիմն ատելութեան և հակառակութեան առաք: Զգլուխ անկեան որմեղն միութեան բաժանման խտրոց արկին ի մէջ մեր մարգարեքն յիմարացեայք, և

զիս՝ող ոչ լացցեն զմեզ ճշմարտութեան աշակերտք»²¹:

Թեև քրիստոնեական վարդապետությունը սիրո և միության գաղափարներ է քարոզում, և շատ ավելի մարդասիրական է, քան հեթանոսական կրոնները, բայց մեր հեթանոս, տարբեր ազգերի պատկանող հայերը, որպես դրացի ազգեր, իրար հետ ավելի հաշտ ու խաղաղ են ապրել, քան թե արդի քրիստոնյա տարբեր ազգերի պատկանող մարդիկ: Զէ՛ որ մենք «ոչ ենք անարժան քրիստոնեայքս քան զհարս մեր զհեթանոս...»²², — դառնացած ասում է Լամբրոնացին: Ապա, թեև քրիստոնեությունը ճշմարիտ կրոն է, ու մեր դարաշրջանն էլ ավելի յուսավոր, քան թե հեթանոսական ժամանակները, այսուամենայնիվ, դեռ կան ազգերի խտրություն քարոզող քրիստոնյա մարդիկ, — ասում է ատենաբանության հեղինակը, — որոնք իրենք խաղախվում են տգիտության աղջամուղջի մեջ՝ խավարը հրամցնում որպես լույս, թշնամությունը՝ որպես բարեկամություն, և ատելությունը՝ որպես սեր: Սիրո և խաղաղության բացակայության վնասակար հետևանքները տարբեր ազգերի կյանքում ցույց տալու համար, Լամբրոնացին դարձյալ դիմում է պատմական օրինակներին:

Մի՛թե անմիաբանության և սիրո բացակայության պատճառով չէր, որ ընկավ հզոր Հռոմը, ինչո՞ւ պատակտվեցին ու թնկան մեր Արտաշեսյան, Արշակունյան և Բագրատունյան հարստությունները, Մեծ Հայաստանը: Այս կապակցությամբ Լամբրոնացին գուցակցում և կշռադատում է սերն ու դավանանքը, այլ կերպ ասած՝ սերն ու հավատը: Նա ուզում է ցույց տալ, թե այս երկուսից

* Եարույնակված «Էջմիածին» ամսագրի 1988 թվականի № 7-ից:

²¹ Աճ, էջ 78:

²² Աճ, էջ 86:

որի՞ն տալ առաջնությունը, ո՞րն է դրանցից գորեղը և կարևորը, որ կարողանում է կապել մարդը մարդու և ազգը՝ ազգի հետ: Պատմության մեջ քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ տարբեր հավատի ու դավանանքի պատկանող ազգեր թշնամացել և նույնիսկ իրար կոտորել են ու այդ կոտորածներն անգամ սրբագործել իրենց հավատով ու դավանանքով: Սակայն աշխարհի պատմության մեջ չի եղել երբևէ որևէ դեպք, որ սիրո պատճառով ազգերի ու մարդկանց մեջ կոիվ առաջանար, դա խելագարություն կհամարվեր: Ընդհակառակը, սերը միշտ ծնել է բարեկամություն ու խաղաղություն, միշտ կանխել, կաշկանդել է կոիվներն ու կոտորածները, եթե այդ սերը չի աղավաղվել, կամ նեղ ազգամոլությամբ չի թունավորվել: Եվ քանի որ սերը այդպիսին է, ապա տարօրինակ կլինի «գիտելով՝ գուցե դառնություն-միայն սովորություններ, սիրո՞յն վերջապետ: Մի՛, եղբարք իմ, աղաքեմ, մի՛ գայս խորոհել... կամի՞մք զի՛ սիրեացուք մեք, նախ զսերն առատասցուք»²⁶: Ուրեմն Լամբրոնացու մոտ սերը ոչ միայն բարձր է դավանանքից, այլև այդ սիրո բարերար ազդեցությունը մարդկության հոգեկան կյանքի բնագավառից շատ հեռու է գնում: Նա բարիք է ոչ միայն հավատի ու հոգու համար: Նա սնունդ է մարդկանց ոչ միայն բարոյական, այլև աշխարհիկ, քնկերական ու ընտանեկան կյանքի համար: «Ի՛նչ որ գրեմք ընկերին բառնալ, կատարել զօրենսն Քրիստոսի. ո՛չ որ նախ խոնարհի, նախապատիւ բարձրացի, ո՛չ որ զկատարեալսն ունի սեր, ոչ խնդրել զիւրեմ»²⁷: Բազմակողմանի ջնհարատության ենթարկելով մարդկանց, եկեղեցիների, դավանանքների, ծեսերի, իր ազգի, ուրիշ ազգերի թերությունները, նեղմիտ, հետամնաց հայացքները, Լամբրոնացին, ինչպես նշվեց վերևում, առաջադրում է նաև բժշկվելու միջոցները. նա խարազանելով խրատում է, մերկացնելով ցույց է տալիս ուղիղ ճանապարհը, մատնանիշ անելով այստեղ, ցույց է տալիս նաև դեղը: Նրա կրքոտ խոսքի մեջ կա բարեկամական շեշտ, խստության մեջ՝ մեղմություն, և բարկության մեջ՝ գորով ու սեր: Նա միաժամանակ լավատես է և ցուղ է տալիս այն ուղիները, որոնք տանում են դեպի բարեկամություն ու խաղաղ կյանք: Որո՞նք են այդ ճանապարհները: Մարդը մարդու և ազգը ազգի հետ կապող բարեկամական ամենագորեղ միջոցը, ինչպես տեսանք, Լամբրոնացին համարում է սերը, որի շուրջ Ատենաբանության մեջ պատկերվում է նրա ամբողջ խոսքը և կազմում այդ գործի

էությունը: Հիմնվելով Ավետարանի և առանձնապես Պրոուս առաքյալի քարոզած սիրո վրա, երբեք տարբեր դավանանքներ ունեցող, տարբեր ազգերի շահերից, Լամբրոնացին սիրո գաղափարը ավելի է լայնացնում ու խորացնում: Ատենաբանության այն մասում, որտեղ նա խոսում է հաւամարդկային սիրո և խաղաղության մասին, կրոնի և եկեղեցու սպասավորներին դիմում է այսպես. «Ռատապարտեացի արտոնառն զուպարոնիչն մեր, եղբարք... և՛ սէոն, և՛ իսողաղութիւնն ի փրկչէ մերմէ նորոգեալ, սէրն ոչ ազգի առ իւր ազգ, այլ ամենեցուն քրիստոնէից լինել ի Քրիստոս մի ազգ»²⁸: Եվ քանի որ սերն ու խաղաղությունը համամարդկային են, ուստի այդ գաղափարները տարածողները ոչ մի արգելքի առաջ չպիտի ընկնեն, այլ համարձակորեն քարոզեն համազգային սեր՝ առանց վախճնալու հնամուլ, ազգային նեղ ավանդություններից: Ամբողջ տիեզերքի փողերից պիտի հնչի համամարդկային սիրո ձայնը. «Լուսաք զտեսուրն անուտ ձեր խոստմունս. խրախուսեցէք առ այս բարբառոյ յոյս՝ փող տիեզերաց. ելէք ի վերա ամետարսնական բարձր լեռիցն, անտարանիչք Սիովնի, բարձրացուցէք, մի՛ յնայէք զբարբառս ձեր, բարձրացուցէք, մի՛ երկնէք յառանդութեանցն երկիրէք»²⁹: Երբ մի ազգ ազատագրվում է հնից ժառանգություն մնացած ազգամուլ, քարացած ավանդություններից, որոնց հիմքը մեծ մասամբ լինում է նեղ կրոնական, — այդ նշանակում է, որ տվյալ ազգը առաջադիմում է, կտրում է սերը կաշկանդող շղթաները և այն դնում ավելի լայն ուղու վրա: Եթե ամբողջ տիեզերքը պիտի շեփորի սիրո զորության և հաղթանակի մասին, նշանակում է՝ այդ սերը պիտի լինի համաշխարհային: Ահա այսպիսի սեր է քարոզում Ներսես Լամբրոնացին, մի սեր, որի «պտուղներն անգնահատելի են»: Այդ սերը բարձր է տասնաբանաց բոլոր պատվիրաններից և գորեղ՝ աշխարհի ամենահզոր բռնակալներից: Ըստ Լամբրոնացու՝ հավատ, խաղաղություն և բարոյ կյանք հաստատելու համար ինչ որ բռնությամբ չեն կարող անել նույնիսկ աշխարհակալ պետությունները, շատ հեշտությամբ կարող է անել համամարդկային սերը: Այն, ինչ որ բռնությունը, անը, սարսափը փշրում, բաժանում են, սերը միացնում, ամբողջացնում է: Այսպիսով, հակառակությունը, ատելությունը, անձնական և ազգային սնապարծությունը, պատերազմները, — այս բոլորը սիրո, հետևաբար և խաղաղության անհաշտ թշնամիներն են: Երբ տգիտության մեջ ըն-

²⁶ Աճդ. էջ 100—102:²⁷ Աճդ. էջ 102:²⁸ Աճդ. էջ 106 (Ընդգծումները մերն են—Գ. Լ.):²⁹ Աճդ. էջ 112:

կողմված, թեկուզ և մի քաղմահազար ու հզոր ազգի հոգին չի լուսավորված սիրո մահազայթերով՝ նա վայրենի է։ Եթե լուսավորյալ և մարդասեր վարդապետության սպասավորները ձեռք չեն մեկնում խառնարի մեջ խարխալող իրենց անծանոթ ու հեռու այդ եղբայրներին, նշանակում է դրանք էլ խախտում են սիրո նվիրական պատվիրանը և վտանգում աշխարհի խաղաղությունը։ Աշխարհը դատարկ ու անավոր կլիներ առանց մարդու, իսկ մարդը դատարկ կլիներ առանց հոգու, քայքայ կարող է պատկերացնել հոգին առանց սիրո։ Մարդու հոգեկան աշխարհը կառուցված է երեք գործող սյուների՝ հավատի, սիրո և հույսի վրա։ Երբ ընկնում է դրանցից սիրո սյունը, որը մեծ մասամբ իր վրա է կրում հոգու հոյակապ շենքի ծանրությունը, ամբողջ շենքը սասանվում է։ Չի կարելի երևակայել հավատ, առանց սիրո, հույս՝ առանց այդ երկուսի։ Միշտ էլ սիրո քաղաքակրթությունը աղետաբեր է մարդկության համար։ Սիրո քաղաքակրթությունը բերում է ոչ միայն հոգեկան, այլև մարմնական ցավեր՝ առեղծված, բռնություն, կարիք ու կոտորած, տանջանք ու սով։ Անքն կյանքը լցվում է քաղմատեսակ ախտերով, որի դեմ զայրանում է ոչ միայն մարդասեր մարդը, այլև ինքը՝ Աստված, որը մարդասեր բերանով ազդարարում է՝ «Յոսից զգլուխ չիք առողջություն. վասն այնորիկ երկիր ձեր անբարիք, քաղաքք ձեր՝ հրձիգք. գաշխարհին ձեր առաջի ձեր օտարք կերիցեն...»²⁰։ Ին թեպետ ս. գիրքը սպառնում է սիրագործի ազգերին, թե նրանց համար «չկա փրկություն», քայքայ մեր առեղծվածը լցված է հույսով և լավատեսությամբ։ Նա համոզված է, որ սիրո և խաղաղության քաղաքակրթության պատճառով առաջացած ցավերը անբուժելի չեն, ուստի քաջալերելով հուսադրում է մարդկանց. «Սակայն մի՛ վհատիք, քաջս լերուք... քուռն հարեք նորոգել զքնակություն Աստուծոյ ձերոյ»²¹։ «Նորոգել» անելով Լամբրոնացի հակնարկում է տարբեր ազգերի եկեղեցիների քարեմորոգում՝ անշահախնդիր, առանց քաղաքական ակնկալությունների միություն՝ հավասար եղբայրական հիմունքներով։ Ա. գրքի հուշած թըշկվող ախտերը, ըստ Լամբրոնացու, մի ուրիշ դեղ էլ ունեն, որը գտնվում է հենց իրենց՝ ազգերի ձեռքում։ Եթե ամեն մի ժողովուրդ իր գիտակցության միջից արմատախիլ անի շատ հնից եկած այլապաշար հին ավանդություններն ու գրավոր հասած գաղափարները, այն ժամանակ մարդկանց հոգիները ամբողջապես կբուժվեն առեղծվածի ախտից։

«Մի՛ և մի՛ ոք պահեսցե կենդանի գնախաճուխ նախնեացն ի մեզ սերմանեալ։ Մի՛ ոք առնեալ զգիրս նոցա թշնամութեամբ նշարտութեամբ վարկցի ջատագով, որ ոչ է նըմարտութիւն, այլ հակառակմարտն է. զյաղտողն մայն ոք որ հակառակմարտն է. զյաղտողն փնել՝ որքան կարե ախորժեք»²²։ Այսպիսով, ամեն մի ազգ, ամեն մի մայրասեր մարդ, պետք է պայքարի հին դարերից ժառանգություն մնացած թշնամական գաղափարների դեմ, որպեսզի ընդմիջու մեկնի ազգամիջյան թշնամությունը և իշխե ընդհանուր սերը։ Մարդկանց հուսադրելու, գոտեպնդելու համար Լամբրոնացին օգտագործում է նաև Հից կտակարանը։ Իրեն հատուկ ճարտասանական կենդանի խոսքով նա հրապարակ է հրավիրում հուսո մեծ պատգամախոս Զաքարիա Մարգարեին և դիմելով նրան՝ ասում է. «Խօսեալ Զաքարիա, ուտ դարձելոցս վհատեալ սրտիք՝ յոյս»։ Այդ ժամանակ Զաքարիան ասում է. «Այսպէս ասէ Տէր ամենակալ, եթէ տկարանայցէ ինչ առաջի մնացորդաց ժողովրդեանդ այդորիկ, յաւորս յայսմիկ, մի՛թէ և աջ իմ տկարանայցէ... Ահա ահիկ ես, փրկեմ զժողովուրդ իմ յերկրէ արեւելից, և յերկրէ արեւմտից։ Եւ այդ, զօրացիր դու, Զորաբարել... և զօրացի ամենայն ժողովուրդ երկրիդ»²³։ Մարգարեի քննադատական խոսքերից անմիջապես հետո, Լամբրոնացին իր հորդորներով մարդկանց մղում է դեպի եռանդուն գործունեություն և նպատակի իրագործում։ Չկա ոչ մի վատ վիճակ, որ իր ելքը չունենա, սակայն պետք է այդ ելքը համառորեն և անպայման գործնել։ «Այնչափ էր փակեալ դուռն, մինչ ոչ քաղխեաք, յորժամ սկսաք ի քաղխելս՝ և մտանելն է համարձակելի»²⁴։ Ավելի լայնացնելով իր հուսադրող և դեպի գործ մղող խոսքի սահմանները, նա դիմում է աշխարհի բոլոր ազգերի գլխավորներին. «Լուարուք և դուք նահապետք ազգաց մերոց ի ծագաց երկրէ... Առցուք թէ ախորժեք, նախ զօրենս Աստուծոյ ի ձեռս մեր՝ և ընթերցցուք. վայելուչ է առ ի մմանէ խղատով զաստուածային գործոյս քուռն հարկանել... Մաշեցաք զամենայն բարձրութիւն մոլորութեան մտաց ի վերայ գիտութեան օրինացն նորա. և քաղցեալ տեսանեմք զձեզ կենացն մանանայի։ Առցուք զօրենս նորա, ընթերցցուք և նովա հանդերձ ի շինուած հաւատոյ տաճս քուռն հարցուք»²⁵։ Լամբրոնացու առած «հավատո տունը»՝ եկեղեցին, համազգային սիրո օջախ լինելով հանդերձ, միությունը քարոզելու հետ

²⁰ Աճդ, էջ 44:

²¹ Աճդ, էջ 8:

²² Աճդ, էջ 74:

²³ Աճդ, էջ 80—82:

²⁴ Աճդ, էջ 86:

²⁵ Աճդ, էջ 70:

մեկտեղ, քնալ չի կորցնելու իր ազգային նկարագիրը. նա ոչ հակադրվում է և ոչ էլ ուրիշ եկեղեցիների մեջ յուծվում: Այդպես է նաև այդ եկեղեցուց պատկանող ազգի հոգեվիճակը: Հոգեկան շնորհները և նրանց ներգործությունը, ամեն մի ազգի մեջ, լինի նա քրիստոնյա, թե հեթանոս, յուրահատուկ ձևով է դրսևորվում ու զարգանում: Ինչպես տվյալ ազգին պատկանող բոլոր մարդիկ իրենց յուրահատուկ հոգեկան և հուզական կյանքի առանձնահատկություններով հանդերձ՝ ներկայացնում են այդ ազգը, նրա հոգեբանությունն ու նկարագիրը, այդպես էլ աշխարհի տարբեր ազգերը, իրենց առանձնահատուկ հոգեկան կյանքով ներկայացնում են համայն մարդկության ամբողջությունը: Ու թեև անհատների ու ազգերի մեջ առկա են մտավոր և հոգեկան կյանքի վերոհիշյալ առանձնահատկությունները, սակայն դրանք ամենևին չեն խանգարում, որ աշխարհի տարբեր ազգերի միջև տևական լինի հոգեկան հաղորդակցությունը, բարեկամությունը, մանավանդ սերը:

Սիրո բացակայության դեպքում ազգերի մեջ երևան եկող բացասական երևույթների վերաբերման, սրանց հետ առնչվող՝ Լամբրոնացու առաջադիմական, լավատեսության, հորդորների հետ համառոտակի ծանոթացալուց հետո, շարունակենք մեր խոսքը Ատենաբանության բուն նյութի՝ համազգային սիրո բնույթի և նշանակության մասին: Վերելում ասվեց, որ Լամբրոնացին զայուցանք քրիստոնեական կրոնի քարոզած սերը: Այդ սիրո բնութագիրը Ատենաբանության մեջ այսպես է դրսևորված: Սերը բոլոր բարիքների աղբյուրն է. նա չի գրգռում դեպի բարկություն և ոչ մի կապ չունի չարության ու նախանձի հետ. նա չի հետապնդում միայն անձնականը, սերը խաղաղության մարդն է. նա ծնվում է մարդու հոգու հետ, որպես նրա անբաժան մի մասը, որը մի գործը, անխզելի կապ է աշխարհի մարդկանց միջև²⁶:

Բայց արդյո՞ք հիմա այդպես է ընկալվում ու պատկերացվում մարդու հոգու այդ գործը պարզեք և երկնային շնորհը, — հարցնում է Լամբրոնացին և ցավելով տալիս է հետևյալ ճացասական պատասխանը. «Է՛ս ահա զի մեր նախանձի. ատելությամբ օրինօք վարժալքս նախանձեցաք. սերն ոչ գրգռի, մեք չօրհանապազ երկնեցաք և երկնիմք առ իմեանս զչարություն. սեր ոչ խնդրէ զիւրեմ, սկ մեք... անիրաւութեամբ զընկենումք իրաւունս իրերաց»²⁷: Լամբրոնացու հիմնական նպատակն է՝ բազմակողմանորեն

շոշափելով սերը, վեր հանել այն՝ իր էության ու նշանակությամբ, ցույց տալ նրա քացառիկ բարերար դերը կյանքում և միաժամանակ խարազանելով մաքրագործել այդ նվիրական զգացմունքի քնազավառ ժամանակի ընթացքում ներթափանցած աղավաղումները: Ամեն մի մարդու հոգեկան զարդը սերն է. իսկ ամեն մի մարդ էլ իր ազգի զարդն է: Բոլոր մարդիկ իրենց մաքուր հոգով ու սիրով պետք է զարդարեն հասարակաց հավատի սեղանը. «Քանզի պիտոյ է ամենայն ի զարդ խորանին հասարակաց թէ խում (վայրենի), թէ դուծ (քարբարոս), թէ սկիւրացի և ամենայն ի Քրիստոս, և յամենայն Քրիստոս լարմարէր»²⁸: Այստեղ էլ ատենաբանը օգտագործում է Աստվածաշնչից բերված համապատասխան օրինակները, թե ինչպես Տապանակ ուխտի կառուցման ժամանակ բոլոր խորայնագիները, ամեն մեկն իր ուժերի և հնարավորությունների չափով, մասնակցել է Տապանակի կառուցման գործին: Դրանցից մեկը խորանի կառուցման համար պղինձ է տալիս, մյուսը՝ այծի մազ, երրորդը՝ փայտ, չորրորդը՝ մի ուրիշ շինանյութ կամ զարդ, և այդպես բոլորը: Թեպետ շատ դարեր են անցել հին Խորայնի ժամանակներից, տրտնջում է ատենաբանը, թեև մարդիկ առաջադիմել և յուսավորվել են, սակայն, փոխանակ այս ամենի հետ համահավասար ընդհանուր սերը զարգանալու և տալուսովելու, փոխանակ ազգերը հետևելու Փրկչի և առաքյալների քարոզած մարդասիրական գաղափարներին, ղեկահակառակ, խտտորկեցին և գնացին ատելության ճանապարհով: Աշխարհի ազգերը մոռանում են, — ասում է Լամբրոնացին, — որ Քրիստոսը դեն չպրտեց մի ազգի՝ մյուսի վրա քաշած սուրը, շուտ սովեց բռնակալների ձեռքով լցված ախտածետ քաժակը. տապալեց կռապաշտների կողմից ժողովուրդները պարանոցին դրված երկաթյա յուծը և այդ բոլորի փոխարեն մարդկությանը շնորհեց յուսավոր հավատ, ապրելու հույս, համամարդկային սեր, բարիք և խաղաղություն: Այստեղից էլ Լամբրոնացին եզրափակում է, որ աշխարհի բոլոր մարդիկ միևնույն մոր՝ սիրո և խաղաղության զավակներն են: Սակայն պատմական, աշխարհագրական գործոնները մի կողմից, ժողովուրդների միջև ատելություն սերմանող, բանասարկու մարդկանց գործերը մյուս կողմից, ազգերը իրարից բաժանել և խորթացրել են: Միանգամայն հնարավոր է, որ ժամանակով ու տալանությամբ իրարից անջատված տարբեր ազգերի բարքերը, կենցաղը, հավատն ու սովորությունները մեկը մյուսից տարբեր

²⁶ Աճ, էջ 50—52:

²⁷ Աճ, էջ 52:

²⁸ Աճ, էջ 18:

և անգամ հակադիր լինեն, սակայն այդ տարբերությունները երբեք հիմք չեն տալիս, որ ազգերն իրար ատեն և թշնամանան: Երկու հարազատ եղբայրները նույնիսկ մարմնով, հոգով, գույնով, ներքինով իրար նման չեն լինում, հետևաբար հարկ չկա խոսելու ընտանիքների, ցեղերի և ազգերի տարբերությունների մասին: Այս կապակցությամբ Լամբրոնացին դատում է հետևյալ կերպ: Չհասկանալով այդ արտաքին տարբերությունների և ներքին հոգեկան կապերի էությունն ու նշանակությունը, հենվելով միայն տարբերությունների վրա, միանգամայն հնարավոր է, որ թե քրիստոնյա և թե ոչ քրիստոնյա ազգերին պատկանող մարդկանցից ոմանք սխալվեն, մոլորվեն կամ գայթակղվեն ու կատարեն ոչ մարդահամ և ոչ էլ աստվածահամ գործեր: Այդպիսիներից փոխանակ դատապարտելու կամ հայհոյելու, պետք է ձեռք մեկնել, աստարել հոգով և ներողամտաբար ցույց տալ ուղիղ ճանապարհը: Ազգերի մեջ բարեկամական կապերը խզվելու հետևանքով նրանցից ամեն մեկն սկսում է մեծամտամայ՝ գերազանհատելով իրեն, թերազնահատելով ուրիշներին: Մեկն իրեն համարում է ազնիվ, լուսավոր, ուղղահավատ, իսկ մյուսին՝ վայրենի, քիտ, խավարամիտ և չարափառ, թյուրահավատ: Եթե այդպես լինի՝ հայը փառք կտա Աստծուն, որ հույն կամ հռոմայեցի չի ծնվել, սրանք էլ իրենց հերթին ուրախ կլինեն, որ ասորի, եգիպտացի կամ հայ չեն ծնվել: Հույներն ասում են, որ հայը պիղծ է, նրա հետ հաղորդակցություն ունենալը ոչ միայն անթույլատրելի, այլև մեղք է: Նույնն էլ ասում են հայերը հույների և լատիներին, ասորիները՝ եթովպացիներին կամ եգիպտացիների մասին: Իսկ «պիղծ» ասելով այստեղ նկատի են առնվում ոչ թե տվյալ ազգի գործերը, կենցաղը, բարքերը, այլ դավանանքը և ավանդական ծեսերը: Այս ազգերից մեկը, շարունակում է տրամաբանել Լամբրոնացին, ընդունում է Քրիստոսի մի, իսկ մյուսը՝ երկու քնության սկզբունքը, մեկը Քրիստոսի ծնունդը տոնում է մի օր, իսկ մյուսը՝ մի ուրիշ օր: Այսքանն արդեն բավական է, որ իրար բզկտեն: Այդ նույն մարդիկ, գրեթե ամեն օր, իրար տեսնում են շուկաներում, փողոցներում, խանութներում, առևտուր են առնում, իրար տուն գնում, նույնիսկ միասին ճաշում են, քայց հենց որ բանը հասնում է դավանանքների և մանավանդ ծեսերին, նրանք արդեն մեկը մյուսին հայհոյում են, իրար եկեղեցի չեն գնում, միասին չեն հաղորդվում, միևնույն տեղում իրար հետ չեն աղոթում և այլն: Մի՞թե այս բոլորը տարօրինակ և ծիծաղելի չէ, զարմանքով հարցնում է Լամբրոնացին: Պետք է հարգել ուրի-

շի սովորությունները, հավատն ու ազգը: Միայն յուրայինին, իր ազգին սիրելը տակալին կատարյալ սեր չէ: այդպես կարող էին սիրել և՛ վայրենիները, և՛ հեթանոսները: Իսկ ինչո՞ւ մենք առաջին հերթին պիտի տարբերվենք վայրենիներից ու հեթանոսներից.—սիրով, բարեպաշտությամբ, կպատասխանե ամեն մի կատարյալ քրիստոնյա: Ո՞ւր է մեղավոր, որ աշխարհի վրա տարբեր ազգեր ու լեզուներ կան: «Գովիս և ի քեզ զգովությամբ բանըղ սահմանես. և թերևս առատանաս յազգ քոյ և ի ցեղ և զայլ ամենայն տիեզերս բոնադատես բաժանել ի Քրիստոսէ և ծանր թոյի քեզ լուր նոցա բարեպաշտութեան... Եթէ սիրէք զսիրելիս ձեր, ո՞ր շնորհ է ձեր, զի մաքաւորք գնոյն ցործեն: Այլ դու մանատանդ և զսիրելին ատես, թէ ընդէ՞ր յայլմէ ազգէ և ոչ յիմմէ ես. Աստուծոյ մեղադրեա՛ որ բաժանեաց զեզուս»²⁹:

Ատենաբանության մեջ քննության ենթարկված վերոհիշյալ բոլոր խնդիրները կտրված չեն իրական կյանքից ու ժամանակից: Թեև այս հուզող խնդիրները քննելիս և վերլուծելիս Լամբրոնացին հաճախ է վկայակոչում ս. Գրքից պատշաճ օրինակներ՝ իր քարոզած մտքերը պատկերավոր և դյուրըմբռնելի դարձնելու նպատակով, սակայն նրա Ատենաբանության ողջ նյութի ատաղձը վերցված է ժամանակակից կյանքի՝ կրոնա-քարոյական, հասարակական և կենցաղային քննադատներից: Առաջին հայացքից թվում է, թե այս գործի մեջ ճարտասանի հուզառատ և պերճաբան խոսքը պտտվում է միայն կրոնական հարցերի և եկեղեցիների միության շուրջը, քայց, իհարկե, այդպես չէ: Այստեղ քննարկվում են ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ, ազգային, համազգային և հայրենասիրական բնույթի հարցեր՝ բոլորը իրար հետ սերտ շաղկապված, որպես մի ամբողջություն: Վեր հանելով ժամանակի կյանքի և կենցաղի հետ կապված կրոնական-ծիսական թերի կողմերը, հավատի ու սիրո թուլացումը, ինչպես իր ժամանակին Ներսես Շնորհալին, այնպես էլ այստեղ Լամբրոնացին, կոչ է անում հավատացյալ հասարակությանը՝ լսել նաև ժամանակի ձայնը և հարմարվել նրան: Իր առաջինի կյանքի օրինակով ամեն մի քրիստոնյա պետք է դառնա կենդանի տաճար, որտեղ քննակվում է Աստուծո հոգին: Ըստ Լամբրոնացու, եթե հին ժամանակներում Աստուծո տաճարի մեջ կառուցել են ոսկեղեն սեղան, այժմ այդ այլևս պետք չէ: Մեր ժամանակներում,—ասում է նա,—կյանքը բոլորովին ուրիշ մակարդակի վրա է գտնվում: Հիմա

²⁹ Աճդ, էջ 88:

մարդը ոսկու փոխարեն, Տիրոջ տաճարի սեղանը պիտի զարդարի հաստատ հավատով, խաղաղության ու սիրո զարդերով: Անհրաժեշտ է հավատը մաքրել նորամուտ, խորթ արարողություններից ու ծեսերից, որոնք ժամանակի ընթացքում, անցկատելիորեն, ներթափանցել են հավատի, քարքերի և եկեղեցու ժամակարգության մեջ: Ըստ Ատենաբանության հեղինակի՝ նոր ժամանակները իրենց հետ բերեցին նաև որոշ խավարամիտ մարդիկ, որոնք չըմբռնելով դարի ոգին, խոշոր ճեղք առաջացրին ազգերի հարաբերությունների մեջ և տվեցին դառնահամ պատույններ՝ բոլոր ազգերի համար: Այնուհետև այդ երկպառակության վերաբերյալ քերվում է հետևյալ պատկերավոր օրինակը. միևնույն հավատի համար կառուցվող շենքի քարերը քաղկացած են գաճազան ազգերից, որոնք անտաշ ու անկապ դարձան՝ միմյանց հետ շաղախվելու և հողավորվելու համար: Ահա այդ պատճառով էլ խախտվեց տան միասնությունը և անասանությունը: Միաժամանակ շատ զարմանում է ատենաբանը, թե ի՞նչ իմաստ ունի՝ ունենալ տաճար և սրբություն սեղան, երբ այնտեղ քացակալում են սերն ու միությունը: Ինչպես՝ կարելի է այդ տաճարում երգել հոգեվոր երգեր, կարդալ քարոզներ, մրմնջալ աղոթքներ, երբ այդ բաները չեն բխում սիրո և խաղաղության վճիռ աղբյուրներից: Եթե մեր տաճարների երգերի մեջ չհնչեն մարդասիրության և անկեղծության լարերը, այն ժամանակ կպառակտվի ոչ միայն եկեղեցիների, այլև տիեզերքի ներդաշնակ միությունը: Հիմա արդեն հասել է այն ժամանակը, — ասում է մեր նոր սիրո մարգարեն, — որ բոլոր ազգերի հավատի հիմնաքարը պետք է լինի մեկ, ժայռի պես անասան մի վեմ, և դրա վրա պիտի խոյանա Քրիստոսի հրաշակներ տունը՝ աշխարհի և ազգերի տաճարը: Ժամանակի ոգու և ազգերի գործնական շահերի տեսանկյունից քննադատելով ծիսական մի շարք քարացած, անիմաստ ձևեր, դրանց արմատները անցյալի մեջ ցույց տալուց հետո, Լամբրոնացին հուզված հարցընում է. «Եւ զի՞» ևս յայտնեցից զբանս՝ բոլոր հարեալ զանաչառութեան զաւազանէ, ո՞չ տեսանէք զիրաքանչիւր ազգի առաջնորդս և դատաւորս, զյուսն և կանոնս հաստատեալ՝ ոչ խաղաղութեան, այլ թշնամութեան. և օրէնք զի՞նչ քարեացն, որ առ միմեանս ներհակ և միոյ հասարակաց ճշմարիտ հաւատոյ. ընդիմաբանս»⁴⁰: Այս կանոնադիր և օրենսդիր մարդիկ, — եզրակացնում է նա, — փակում են խաղաղության դռները, իրենք չեն կարող այդ դռներից ներս մտնել, իսկ

ուրիշներից էլ արգելում են ձևական կանոններով:

Ատենաբանության մեջ, ժամանակի հետ կապված հուզող հարցերի կողքին, միաժամանակ տեղ են գտել նաև աշխարհիկ բնույթի խնդիրներ, որոնց մի մասը աղերսվում և մի մասն էլ անջատ են կրոնական, եկեղեցական հարցերից: Այսպես՝ Լամբրոնացու քարոզած սերը, միությունն ու խաղաղությունը մեծ մասամբ ոչ թե խարսխված են հանդերձալ, այլ իրական, առօրյա կյանքի պահանջների վրա: Այդ միությունն ու խաղաղությունը ինչքան որ անհրաժեշտ են հավատի ու եկեղեցու, նույնքան էլ պետք են մարդկային խաղաղ ու քաղաք կյանքի համար: Այստեղ նույնպես Լամբրոնացու պայծառ հայացքը, մտքերն ու նկրտումներն ավելի շատ նայում են դեպի երկիրն ու աշխարհային կյանքը: Լամբրոնացու քարոզած սիրո և խաղաղության գաղափարները մեծ մասամբ իրենց սնունդը ստանում են երկրից, մարդկային կյանքից ու կարիքներից: Սակայն ամբողջապես վերցրած՝ սիրո հասկացությունը Լամբրոնացու մոտ դրսևորվել է՝ երկու, գրեթե հավասար կողմերով՝ աստվածային և մարդկային. այլ կերպ ասած՝ հոգեկան և մարմնական: Այս գործի մեջ սուր Աստված և առ մարդը տաճած սերը դրված է հավասար մակարդակի վրա: Հանդերձալ կյանքի՝ դրախտի կամ դժոխքի մասին Ատենաբանության մեջ շատ քիչ բան կա գրված: Նա մի կողմից իր յուսավոր, առաջադիմական մտքերով վեր է խոյանում ժամանակի սահմանափակ մտայնության մակարդակից, շոշափում համամարդկային, համաշխարհային նշանակություն ունեցող խնդիրներ, իսկ մյուս կողմից առանձնանալով՝ Սաղորու և Սկևրա մենաստանները, իր իղեպն է դարձնում Գրիգոր Նարեկացուն, որին աշխատում էր մտնվել բարեպաշտությամբ, պահեցողությամբ և ս. Գրքի լուծմունքների, մեկնաբանությունների աշխատանքներով: Լամբրոնացու մի աչքը նայում է երկինք՝ ս. Հոգու շնորհները բաշխող Հիսուսին, իսկ մյուսը՝ իր ազգին ու հայրենիքին և մյուս ազգերին ու աշխարհին: Հավատքն ու սերը որքան պետք են հոգու, նույնքան էլ մարմնի, իրական կյանքի և ժողովուրդների բարեկեցության համար, ահա այս և Լամբրոնացու աշխարհայացքը, նրա հրապարակախոսության ոգին: Մարդը պետք է օգնի մարդուն, ընկերը պետք է ձեռք մեկնի կարիքի մեջ եղած ընկերոջը, վերցնի նրա բեռը, կարեկցի նրան: Ազգերը պետք է սիրեն իրար և օգնեն: Աշխարհի կյանքը պետք է հիմնվի փոխադարձ սիրո և բարեկամության վրա: Այս բոլորի մեջ ուժեղ կերպով շեշտը դրված է աշխարհիկ կյանքի վրա: Ամբողջ Ատենա-

⁴⁰ Անդ, էջ 86:

բանության խոսքի նյութը աշխարհն ու մարդը է:

Շնորհալի իր «Ընդհանրական թղթում» կարգազանց, կեղծ ու ընչաքալց հոգևորականներին, անգութ, բռնակալ իշխաններին սանձահարելու համար նրանց սպառնում էր հանդերձալ կյանքով, անել դատաստանով և դժոխքով: Լամբրոնացու մոտ մարդկանց և ազգերին քննադատելու եղանակը այդքան կրոնական և սպառնական չէ: Նա աշխատում է ազդել մարդկանց հոգու և սրտերի վրա՝ արթնացնելով նրանց մեջ խիղճ, ճշմարտասիրություն, ուղղամտություն և մարմարապարկություն, նույնամտություն և մարդկային դարձնել մարդը, մարդը՝ ինչպես հոգով, նույնպես էլ մարմնով: Սեր, քարեկամություն և խաղաղություն քարոզող մեր մարդասեր հրապարակախոսի այս գործում արտահայտվել են նաև հայրենասիրական տրամադրությունները:

Ինչպես տեսանք, սկսած 12-րդ դարի վերջին քառորդից, այդպես և հետագա դարերում, եղան հոգևորականներ, որոնք այս համարձակ, լուսամիտ մարդուն ամբաստանեցին այլասիրության, նորամտության մեջ, Այսքան մեղադրանքներ մի մարդու վրա քարդելուց հետո, տարօրինակ կլիներ խոսել նրա հայրենասիրության մասին: Եթե երբևէ որևէ ջերմ խոսք է ասվել Լամբրոնացու մասին, ապա այդ եղել է միայն այն պատճառով, որ նրան համարել են միայն եկեղեցական պերճարան և ուրիշ ոչինչ: Սուկայն այդ քնորոշումը միակողմանի է: Լամբրոնացին որքան մեծ է որպես եկեղեցական, կրոնական գործիչ, նույնքան էլ մեծ է նա որպես հայ մեծատաղանդ պերճախոս, մեծ մտածող, մարդասիրական, առաջադիմական գաղափարների քարոզիչ և միաժամանակ խոշոր հայրենասեր: Նա երբեք չի նահանջել հայ ազգային եկեղեցու սկզբունքների դիրքերից, ոչ միայն չի թերազնաբանել ազգային արժեքները, կամ եղել օտարաբանական, այլ, ինչպես իր մյուս թագմաթիվ գործերում, այդպես էլ այստեղ դրսևորվել է որպես հայրենասեր հայ քարոզիչ և որպես ազգային մատենագիր:

Ատենաբանության սկզբներում ս. Գրքում ճշված Տապանակ Ուխտիի և նախնայաց լավագույն գաղափարների և ավանդույթների մասին խոսելիս նա այն կարծիքն է հայտնում, որ աստվածադիր օրենքներից հավասար արժեքալի ու նվիրական են նաև մեր հայրերի ավանդներն ու իղձերը: Որչափ մարդը սրբությանը ու անվաճառելի է վերաբերվում ս. Գրքում եղած աստվածաշունչ համարվող օրենքներին, նույնչափ էլ նախանձախոսի որպես լիցի մեր հայրերի ու հայրենիքի դրած օրենքների և կարգերի

նկատմամբ. «զիդձս երանութեան հարցն մերոց մեք սեպհականեսցուք. զի մի՛ քարկասցի Աստուածն մեր դէտ ևս տեսնալ զմեզ զօրինաց նորին խախտեալ»⁴¹: Ինչպես տեսնում ենք, հայրենավանդ պատգամները և օրենքների ուժ ստացած ազգային ավանդություններն այնպիսի սրբություններ են, որոնք աստվածային օրենքներին հավասար նշանակություն ունեն, և երբ դրանք խնայությունվեն կամ խախտվեն, նույնիսկ Աստված ինքն էլ կբարկանա խախտողների վրա: Ջերմությամբ և գովասանքով է խոսում նաև հայ առաքելական եկեղեցու մասին, որ Հայաստան աշխարհը և նրա հավատքը նվիրական են մեզ համար: Պատմելով Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի երկրներում քնակվող քրիստոնյաների հավատի և կյանքի մասին, այդ կապակցությամբ երբ խոսքը հասնում է հայ եկեղեցուն և Հայաստանին, հետևյալ ջերմ ու գեղեցիկ տողերն է գրում. «Մամաւանդ տայր և Հայաստանեայցս աշխարհ, մինչդեռ ի միութեան եկեղեցոյ վէմն պնդեալ էր՝ պտուղ Աստուծոյ առատ և քազում. և երկիր մեր իբրև զաստեղս երկնից՝ քազմացան սեղանը Աստուծոյ, ըստ տեսեան սրբոյն Գրիգորի, հօտքն՝ լուսակիզն, արօտքն՝ դալարք, հովիւքն՝ արթունք, և սուղիքն քաղցրալուրք, զի ել հիւսիսի խստութեանն, և ճնչեաց հարաւ սիրոյ հոգւոյն Քրիստոսի»⁴²:

Մի ուրիշ հատվածում դառն կսկիծով է պատմում, թե ինչպես անմիաբանության պատճառով ընկավ Մեծ Հայքը, կորցրեց հայրենի երկիրն ու պետականությունը, ենթակա դարձավ վայրենաբարո իշխանություններին՝ կրելով անլուր կրոնական հալածանքներ, տուժելով և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես: «Արդ քանզի մեղաք օրինաց սիրոյն և յանցեաք ընդ խաղաղութեանն պատուէր և ոչ զղջացաք՝ յաղթեցաւ ողորմութիւնն արդարութեանն և՛ երարձ ի խոսվելոցս հոգով իրաւունքն՝ և զմարմնոց խաղաղութիւն... Այլ զՀայաստանեայցս դիպաւանք, յետ այսորիկ, ի ձերդ ապաստան առնեմք քննութիւն, թէ ուր պարտ էր մեր զայս հանդէս գումարել, և յորում վայրի վտարեցաք՝ միայն ածել զմտաւ»⁴³:

Երկու բնություն դավանող հույների տեսակետները աստվածաբանական խոր վերլուծման ենթարկելուց հետո, վեր է հանում նրանց միակողմանի, չհիմնավորված հայացքները, վերջիններիս հակադրելով հայականավոր հոգևոր հայրերի լայնահայացք և մարդասիրական վերաբերմունքը՝ դեպի

⁴¹ Աճ, էջ 8:

⁴² Աճ, էջ 40:

⁴³ Աճ, էջ 60:

ուրիշ ազգերն ու նրանց եկեղեցիները: Սակայն ատենաբանը տրտմելով է, որ հայերի այսքան անաչառ և բարեկամական մոտեցումը հասկանալի չէ, թե ինչու չի գնահատվում որոշ ազգերի հոգևորականների կողմից, այլ ընդհակառակը՝ խախտվում են անցյալի սրբակրոն, բարեպաշտ հայրերի զորվածքների ոգին ու պատգամները: «Սակայն բարք մարդկան հակառակասեր է. զայնս՝ որ ճշմարտութեանն էր ջատագով և խաղաղութեանն՝ անգոսնեցին և զառ թշնամութիւն մարդիչ բանսն սիրեցին և գրեցին: Այա թե ոչ՝ ուր դիցուք զբանս Յովհաննու իմաստասիրին և հայրապետին, որ զայս առ մեզ վկայութեամբ հարցն սրբոց ստուգէ... Յորոց մի էր և իմն աստուածաշնորհ և յոգունց գեթականց հրեշտակն ի մարմնի, Գրիգոր Նարեկան: Ո՛ր և գորոյ աչք տեսնէ և բանիցն աշակերտեցէք և հիմանն արկելոյ շինիչք զսրբոյ հօրն մերոյ Ներսիսի՝ զայսմ հետևողութիւն: Սոքա ամենեքեանց զայս երկնէից զխորհուրդ և ծնան... և այլ բազում ընդ սօքօք, որ ուսումնասիրացն է յայտնի և աշխատելոցն առ ի բանից նոցին աշակերտութիւն, մեր հարք, և մերոյ տոհմիս նահապետք»⁴⁴: Այս ընդարձակ մեջբերումը ցույց է տալիս, որ Լամբրոնացիներն միշտ էլ ամուր կանգնած է եղել հայ եկեղեցու դիրքերում: Վերևում մենք տեսանք, որ նա հայրեկան օրենքներն աստվածային օրենքներին է հավասարեցնում: Զարգացնելով այս համեմատության գաղափարը, Լամբրոնացիներն անում է նոր մտահանգումներ: Եթե հայրեկիքը առանց ս. Գրքի աստվածադիր օրենքների կղաղմա բարբարոսների երկիր՝ ատանց հոգեկան կյանքի, ապա այդ օրենքներն ու հավատն էլ առանց հայրեկիքի երեք չի կարելի պատկերացնել, որովհետև դրանք կլինեն անհիմք, անհող և օդից կախված: Իսկ ինչպե՞ս պետք է ապահովել հայրեկիքի գոյությունը, ինչպե՞ս պետք է պահպանել այն: Ահա այսպես՝ եթե տարբեր ազգերի ու կրոնների միջև սեր և միություն չի՝ աշխարհում կթագավորեն խաղաղությունը, որը կապահովի բոլոր ազգերի հայրեկիքների գոյությունն ու անվտանգությունը: Հայրեկիքի խաղաղությունից է կախված տվյալ հողի վրա ապրող ժողովուրդների հոգեկան և մարմնական բարեկեցիկ կյանքը: Լամբրոնացիներն առհասարակ սեր և միություն է քարոզում բոլոր ազգերի համար, իսկ փոքր ազգերի համար այդ միությունը առավել անհրաժեշտ է՝ ապահով, անկախ ու բարձր ապրելու տեսակետից: Այդ կապերից ամենագլխավորը նա համարում է հավատն ու եկեղեցին: Եթե ազգերի մեջ և միշտ

իշխի սերն ու խաղաղությունը, կրոնական խտրությունները այլևս չեն կարող չարիքի աղբյուր լինել, ինչպես, դժբախտաբար, եղել է մինչև այժմ: Հայերն էլ, որպես մի փոքր և տկար ազգ, պետք է բարեկամական հարաբերություն ունենան որևէ մեծ և պետականորեն զորեղ ազգի հետ՝ հոգեկան, մարմնական և պետական կյանքը ամուր, անվտանգ դարձնելու նպատակով: «Ոչ է արտաքոյ բանիս և զայս առել. յեցոսցուք գորդունել եկեղեցի մեր ի զատագանն երկաթի. ստասցուք զօրաւիզն գերութեան մերոյ զնպատակըն աշխարհի: Տառապանքս՝ հաւատամք, զի մխիթարի ի շտեմարանացն արքունի և տարբերութիւնս ի նաւահանգիստն անմատոյց»⁴⁵: Ազգի բովանդակ զարգացման և երկրի դրությունը ապահովելու միջոցների մասին խոսելիս, Լամբրոնացիները շեշտը աշխարհիկ կյանքի վրա է դնում: Եվ քանի որ այդ ժամանակներում հիմնական առաջադիմական և համարձակ միտքը ոչ բոլորի կողմից կարող էր ճիշտ հասկացվել և ընդունվել, ուստի նա զգուշանում և բացատրում է, որ իրեն սխալ չհասկանա, թե այս կամ այն գործող ազգի հետ երկրի դրությունը ապահովելու համար բարեկամական կապ հաստատելը, փոխադարձ համաձայնությունը չի նշանակում, թե հոգեկան կյանքի բնագավառում զիջել՝ մարմնականինը ապահովելու համար: «Ոչ ասեմ փրկանս տալ մարմնոյ զհոգի, մի ոք զբայս այսու ծեքեսցէ. այլ առ ումանց տկարութիւն հայելով՝ Քրիստոսի՝ աշակերտս վարդապետին քանամ նմանել, որ զհոգւոց բժշկութիւն ընդ մարմնոյն խառնեաց և ճս երկոքումք վրդովելոցս՝ երկոցունցն խաղաղութեան հաւատան և քանի լինեմ աւետարանիչ»⁴⁶: Ահա թե ինչպիսի գաղափարներ և ինչպիսի մակարդակի վրա են քարոզվել Ատենաբանության մեջ:

Լամբրոնացու Ատենաբանությունը մեր միջնադարի պերճախոսության լավագույն նմուշներից է: Այստեղ հեղինակը իր մըտքերն ու զգացումները ունկնդրի կամ ընթերցողի մեջ ներարկելու և ազդելու նպատակով դիմում է ճարտասանական և խոսքի գեղարվեստական բազմազան միջոցներին ու ձևերին: Տեղին և մեծ չափերով նա գործածում է այլաբանություն, համեմատություն, հակադրություն, որով նրան հաջողվում է, երբ հարկն է, պատկերավոր օրինակներով ընթերցողի մեջ հարուցանել համակրանք, հակակրանք, համաձայնություն իր մտքերի հետ, հուզմունք և այլն: Նա որպես մեծատաղանդ ճարտասան իր գործի մեջ վարպետորեն է օգտագործել ճարտասանական

⁴⁵ Աճղ, էջ 148:⁴⁶ Աճղ, էջ 148—150:⁴⁴ Աճղ, էջ 84—86:

բազմաթիվ ձևեր՝ դիմում, հորդոր, հայր-
ցում, շրջադարձություն, բացադարձություն,
ձայնարկություն, կրկնություն և այլն: Նրա
խոսքը առանձնապես գեղեցիկ, ճկուն ու
գրավիչ է դառնում ոճի գունագեղությամբ,
բազմազանությամբ և պարզությամբ: Այս
կամ այն գաղափարը, դատողությունը կամ
քանավիճելու եղանակը, իր սկզբի վիճակից
խոսքի մեջ քանի գնում, զարգանում, դառ-
նում է գորավոր, գրավիչ և համոզող: Լամբ-
րոնացին գեղեցիկ արձակ խոսքի և ճարտա-
սանական ձևերի մեջ վարպետորեն հյուսում
է միասնություն, դրանցից հավասարապես և
առատորեն օգտվելով: Արտահայտության
հորդ, պայծառ, պարզ ու մեկին ոճը, պեր-
ճախական գեղեցիկ, գրավիչ և տեղ-տեղ
էլ լիրիզմով հագեցած խոսքը, պատմական
անցյալից և ժամանակակից կյանքից քաղ-
ված կենդանի օրինակները, այս ամենը նրա
Ատենաքանությունը դարձնում են գործող
և ազդու: Լամբրոնացու այս գործի մեջ գա-
ղափարական և գեղարվեստական կողմերը

դրսևորվել են ներդաշնակ և ցայտուն կեր-
պով:

Ատենաքանության ուսանելի գրական
ձևերն ու առաջադիմական մտքերն իրենց
նշանակությունն ու արժեքը չեն կորցրել նաև
մեր ժամանակներում: Անցյալ դարի կենե-
րին «Հիսթորիայ»-ի խմբագիր Ս. Նա-
զարյանցը, իր ամսագրի առաջին համար-
ներում տպագրելով Ատենաքանությունը և
Լևոնին գրած թուղթը, գրում է. «Երկտա-
սաներորդ դարու քոլոր ականավոր մարդե-
րի շարքում քարձր ի գլուխ փայլում է Լամբ-
րոնացին՝ թե իր ընդարձակ ուսումնականու-
թյամբ և թե իր խոսքի ազդու գոյությունը ու
կրակով... ճորա Ատենական խոսքը պատ-
կանում է առավել հռչակավոր ատենաքա-
նական ճառերին, որ երբեք ևս ասած են աշ-
խարհի վրա»⁴⁷:

⁴⁷ «Հիսթորիայ», 1858, էջ 81 (Ընդգծումը մերն
է—Գ. Հ.):





Վ Ա Հ Ր Ա Մ Փ Ա Փ Ա Ջ Յ Ա Ն
(1888—1968)

Հունիսի 5-ին, չորեքշաբթի օրը, ծանր հիվանդությունից հետո, Լենինգրադում վախճանվեց հայ բեմի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը՝ ՍՍՀՄ ժողովրդական դերասան, հասարակական գործիչ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Վահրամ Փափազյանը:

Ծանր, անփոխարինելի կորուստ կրեց սովետական թատերական արվեստը:

Վահրամ Փափազյանը ծնվել է Կոստանդնուպոլսում, 1888 թվականի հունվարի 6-ին: Սովորել է տեղի Եսայան վարժարանում և ապա՝ Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում: Դեռ վաղ հասակից նրա մոտ ի հայտ է գալիս սեր արվեստների նկատմամբ և հակում՝ դեպի թատրոնը: Ի լրումն դրա նա 1908—1911 թթ. ուսանում է Միլանի գեղարվեստների ակադեմիայում: 1912 թվականին, դերասանական արվեստը կատարելագործելու նպատակով, Միլանի ակադեմիան Փափազյանին գործուղում է Փարիզ:

1919 թվականին Փափազյանը տեղափոխվում է Անդրկովկաս, ուր ելույթներ է ունենում Թիֆլիսի և Բաքվի հայկական թատրոններում:

20-ական թվականներին Փափազյանը վերջնականապես հաստատվում է մայր հայրենիքում:

Այնուհետև նա փայլուն ելույթներ է ունենում Սովետական Միության քոլոր հայտնի բեմերում և լայն ժողովրդայնություն ու ճանաչում գտնում ամենուրեք: Նրա արվեստին երկրպագու հասարակայնությունը իր հիշողության մեջ դեռ թարմ է պահում սովետական բեմում նրա կերտած Դոն ժուանը, Սիրանո դե Բերժերակը, Կորրադոն, Համետը, Օթելլոն, Լիր Արքան, Ուրբենինը, Պրոտասովը, Մեք Գրեգորը և այլ կերպարներ:

Իր կյանքի վերջին տարիներին Վահրամ Փափազյանը ճանաչելի դարձավ նաև գեղարվեստական գրականության ասպարեզում: Նրա գրչի արգասիքը հանդիսացող



«Հետադարձ հայացք», «Արտիստի կյանքը», «Արտիստ պարտքը», «Աշխարհի բեմերում», «Իմ Օթելլոն» գրքերը արժանացան ընթերցասեր հասարակության խանդավառ ընդունելությանը:

Իր հայրենամյեր գործունեության համար սովետական կառավարությունը մեծատաղանդ արվեստագետին արժանացրել է քաղաքացիական:

Վահրամ Փափազյանի թաղումը կատարվեց հունիսի 10-ին: Նրա աճյունը ամփոփվեց քաղաքային պանթեոնում, Կոմիտասի անվան զբոսայգում, ողորդ հանգչում են հայ արվեստի ու մշակույթի ակադավոր ներկայացուցիչները:

Հավերժ փառք հայ բեմի շնորհաշատ վարպետի հիշատակին: